



ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

- **ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՏԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ**
Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
- **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՉ**
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏԸ
- **ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**
Հասկացությունը և տեսակները
- **ՓԱՏԱԲԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱ**
- **ՉԱՆԳԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՆԵՐԻ**
ԱՉԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՅԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ
Ուսումնասիրություն



2014

ՀՈՒՆՎԱՐ

ԵՐԿ		6	13	20	27
ԵՐՔ		7	14	21	28
ՉՐՔ	1	8	15	22	29
ՀՆԳ	2	9	16	23	30
ՈՒՐԲ	3	10	17	24	31
ՇԲԹ	4	11	18	25	
ԿԻՐ	5	12	19	26	

ՓԵՏՐՎԱՐ

	3	10	17	24
	4	11	18	25
	5	12	19	26
	6	13	20	27
	7	14	21	28
1	8	15	22	
2	9	16	23	

ՄԱՐՏ

	3	10	17	24	31
	4	11	18	25	
	5	12	19	26	
	6	13	20	27	
	7	14	21	28	
1	8	15	22	29	
2	9	16	23	30	

ԱՊՐԻԼ

ԵՐԿ		7	14	21	28
ԵՐՔ	1	8	15	22	29
ՉՐՔ	2	9	16	23	30
ՀՆԳ	3	10	17	24	
ՈՒՐԲ	4	11	18	25	
ՇԲԹ	5	12	19	26	
ԿԻՐ	6	13	20	27	

ՄԱՅԻՍ

	5	12	19	26
	6	13	20	27
	7	14	21	28
1	8	15	22	29
2	9	16	23	30
3	10	17	24	31
4	11	18	25	

ՀՈՒՆԻՍ

	2	9	16	23	30
	3	10	17	24	
	4	11	18	25	
	5	12	19	26	
	6	13	20	27	
	7	14	21	28	
1	8	15	22	29	

ՀՈՒԼԻՍ

ԵՐԿ		7	14	21	28
ԵՐՔ	1	8	15	22	29
ՉՐՔ	2	9	16	23	30
ՀՆԳ	3	10	17	24	31
ՈՒՐԲ	4	11	18	25	
ՇԲԹ	5	12	19	26	
ԿԻՐ	6	13	20	27	

ՕԳՈՍՏՈՍ

	4	11	18	25
	5	12	19	26
	6	13	20	27
	7	14	21	28
1	8	15	22	29
2	9	16	23	30
3	10	17	24	31

ՍԵՊՏԵՄԲԵՐ

	1	8	15	22	29
	2	9	16	23	30
	3	10	17	24	
	4	11	18	25	
	5	12	19	26	
	6	13	20	27	
	7	14	21	28	

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԵՐԿ		6	13	20	27
ԵՐՔ		7	14	21	28
ՉՐՔ	1	8	15	22	29
ՀՆԳ	2	9	16	23	30
ՈՒՐԲ	3	10	17	24	31
ՇԲԹ	4	11	18	25	
ԿԻՐ	5	12	19	26	

ՆՈՅԵՄԲԵՐ

	3	10	17	24
	4	11	18	25
	5	12	19	26
	6	13	20	27
	7	14	21	28
1	8	15	22	29
2	9	16	23	30

ԴԵԿՏԵՄԲԵՐ

	1	8	15	22	29
	2	9	16	23	30
	3	10	17	24	31
	4	11	18	25	
	5	12	19	26	
	6	13	20	27	
	7	14	21	28	

№80

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԷՄԻԼ ԲԱԲԱՅԱՆ - նախագահ
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ
ՎԱՅՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆ
ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.
375010, ք. Երևան, Հանրապետության փ., 85
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72
www.genproc.am

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝
25.11.2013 թ.
Ֆորմատ՝ 70 X 100 1/16
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2013 թ.

2013

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնարարությունների հրապարակման համար թույլատրելի գիտական պարբերականների ցանկում:

ՀՀ ՉԻՆԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ՀՀ ՉԻՆԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԸ

*Համաձայն ՀՀ գլխավոր դատախազի
2013թ. նոյեմբերի 4-ի թիվ 75 հրամանի,
ՀՀ գլխավոր դատախազությունը կազմված է հետևյալ
վարչություններից և բաժիններից՝*

1. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հատկապես կարևոր գործերով քննության վարչություն,
- Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,
- Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչություն,
- ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչություն,
- Պետական շահերի պաշտպանության վարչություն,
- Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,
- Կռուսպիսիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,
- Վերահսկողական-տեսչական վարչություն:

2. ԲԱԺԻՆՆԵՐ

- Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների գործերով բաժին,
- Իրավական ապահովման և եվրախնտեգրման բաժին,
- Միջազգային-իրավական կապերի բաժին:

ՀՀ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱԺԻՆՆԵՐԻՑ

- Քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժին,
- ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննչական բաժնում քննվող գործերի բաժին,
- Պետական շահերի պաշտպանության բաժին:

**ՀՀ գլխավոր դատախազի հրամանով
փոփոխություններ են կատարվել նաև Հայաստանի
Հանրապետության դատախազության աշխատակազմի
կենտրոնական մարմնի կառուցվածքում՝ ստեղծվել են նոր
կառուցվածքային ստորաբաժանումներ՝**

- Կազմակերպամեթոդական բաժին,
- Անձնակազմի կառավարման բաժին,
- Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժին:

ՀՀ ՆԱԽԱԳԱՏԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ



**ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ
ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արտավազդ Չեմրիկի

Ծնվել է 1965 թվականին Լեւոնական (ներկայում՝ Գյումրի) քաղաքում:

Ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը: Պարտադիր զինվորական ծառայություն է անցել ԽՍՀՄ զինված ուժերում: Դատախազության համակարգում է 1990 թվականից. շրջանային դատախազության քննիչ, Երևան քաղաքի դատախազության ավագ քննիչ, ՀՀ զինվորական դատախազի օգնական, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժնի պետ: 2012 թվականից Ա. Հարությունյանը ՀՀ զինվորական դատախազի տեղակալն էր:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է, արժանացել է պարգևների և խրախուսանքների:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

ՀՀ Նախագահի 2013թ. նոյեմբերի 6-ի հրամանագրով Արտավազդ Հարությունյանը նշանակվել է ՀՀ զինվորական դատախազ-ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ:

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՀՐԱՄԱՆՈՎ

- **Արթուր ԴՎԹՅԱՆԸ** նշանակվել է Երևան քաղաքի դատախազ, ազատվելով՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի պաշտոնից:
- **Վահագն ՄՈՒՐԱԴՅԱՆԸ** նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետ՝ ազատվելով Արմավիրի մարզի դատախազի պաշտոնից:
- **Արտակ Գագիկի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ** նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ՝ ազատվելով ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնից:

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՅՉԻ ՀՐԱՄԱՆՈՎ

- ԴՅ զլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի պարտականությունները դրվել են ԴՅ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի դատախազ **Վահե Ունսնեւան** վրա:
- ԴՅ զլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի պարտականությունները դրվել են ԴՅ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ **Հրայր ԱՅՎԱԶՅԱՆԻ** վրա:
- **Արտակ Արամայիսի ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ** նշանակվել է ԴՅ զլխավոր դատախազության վերահսկողական-տեսչական վարչության պետ՝ ազատվելով ԴՅ զլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական վարչության պետի պաշտոնից:
- Լուռու մարզի դատախազ է նշանակվել **Գրիգոր ԷԼԻՉԲԱՐՅԱՆԸ**՝ ազատվելով Լուռու կայազորի զինվորական դատախազի պաշտոնից:
- Շիրակի մարզի դատախազ է նշանակվել **Րաֆֆի ԱՍԼԱՆՅԱՆԸ**՝ ազատվելով ԴՅ զլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազի պաշտոնից:
- Կոտայքի մարզի դատախազ է նշանակվել **Վազգեն ՌՇՏՈՒՆԻՆ**, ով մինչ այդ զբաղեցնում էր Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնը:
- **Համբարձում ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆԸ** նշանակվել է Արարատի մարզի դատախազ՝ ազատվելով Սևանի կայազորի զինվորական դատախազի պաշտոնից:
- **Արսեն ՍԻՄՈՆՅԱՆԸ** նշանակվել է Արմավիրի մարզի դատախազ՝ ազատվելով Կոտայքի մարզի դատախազի տեղակալի պաշտոնից:
- **Արսեն ԱՐՄԵՆՅԱՆԸ** նշանակվել է Գեղարքունիքի մարզի դատախազ՝ ազատվելով Արարատի մարզի դատախազի տեղակալի պաշտոնից:
- **Արմեն ԱՖԱԿԻՅԱՆԸ** նշանակվել է Սյունիքի մարզի դատախազ՝ ազատվելով ԴՅ զլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազի պաշտոնից:
- Երևանի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ է նշանակվել **Արմեն ԶԻՉՈՅԱՆԸ**՝ ազատվելով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալի պաշտոնից:
- Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանի դատախազ է նշանակվել **Ռաֆայել ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**՝ ազատվելով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալի պաշտոնից:
- Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ է նշանակվել **Սասուն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**՝ ազատվելով Երևան քաղաքի դատախազի տեղակալի պաշտոնից:
- **Կարեն ԲԱՏԻԿՅԱՆԸ** նշանակվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ՝ ազատվելով Երևան քաղաքի դատախազի տեղակալի պաշտոնից:
- **Թևոս ՄԻՐՉԱԲԵԿՅԱՆԸ** նշանակվել է Սևանի կայազորի զինվորական դատախազ՝ ազատվելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազի պաշտոնից:
- ԴՅ դատախազության աշխատակազմի ղեկավար է նշանակվել **Համլետ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ**, ով մինչ այդ ԴՅ դատախազության աշխատակազմի ղեկավարի տեղակալն էր:
- ԴՅ զլխավոր դատախազի զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության հարցերով խորհրդական է նշանակվել **Քրիստինե ՄԵԼՈՆՅԱՆԸ**:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Թամարա ՀԱՔԱՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազի օգնական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Երկայիս վարչական պատասխանատվության օրենսդրության և իրավական ոչ համարժեք պատկերացումների անկատարության պարագայում դեռևս բավարար չափով լուծված չեն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցերը: Այդ անցանկալի իրավիճակին նպաստել է նաև այն, որ անկախության ավելի քան երկու տասնամյակների ընթացքում ձեռնարկված դատաիրավական բարեփոխումներն անհասկանալիորեն շրջանցում էին ոչ միայն իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտը, այլև վարչական պատասխանատվության ինստիտուտն ընդհանրապես: Բնորոշ է այն, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության էվոյուցիան ընթացել է մեկուսացված. մասնավորապես այդ ոլորտին վերաբերող բազմաթիվ օրենսդրական ակտեր որդեգրել են միանգամայն նոր դրույթներ, որոնք, թեպետ վերաբերում են վարչական պատասխանատվության ինստիտուտին, սակայն որևէ կերպ չեն արտացոլել այդ ինստիտուտի օրենսդրական դրույթները և ամրագրել են միմյանցից խիստ տարբերվող մոտեցումներ: Համակողմանի հետազոտությունը բերում է այն համոզման, որ իրավասու կառույցները, ձեռնամուխ լինելով բարդ ու հիփոպի դժվարին խնդիրների լուծմանը, հաճախ պատշաճ ուշադրություն չեն դարձնում դրանց լուծման համար խիստ կարևոր հարցադրումների համալիր քննարկման ու ամբողջական ու գործնական արժեք ունեցող հայեցակարգ մշակելու ու բացառապես դրա շրջանակներում գործելու անհրաժեշտության վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը դարձել է ժամանակի հրամայական և դա պայմանավորված է մի շարք ծանրակշիռ փաստարկներով, որոնք համառոտ ներկայացմամբ հանգում են հետևյալին.

● Վարչական պատասխանատվության ինստիտուտի ծագումն այնքան էլ արհեստական և ապրիորի չէր: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված էր բոլշևիկյան հեղափոխությամբ ձեռք բերված իշխանությունը պահելու նպատակով: Վարչական պատասխանատվությունն ի սկզբանե միտված էր վարչակառավարչական կարգն անխոցելի դարձնելուն: Ընդ որում, փորձ արվեց նախ

այն պաշտպանել անգամ ամենաչնչին իրավախախտումներից և, ապա, դրանց քննությունը վերապահել բացառապես վարչական մարմիններին: Ուստի, պատահական չէ, որ անձի իրավունքները չդարձան վարչական պատասխանատվության օբյեկտ: Իրավական ինստիտուտներից շատերին է բնորոշ այն, որ դրանք ի սկզբանե ձևավորվում են այլ խնդիրների լուծման նպատակով, սակայն ժամանակի ընթացքում սոցիալական պահանջների վերանայման արդյունքում ձեռք են բերում բոլորովին այլ իմաստ և կոչում: Իսկ վարչական պատասխանատվության ինստիտուտը չի կարող միտված լինել սոսկ վարչակառավարչական համակարգի

պաշտպանությանը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ որպես **իրավական պաշտպանության հիմնական օբյեկտ չպետք է համարվի կառավարման կարգն** իր բոլոր ոլորտներով հանդերձ, օրինակ՝ հողային, պաշտպանության, ջրային և այսպես շարունակ, **այլ այն հասարակական հարաբերությունները, որոնք այսօր ամրագրված են Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով**: Մասնավորապես, մարդու իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունում պետք է որակվեն որպես գերակա իրավական արժեքներ, այսինքն՝ առաջնությունը պետք է տրվի մարդու իրավունքների և ազատությունների գերակայությանն այլ ոչ թե՝ կառավարման սահմանված կարգին, պետական կամ հասարակական կարգին: Յուրաքանչյուր նորմատիվ-իրավական ակտի նպատակն անվերապահորեն պետք է լինի մարդու իրավունքների երաշխավորվածությունն ու պաշտպանությունն ապահովելը: Այս չափանիշով հիշյալ ինստիտուտի վերահիմնատավորումը հնարավորություն կտա ձեռքագատվել վարչական պատասխանատվության խորհրդային պատկերացումներից և այն առավել համահունչ դարձնել միջազգային արդի չափանիշներին: Կարծում ենք, որ վարչական զանցանքներն այլ իրավախախտումներից տարբերվում են ոչ թե օբյեկտով, այլ իրենց հանրային վտանգավորության աստիճանով: Գործնականում, սակայն, այդ հիմնադրույթի իրավական կարգավորման հարցում գրեթե մշտապես ծագում են բարդություններ: Եվ դա է պատճառը նաև, որ եվրոպական երկրների մեծամասնությունում վարչական իրավախախտումների վերաբերյալ առանձին ակտում սահմանված են միայն ընդհանուր և վարութային դրույթներ՝ հատուկ մասի նորմերը թողնելով առանձին իրավական ակտերի կարգավորմանը, օրինակ՝ Գերմանիա, Ավստրիա, Չինաստան, Բուլղարիա և այլն:

Ընդ որում, հարկ է նկատել, որ այս կարևոր հայեցակարգային հիմնադրույթն իր իրավական լուծումը չի ստացել նաև վարչական իրավախախտումների վերա-

բերյալ նոր օրենսգրքի հայեցակարգում:

- Բացակայում է տրամաբանական ներքին կապը՝ քրեական և վարչական պատասխանատվությունների միջև: Դա պայմանավորված է թերևս նրանով, որ հաճախ միևնույն իրավախախտումը միաժամանակ սահմանած է ինչպես վարչական օրենսդրությամբ՝ որպես վարչական զանցանք, այնպես էլ քրեական օրենսդրությամբ՝ որպես հանցագործություն: Ի դեպ, քրեական օրենսգրքի սահմանած տուգանքի չափի համեմատ վարչական օրենսդրությամբ նախատեսված տուգանքի չափը որոշ արարքների համար առավել բարձր է: Այսպես, ԶԶ քրեական օրենսգրքի 315.1-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում քաղաքացիների կամ իրավաբանական անձանց¹ կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով շենքի, շինության կառուցումը կամ վերակառուցումը չդադարեցնելը և (կամ) անօրինական կառույցները չքանդելը, որոնք կատարվել են նույն արարքի համար կրկնակի վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Սույն արարքի համար նախատեսված է պատիժ՝ տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից՝ վեցհարյուրապատիկի չափով:

Իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ ԶԶ օրենսգրքի «Շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը» վերտառությամբ 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն զանցանքը կրկին կատարելու համար սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: Փաստորեն, իրավախախտը նույն վարչական իրավախախտումը կրկին կատարելու համար պատժվում է ավելի կրկնակի բարձր տուգանքի սահմանված չափով, քան այն դեպքում, երբ դրանից հետո

¹ Ալեհայտ է, որ սույն հոդվածում որպես սուբյեկտ պետք է սահմանվեին միայն ֆիզիկական անձինք, քանի որ իրավաբանական անձինք քրեական պատասխանատվության սուբյեկտ չեն հանդիսանում:

դեռ շարունակում է նույն արարքի կատարումը և տրամաբանական չէ, որ քրեական օրենսգրքի սահմանված տուգանքի չափի համեմատ վարչական օրենսդրությամբ նախատեսված վարչական տուգանքի չափն առավել բարձր է:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունմամբ, սկզբնական շրջանում, բացառվեց որոշ վարչական զանցանքներ կրկնակի կատարելը քրեական հանցագործություն համարելու գաղափարը, ինչն ընդունելի էր նախկին քրեական օրենսգրքով: Մինչդեռ, հետագայում հիշյալ մոտեցումը, այնուամենայնիվ, կիրառման մեջ դրվեց, ամտեսելով, սակայն միասնական իրավական չափանիշներով ղեկավարվելու անհրաժեշտությունը²: Հավելենք նաև, որ վարչական պատասխանատվության ինստիտուտների վերաբերյալ ամրագրված մոտեցումներն էապես տարբերվում են քրեական պատասխանատվության նույնասեռ ինստիտուտների առնչությամբ կիրառվող մոտեցումներից: Արդյունքում ստացվում է, որ միևնույն ինստիտուտի առնչությամբ կիրառման մեջ են դրվել միմյանցից սկզբունքորեն տարբերվող դիրքորոշումներ:

Ուստի պետք է սահմանել նաև տուգանքի առավելագույն չափը, որպեսզի անհարկի պատճառաբանությամբ, հիմքում դնելով արարքի հանրային վտանգավորությունը, չսահմանվեն տուգանքի այնպիսի չափեր, որոնք մի քանի անգամ կգերազանցեն նույնաբնույթ հանցագործությունների համար քրեական օրենսդրությամբ սահմանված տուգանքի չափերին:

● Վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենսդրությունում առկա են ոչ միայն միջազգային իրավական չափանիշներին ակնհայտ հակասող տարաբնույթ ինստիտուտներ, որոնք հարկ է լինում վերացնել նաև միջազգային իրավասու կառույցների միանգամայն իրավաչափ միջամտության արդյունքում (օրինակ՝ վարչական կալանքը, որն ուժը կորցրած ճանաչվեց): Ընդ որում, նաև ՀՀ Սահմանադրության հետ ակնհայտ հակասության մեջ գտնվող նորմեր, ինչպիսին է օրենսգրքով սահմանված վարչական ձերբակալման 10-օրյա ժամկետը, որը Սահմանադրական դատարանի կողմից 2012 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴՈ-1059 որոշ-

մամբ ճանաչվեց ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված դրույթներին հակասող:

● Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթում դրա բնականոն ընթացքն ապահովող և անձանց իրավունքներն երաշխավորող իրավական համարժեք ինստիտուտների բացակայություն, ինչպիսիք են՝ վարույթի կասեցումը, կարճումը, նորոգումը և այլն:

● Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրական ակտերը համակարգված չեն: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ այդ թերությունը հատկապես լայն տարածում ունի **իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերում**, որոնք, որպես կանոն, նվիրված են կառավարման այս կամ այն ոլորտում իրավահարաբերությունների կանոնակարգմանը և սուկ մասնակիորեն պարունակում են վարչական իրավախախտումների վարույթին նվիրված որոշ իրավական նորմեր: Ստացվում է, որ ներկայումս գործում են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի բազմաբնույթ արհեստական առանձնահատկություններ, որոնք որևէ կերպ պայմանավորված չեն կառավարման տվյալ ոլորտով: Նոր օրենսգիրքը պետք է իրենից ներկայացնի այդ ոլորտի բոլոր իրավահարաբերությունների կանոնակարգմանը նվիրված մեկ ամբողջական **կողմֆիկացված իրավական փաստաթուղթ**: Նշենք, որ հարկային և բանկային օրենսդրության բնագավառի իրավախախտումները և դրանց համար սահմանված տույժերը տարածայնությունների պարագայում չներառվեցին նախկին Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծում՝ որպես քաղաքական փոխհամաձայնության հետևանք: Անշուշտ նման մոտեցումը, կարծում ենք, չի կարող ներառվել վարչական պատասխանատվության օրենսդրության կողմֆիկացիայի հայեցակարգի մեջ և լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանզի պատասխանատվության վերոհիշյալ տեսակները վարչաիրավական բնույթի են, ինչի մասին բազմիցս նշել է նաև իր որոշումներում ՌԴ Սահմանադրական դատարանը³:

Հարկ է նկատել, սակայն, որ 2012 թվա-

² Տե՛ս օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315.1 հոդվածը:

³ Նման տարածայնություններ՝ կապված հարկային և բանկային ոլորտի իրավախախտումների հետ, առաջացել էին նաև ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծի շուրջ:

կանի 33 կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հայեցակարգում սահմանված է, որ ապագա օրենսգրքը պետք է հիմնվի այն հայեցակարգային սկզբունքի վրա, որ չկա վարչական պատասխանատվություն, եթե դա նախատեսված չէ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով:

● Հաշվի առնելով, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով ևս կիրառվում են հարկադրանքի միջոցներ, ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումներ, անհրաժեշտ է հստակեցնել դրանց հիմքերը և կիրառման օրինականության նկատմամբ հսկողության շրջանակներն ու պայմանները: Այս համատեքստում տեղին է քննարկման առարկա դարձնել նաև դատախազական հսկողության ինստիտուտը: Մասնավորապես, «Դատախազության մասին» 33 օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս նշելու, որ դատախազը հսկողություն է իրականացնում նաև Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով նախատեսված դեպքերում ազատությունից զրկելու նկատմամբ: Իսկ վարչական ձեռքարկումը, եթե դիտարկենք Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համատեքստում, և ավելին, այն պահպանվելու է նոր օրենսգրքի նախագծում, ապա անշուշտ, վերը նշված իրավակարգավորումը պարտադիր բնույթ ունի:

● Պետք է ապահովվի նաև զանցանքների հիմնավորված դասակարգումը և դրանց համար նախատեսված սանկցիաների ներդաշնակությունը, միևնույն հետևանքներ ունեցող զանցանքների համար վարչական տույժերի միատեսակ և համաչափ կիրառումը:

● Վարչական իրավախախտումների վերաբերյալ 33 օրենսգրքում դեռևս առկա են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «ԽՍՀՄ համակարգը», «սոցիալիստական սեփականությունը» և այլն: Հարկ է նկատել, որ առ այսօր անկախ այն հանգամանքից, որ պետք է մշակվի նոր օրենսգրքի նախագիծ, օրենսդիրը կարծես շրջանցել է նվազագույն օրենսդրական փոփոխությունների արդյունքում նշված հասկացությունները փոփոխելուն նվիրված օրենսդրական ակտի ընդունումը: Բնականաբար նման մոտեցումը չի կարող քննադատության չարժանանալ ոչ միայն գիտնականների, այլև իրավակիրառողների մոտ:

Վերոշարադրյալն ամենաընդհանուր գծերով փորձ է ներկայացնելու գործող օրենսդրության թերություններն ու անհրաժեշտ բարեփոխումների հիմնարար ուղղությունները: Այս համատեքստում որպես օրենսդրական բաց է նկատվում այն, որ գործող վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում իրավաբանական անձինք սահմանված չեն որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ:

Ամենաբացահայտ իրողություն է այն, որ օրենսդրական լուրջ բացերը և ակնհայտ հակասությունները խիստ բացասաբար են անդրադառնում ինչպես մարդու իրավունքների և ազատությունների և իրավաբանական անձանց օրինական շահերի պաշտպանության երաշխավորվածության, այնպես էլ նշված ոլորտում պետական կառավարման, ինչպես նաև վարչական զանցանքների վերաբերյալ գործերով արդարադատության իրականացման արդյունավետության վրա: Բնորոշ է, որ այս պարագայում իրավասու պաշտոնատար անձինք հաճախ ղեկավարվում են ոչ թե կոնկրետ իրավական դրույթներով, այլ՝ հայեցողական որոշումներով: Ստահագող է նաև այն, որ վարույթի համար սահմանված բազմաթիվ անհարկի առանձնահատկությունները գործնականում խիստ բարդացնում են գործառնությունների իրականացման բնականոն ընթացքը, անխուսափելի դարձնում անհարկի ֆինանսական ծախսեր և մարդկային ռեսուրսներ պահանջող յուրաքանչյուր ոլորտին համապատասխան մասնագիտական լրացուցիչ պատրաստվածություն անցնելու անհրաժեշտությունը և այլն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ մշակելու կոնկրետ քայլեր ձեռնարկելու սկիզբը, սակայն համընկավ դատաիրավական բարեփոխումների ավարտի հետ, երբ 33 վարչապետի 1998 թ. նոյեմբերի 16-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 635 որոշմամբ ստեղծվեց այդ օրենսդրության մշակման աշխատանքային խումբը: Հիշյալ աշխատանքային խումբը ձեռնարկեց որոշակի քայլեր վերը նշված նախագծի մշակման ուղղությամբ, սակայն այդպես էլ այս խմբի կողմից նախագիծ չմշակվեց: Հանձնաժողովի կազմն ամբողջովին փոխվեց, իսկ աշխատանքները հանձնվեցին Գերմանական միջազգային համագործակցության ընկերության երևանյան գրասենյակին («GTZ» միջազգային կազմակերպության հայաստանյան կառույցին), որը բավարարվեց սոսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին 33 օրենքի մշակմամբ, ինչն էլ, պարզապես, Գերմանայի որոշ օրենսդրական ակտերի թարգմանությունն էր՝ մասնակի տեղայնացմամբ: Վերջապես, 10 տարի անց 33 Նախա-

գահի՝ 2008 թ. հունվարի 23-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ ԵԿ-9-Ա կարգադրությամբ ստեղծվեց նոր աշխատանքային խումբ, որը պետք է հանձն առներ մշակելու վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ: Շուրջ երկու տարի տևեցին նոր օրենսգրքի մշակման աշխատանքները, որի առանցքային հարցադրումներից հանդիսացավ նախ այն, որ պետք է մշակվեր մեկ միասնական կողիֆիկացված ակտ՝ ներառելով նաև հարկային, մաքսային, բանկային ոլորտի իրավախախտումները և անշուշտ, իրավաբանական անձանց՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի ամրագրումը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը և դրան կից՝ թվով 52 այլ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական ակտերի նախագծերը ՀՀ կառավարությունը ներկայացվեց 2010 թ. հունվարին⁴: ՀՀ կառավարությունը, իր նիստում քննարկելով ներկայացված նախագիծը, այնուամենայնիվ, հարկային և բանկային ոլորտի իրավախախտումները և դրանց համար նշանակվող տույժերի տեսակները մեկ միասնական վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծում ներառելու շուրջ տարածայնությունների առկայության պայմաններում որոշում կայացրեց հետ վերադարձնելու նախագիծը՝ կրկին շահագրգիռ մարմինների հետ փոխադարձ համաձայնություն ձևավորելու նպատակով: Անշուշտ, ՀՀ արդարադատության նախարարության հետ ծավալած համատեղ քննարկումների արդյունքում՝ հարկային և բանկային ոլորտի իրավախախտումները հանվեցին նախագծից և արդյունքում մեկ միասնական կողիֆիկացված ակտ ունենալու հայեցակարգային հիմնարար դրույթներից մեկը, կարծես թե, անկատար մնաց: Այս համատեքստում տեղին է նշել, որ բարեփոխումների առավել խոցելի կողմերից մեկն այն է, որ ոլորտին առնչվող հարցադրումների վերաբերյալ զերատեսչական կողմնորոշումները չափազանց շատ են և խիստ իրարամերժ: 2010թ. սեպտեմբերին ՀՀ արդարադա-

տության նախարարությունը ՀՀ կառավարությունը ներկայացրեց լրամշակված նախագիծը, վերջինս նույն թվականի հոկտեմբերի 26-ին այն ուղարկեց Ազգային ժողով՝ 2011 թ. փետրվարի 4-ին Ազգային ժողովի պետական վարչական հանձնաժողովի նիստում ընդունվեց ի գիտություն, որ ՀՀ կառավարությունը շրջանառությունից հանում է նախագիծը՝ պայմանավորված ՀՀ արդարադատության նախարարությունում կադրային փոփոխություններով՝ կրկին այն լրամշակելու պատճառաբանությամբ: Ընդ որում, որևէ հիմնավոր պատճառաբանություն այդպես էլ չբերվեց և այդ խիստ հրատապ օրենսդրական ակտի ընդունումն անհարկի և տևական ժամանակով հետաձգվեց: Հարկ է նկատել, որ դեռևս 2009 թ. ապրիլի 21-ի ՀՀ Նախագահի ԵԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թթ. ռազմավարական գործողությունների ծրագրի ներածական մասում արդեն իսկ սահմանված էր, որ մշակման փուլում է գտնվում վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը: Սակայն, 2012 թ. հունիսի 30-ի ԵԿ-96-Ա ՀՀ Նախագահի կարգադրությամբ հաստատված «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի և դրանից բխող միջոցառումների ցանկի» «Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ» վերտառությամբ 3 բաժնում 3.6-րդ կետում որպես առանձին միջոցառում սահմանված է նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգի և նախագծի մշակում: Ընդ որում, որպես նախագծի Ազգային ժողով ներկայացնելու վերջնաժամկետ սահմանվել է 2014 թ. նոյեմբեր ամիսը: Չքննադատելով այս կարևոր իրավական փաստաթուղթը՝ հիրավի, չենք կարող չանդարառնալ այն հիմնախնդրին, թե ինչպես կարելի է արդեն իսկ պատրաստ նախագծի և հայեցակարգի շրջանակներում այս ակտի ընդունումը տևական ժամանակով հետաձգել:

Հարկ է նկատել, սակայն, որ 2012 թվա-

⁴ Տես հղումն ըստ համացանցի 2011 թ. դրությամբ՝ <http://moj.am/am/download.php?view.328>, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4516&Reading=0>,

⁵ Տես՝ http://parliament.am/draft_history.php?id=4516&lang=arm, հղումն՝ ըստ համացանցի 2011 թ. դրությամբ:

կանի ԶԳ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հայեցակարգում միայն նշվում է, որ պետք է սահմանվեն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հստակ մեխանիզմներ:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը համալիր դարձնելու նկատառումով ստորև կառանձնացնենք միայն այն հիմնախնդիրները, որոնք կարող են վճռորոշ նշանակություն ունենալ հետագա բարեփոխումների իրականացման ընթացքում: Այսպես, որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել ոչ միայն իրավաբանական անձանց, այլև իրավաբանական անձ չհանդիսացող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը, այդ թվում նաև՝ օտարերկրյա կազմակերպության, բացառություն սահմանելով միայն պետության, համայնքների համար: Այս համատեքստում հավելենք, որ վարչական պատասխանատվության ենթարկելու տարբերակման հիմք կարելի է նախատեսել նաև մեծ, միջին և փոքր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց համար, ըստ որոնց՝ հատուկ

կան կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը կարող է կիրառվել միայն որպես բացառություն:

Կարծում ենք, սակայն, որը նշվածը, թերևս լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Դատաիրավական բարեփոխումների արդի փուլում, երբ 2012 թ. հունիսի 30-ի ՆԿ-96-Ա ԶԳ Նախագահի կարգադրությամբ հաստատված «ԶԳ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի և դրանից բխող միջոցառումների ցանկի» 2.1 կետում սահմանված է ԶԳ քրեական նոր օրենսգրքի մշակումը, հարցն առավել քան համակողմանի իրավական կարգավորման խնդիր ունի: Այս համատեքստում նշենք, որ այս երկու օրենսդրական ակտերի մշակումը պետք է զուգահեռաբար իրականացվի՝ տրամաբանական ներքին կապը ապահովելով քրեական և վարչական պատասխանատվությունների միջև: Ընդ որում, որպես հայեցակարգային հիմնահարց պետք է քննարկել նաև իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հիմնախնդիրը:

Կարծում ենք, վերանայված վարչական պատասխանատվությունն ի գորու է բացառել քրեական պատասխանատվության ինստիտուտի անհրաժեշտությունը: Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունն առավել շահեկան է, քան քրեական պատասխանատվությունը, քանզի անհարկի չեն խախտվում քրեական պատասխանատվության հանրահայտ ու համընդհանուր սկզբունքները (անհատական պատասխանատվության, սուբյեկտիվ մեղսայնացման և այլ), ապահովում են անհրաժեշտ օպերատիվություն և պարզեցված ընթացակարգ, որին նույնիսկ միտված են արդի ժամանակաշրջանի քրեական դատավարության օրենսդրական ակտերը, նշանակված պատասխանատվության միջոցի ու չափի հանրային համարժեք ընկալումը, ինչն ունի նաև կանխարգելիչ նշանակություն: Անշուշտ, վարչական պատասխանատվության ներկա իրավական կարգավորումներն ի գորու չեն լուծելու իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը վարչական պատասխանատվությամբ փոխարինելու խնդիրը, ուստի հիշյալ եզրահանգումը լիարժեք կյանքի կոչելու նկատառումով վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծում այնպիսի իրավական լուծումներ պետք է տրվեն, որոնք հա-

«...Վարչական պատասխանատվության ինստիտուտը չի կարող միտված լինել սուկ վարչակառավարչական համակարգի պաշտպանությանը...»

մասի նորմերում կարելի է նախատեսել վարչական տուգանքի տարբեր չափեր՝ դրանով իսկ ապահովելով այն, որ վարչական տույժի միջոցի կիրառումը չհանգեցնի կոնկրետ իրավաբանական անձի գործունեության փաստացի դադարեցմանը: Այլ կերպ ասած՝ պետք է ապահովվի կատարված իրավախախտման և նշանակվող վարչական տույժի միջոցի համաչափությունը՝ հաշվի առնելով նաև տվյալ իրավաբանական անձի կողմից իրականացվող գործունեության բնույթը:

2012 թվականի ԶԳ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հայեցակարգում նշվում է, որ անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքերը պետք է նվազագույնի հասցվեն: Այսինքն, դատա-

մապարփակ կղարձեն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը:

Առաջին հերթին այդ իրավական լուծումները վերաբերում են վարչական տույժի տեսակներին⁶, մասնավորապես, իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժի այնպիսի տեսակներ պետք է ամրագրվեն, որոնք համահունչ են այլ երկրների քրեական պատիժների: Իսկ վերջին դեպքում, դատարանի, որպես վարչական տույժ նշանակող մարմնի, դերը չպետք է բացառել:

Նախկին Նախագծում նույնպես որպես վարչական տույժ նշանակող մարմին ամրագրված էր դատարանը, իսկ վարչական տույժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ իրավաբանական անձի գործունեության դադարեցում, այսինքն՝ լուծարում, լիցենզիայի գործողության դադարեցում, վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, չեն կարող նշանակվել վարչական մարմինների կողմից: Օրինակ, վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում տույժի տեսակի նշանակումը⁷ վարչական մարմնի կողմից իրավաչափ չէ և հակասում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին, որի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Նշված սահմանադրական նորմը, որպես սեփականության իրավունքի պաշտպանության

սահմանադրական երաշխիք, նշանակում է, որ սեփականության իրավունքի հարկադիր և անհատույց դադարումը, կարող է կատարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և դատական կարգով: Նշված համատեքստում, անշուշտ, բռնագրավումը ևս հանդիսանում է սեփականության իրավունքի հարկադիր և

«...Յուրաքանչյուր նորմատիվ-իրավական ակտի նպատակն, անվերապահորեն, պետք է լինի մարդու իրավունքների երաշխավորվածությունն ու պաշտպանվածությունն ապահովելը...»

անհատույց դադարում, սակայն, դրա նշանակումը և իրականացումը նշված նախագիծը վերապահել է վարչական մարմիններին, այսինքն՝ արտադատական կարգով: Սահմանադրական նորմի տառացի մեկնաբանությունից բխում է, որ սեփականությունից զրկելն արտադատական կարգով արգելվում է⁸: Իսկ այն հիմնավորումը, որը դրվել է օրենսդրական ման կարգավորման հիմքում, առ այն, որ վարչական մարմնի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով, չի կարող համարվել Սահմանադրությանը չհակասող, քանի որ այն արդեն հետագա դատական վերահսկողություն է, իսկ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի նորմից բխում է, որ դատական կարգը պետք է լինի նախնական կամ վերջնական միջոցը դա-

⁶ 2012 թվականի ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հայեցակարգում ամրագրված վարչական տույժի տեսակների ցանկը՝ նախագրուչացում, տուգանք, հանրօգուտ աշխատանք, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումը, կարծում ենք, չի կարող համապատասխանել միջազգային արդի չափանիշներին և ներկա օրենսդրական իրավակարգավորումներին, քանի որ մի շարք հայրենական օրենսդրական ակտերով, սահմանվում է իրավաբանական անձանց նկատմամբ տույժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ լուծարում, լիցենզիայից զրկում և այլն:

⁷ Որպես վարչական տույժի տեսակ այն ամրագրված է 2012 թվականի ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հայեցակարգում:

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի**. Երևան: «Իրավունք», 2010թ., էջ 368:

տարանի վճիռն է⁹, այսինքն՝ բռնագրավումը պետք է նշանակվի դատարանի կողմից:

Ընդ որում, ուսումնասիրելով բոլոր այն երկրների փորձը, որոնք ընդունել են վարչական իրավախախտումների վերաբերյալ առանձին իրավական ակտեր, համոզվել ենք, որ ՀՀ բացառիկ այն երկրներից է, որի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծով՝ բռնագրավումը որպես տույժի տեսակ նշանակվում և կիրառվում է առանց դատարանի որոշման: Իհար-

րության 35-րդ հոդվածի 3-րդ մասին:

Այս համատեքստում հավելենք նաև, որ չենք կարող համաձայնվել այն իրավաբան գիտնականների կարծիքների հետ, որոնք, որպես օրինակ բերելով այլ երկրների վարչադատական գործընթացը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի օրինակները, համարում են, որ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը բացակայում է կամ նկատվում է դրանից հրաժարվելու միտում: Անշուշտ, այս եզրահանգումները միջազգային փորձի ոչ համալիր հետազոտության արդյունք են, քանի որ, վարչական զանցանքերը նման երկրներում կարգավորված են կամ քրեական օրենսգրքերով կամ առանձին ակտե-

«...Անհերքելի իրողություն է, որ օրենսդրական բացերը և ակնհայտ հակասությունները խիստ բացասաբար են անդրադառնում... արդարադատության իրականացման արդյունվետության վրա...»

րով, որոնց պարագայում, սակայն, ինչպես արդեն նշեցինք, չենք հանդիպել մի երկրի օրենսդրական ակտի¹¹, որում բացակայի դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը:

Այս առումով, սակայն, ՀՀ Սահմանադրական դատարանը 2010 թ. փետրվարի 5-ի ՍԴՈ 864 որոշմամբ¹² վարչական պատասխանատվության ինստիտուտը գնահատելով դրա նպատակի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության համատեքստում, արդարացիորեն եզրահանգել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի իրավակարգավորումը սահմանելիս դրսևորված է համակարգային մոտեցում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանված չեն բոլոր այն կոնկրետ վարչական մարմիններն ու դրանց պաշտոնատար ան-

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ Տե՛ս Определение Конституционного Суда РФ от 3 декабря 1998 г. № 201-0 по жалобе граждан Л.Н. Васильевой, А.Н. Евгеева и Л. А. Налетова на нарушения их конституционных прав положениями ч.2 ст. 146-7 КоАП РФ // СЗ . — 1999. — N17.-Ст. 2204:

¹¹ Ինչ վերաբերում է Գերմանիայի օրենսդրական կարգավորմանը, ապա վարչական տույժի հիմնական տեսակը, ըստ «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Դաշնության օրենքի տուգանքն է և բացակայում են տույժի վերը նշված այնպիսի տեսակները, որոնց դատարանի կողմից նշանակման իրավաչափությունն արդեն իսկ ներկայացվել են:

¹² Հղումն ըստ համացանցի՝

<http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-864.pdf>:

ծինք, որոնք իրավասու են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմել և այն ներկայացնել դատարան՝ անձանց դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով: Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը դեմ չի արտահայտվել դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտին այլ արձանագրել է իրավակարգավորման բաց՝ պայմանավորված դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է:

Իրավաբանական անձանց պարագայում միայն վարչական տույժի նշանակումը բավարար չէ պատասխանատվության նպատակներին հասնելու համար, և վերը նշված համապարփակ իրավակարգավորման տեսանկյունից անհրաժեշտ է կիրառել նաև վարչաիրավական ներգործության այլ միջոցներ: Այսպես, որպես քրեական պատասխանատվության հետևանքին համահունչ դատվածության առաջացման հետևանքի համատեքստում վարչական պատասխանատվության իրավական հետևանք պետք է ամրագրել այն, որ իրավաբանական անձի նկատմամբ լուծարում վարչական տույժի նշանակման դեպքում՝ տվյալ իրավաբանական անձի հիմնադիրներին արգելվում է նոր իրավաբանական անձ ստեղծել¹³, իսկ լիցենզիայի գրկում վարչական տույժի նշանակման դեպքում՝ իրավաբանական անձը չի կարող կրկին դիմել՝ նույն լիցենզիան ստանալու համար:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել Սահմանադրական դատարանն իր՝ 2012 թ. սեպտեմբերի 19-ի ՍԴՈ-1048 որոշմամբ¹⁴ ընդգծում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունման, խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարության և առկա իրավակարգավորումների շրջանակների հստակեցման

անհրաժեշտությունը՝ ելնելով միջազգային ժամանակակից փորձի ուսումնասիրման արդյունքներից: Մասնավորապես, հիշյալ որոշմամբ առանձնացվում է իրավաբանա-

«...Վերանայված վարչական պատասխանատվությունն ի գորու է բացառել քրեական պատասխանատվության ինստիտուտի անհրաժեշտությունը...»

կան անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգմանը, վարչական պատասխանատվության՝ իրավական պատասխանատվության այլ տեսակներից սահմանազատելու իրավական չափանիշների առավել հստակեցմանը և մի շարք հայեցակարգային նշանակության այլ հարցեր:

Այսպիսով, վերը նշված բոլոր օրենսդրական բացերը և թերությունները, օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն պահանջող խնդիրները միայն չեն մասն են կազմում, գործնականում դրանք անհամեմատ շատ են, ինչը նույնիսկ բնորոշ չէ որևէ իրավական ինստիտուտի, և բնականաբար մեկ հողվածի շրջանակներում, հնարավոր չէր լուսաբանել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսդրության բոլոր թերություններն ու դրանց վերացման ուղիները, հետևաբար փորձեցինք ներկայացնել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի օրենսդրական ամրագրման և դրա կարգավորման ուղիների շուրջ որոշ եզրահանգումներ՝ ապահովելու համար օրենքի դրույթների կիրառման գործուն կառուցակարգ, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման գործուն և իրական երաշխիքներ:

¹³ Գիտնականների մի մասը գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 33.1-րդ հոդվածին, սակայն, կարծում ենք, Սահմանադրության վկայակոչված նորմի հետ մենք աղերս չունենք, քանի որ 33.1-րդ հոդվածով ամրագրված «օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթը, թերևս չի բացառում օրենսդրությամբ սահմանելու ոչ միայն ձեռնարկատիրության տեսակները, այլև դրանցով զբաղվելու այն սահմանափակումները, որոնք համահունչ են իրավունքի սահմանափակման սահմանադրական չափանիշներին:

¹⁴ Հղումն ըստ համացանցի՝

<http://www.concourt.am/armenian/decisions/common/2012/pdf/sdv-1048.pdf>:

ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ

Արսեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Քննչական գործողությունների կատարման հիմնական նպատակը քրեական գործով ապացույցներ ձեռք բերելն է: Քննչական գործողությունների կատարման օրինականությունից և հիմնավորվածությունից է կախված այդ ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների թույլատրելիության հարցը:

Օրինական և հիմնավորված կարելի է ձանաչել միայն այն քննչական գործողությունները, որոնց իրականացման համար առկա են եղել փաստական հիմքեր: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ քննչական գործողություններ պարունակում են հարկադրանքի տարրեր, ուստի և փաստական հիմքերը կոչված են սահմանափակելու այն իրականացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց սուբյեկտիվիզմը և անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ապահովման գործուն երաշխիք են¹:

«Քննչական գործողությունների կատարման փաստական հիմքեր» հասկացությանը իրավաբանական գրականության մեջ ընկալվում է ոչ միանշանակ: Այսպես, **Օ.Վ. Մերեմյանին** քննչական գործողությունների կատարման փաստական հիմքերի տակ հասկանում է բավարար տեղեկություններ, որոնք կոնկրետ պայմաններում հիմնավորում են քննչական գործողությունների կատարման անհրաժեշտությունը ու հնարավորությունը՝ և որոնց որակը կազմում են օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում

ձեռք բերված ապացուցողական և այլ տվյալները²:

Վ.Ա. Սեմենցովի կարծիքով՝ քննչական գործողությունների կատարման փաստական հիմքերը տեղեկություններ են, որոնք վկայում են քննչական գործողությունների իրականացման հնարավորությունը (անհրաժեշտությունը)³:

Վ.Մ. Բիկովի կարծիքով՝ բոլոր տեսակի քննչական գործողությունների կատարման փաստական հիմքերը իրենցից ներկայացնում են քրեական գործով վարույթ իրակա-

¹ Տե՛ս **Ефремова С.В.** Основание следственного действия как гарантия против необоснованного применения принуждения к его участникам // Проблемы обеспечения прав участников процесса по новому Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. Самара: 2003. - С.193.

² Տե՛ս **Меремьянина О.В.** Основания производства следственных действий: Автореф. дис. ... канд. юрид. наук. Красноярск: 2004. - С. 6.

³ Տե՛ս **Семенов В.А.** Концептуальные основы системы следственных действий в досудебном производстве: Автореф. дис... докт. юрид. наук. Екатеринбург: 2006. - С. 35.

նացնելու իրավասություն ունեցող անձանց հիմնավորված ենթադրություն, որ հնարավոր է ապացույցներ ձեռք բերել այդ կամ այլ քննչական գործողությունների կատարման ճանապարհով⁴:

Գ.2. Աղիգամովը գտնում է, որ քննչական գործողությունների կատարման փաստական հիմքերը այն բավարար տվյալներն են, որոնք վկայում են հատկապես այդ քննչական գործողության կատարման անհրաժեշտության մասին⁵:

Քննչական գործողությունների կատարման փաստական հիմքեր հասկացության վերաբերյալ մեր կողմից առավել ընդունելի է **Ս.Ա. Շեյֆերի** այն մոտեցումը, որ «քննչական գործողությունների կատարման փաստական հիմքերը տվյալներ են, որոնք վկայում են օրենքով սահմանված աղբյուրից որոնվող տեղեկությունը ստանալու անհրաժեշտության մասին»⁶:

Քննչական գործողությունների կատարման փաստական հիմքերը բովանդակվում են քրեադատավարական օրենսգրքի կոնկրետ նորմերում: Ինչպես նշում է **Ս.Վ. Եֆրեմովան** քննչական գործողությունների մեծ մասի փաստական հիմքերի նորմատիվ մոդելը իր մեջ ընդգրկում է երեք տարր. 1) աղբյուրը, որից կարելի է ստանալ որոնվող տեղեկությունը, 2) քննչական գործողության նպատակը, 3) փաստական տվյալները, որոնք հիմնավորում են դրա իրականացման անհրաժեշտությունը: Այնուհետև հեղինակը հավելում է, որ քննչական գործողությունը կարող է արդյունավետ իրականացվել, եթե առկա են նշված երեք տարրերը: Դրանցից որևէ մեկի բացակայությունը այն դարձնում է անօրինական և անհիմն⁷:

Ասվածի լույսի ներքո անհրաժեշտ է քննարկել կոնկրետ քննչական գործողություն-

ների բովանդակությունը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.) նորմերը: Օրենսդիրը սահմանում է հետևյալ քննչական գործողությունների կատարման հիմքերը և դատավարական կարգը. **հարցաքննություն, առերեսում, զննում, արտաշիրմում, քննում, ճանաչման ներկայացնել, խուզարկություն, առգրավում, գույքի վրա կալանք դնել, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկել, հեռախոսային խոսակցությունները լսել, քննչական փորձարարություն, փորձաքննություն նշանակել և կատարել և հետազոտությունների համար նմուշներ ստանալ:**

1. Հարցաքննություն: ՀՀ քր. դատ. օր.-ի 205-215-րդ հոդվածները կարգավորում են այդ քննչական գործողության իրականացման դատավարական կարգը, որոնք ցավոք չեն բովանդակում նորմեր դրա իրականացման փաստական հիմքերի վերաբերյալ⁸: Սակայն, միաժամանակ դա ամենևին էլ չի նշանակում ՀՀ քր. դատ. օր.-ում այդպիսի նորմերի ընդհանրապես բացակայության մասին: Այսպես, քր. դատ. օր.-ի 86-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «**վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ հանգամանք**»: Նշված նորմը, ըստ էության, բովանդակում է փաստական տվյալներ, որը ցույց է տալիս վկայի հարցաքննության միջոցով ապացույցներ ստանալու հնարավորությունը, որը հանդիսանում է այդ քննչական գործողության նպատակը:

ՀՀ քր. դատ. օր.-ի 86-րդ հոդվածի 2-րդ

⁴ Տե՛ս **Быков В.М.** Принятие следователем решения о производстве следственных действий // Законность. - 2005. - N10. - С. 10.

⁵ Տե՛ս **Адигамова Г.З.** Следственные действия, проводимые по судебному решению и с санкции прокурора: Автореф. дисс. ... канд. юрид. наук. Челябинск, 2004. С. 17.

⁶ Տե՛ս **Шейфер С.А.** Следственные действия. Система и процессуальная форма. М., 2001. С. 107.

⁷ Տե՛ս **Ефремова С.В.** Обоснованность следственных действий как гарантия прав и свобод участников процесса: Автореф. дисс. ... канд. юрид. наук. Самара, 2004. С. 12.

⁸ Ի տարբերություն գործող օրենսգրքի, քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում հստակ սահմանված է այս քննչական գործողության նպատակը, ըստ որի՝ հարցաքննությունը վկային, տուժողին, փորձագետին, մեղադրյալին կամ ձերբակալված անձին հարցեր տալու միջոցով վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելն է (224-րդ հոդվածի 1-ին մաս):

մասը սահմանափակում է այդ տեսակի ապացույցներ՝ վկայի ցուցմունքներ, ստանալու աղբյուրները: Այսպես, որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել՝ **1)** անձինք, որոնք ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները, **2)** փաստաբանները՝ պարզելու համար տեղեկություններ, որոնք նրանց կարող են հայտնի լինել կապված իրավաբանական օգնության դիմելու կամ նման օգնություն ցույց տալու հետ, **3)** անձինք, որոնց տվյալ քրեական գործին վերաբերող տեղեկությունները հայտնի են դարձել քրեական գործով որպես պաշտպան, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչ մասնակցելու կապակցությամբ, **4)** դատավորը, այդ թվում նաև՝ լիազորությունները դադարեցրած, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը և դատական նիստի քարտուղարը՝ կապված այն քրեական գործի հետ, որում նրանք իրականացրել են իրենց դատավարական լիազորությունները, բացառությամբ տվյալ գործի վարույթի ընթացքում թույլ տված սխալների և չարաշահումների քննության, նոր ի հայտ եկած հանգամանքներով տվյալ գործի նորոգման կամ կորցրած վարույթի վերականգնման դեպքերի, **5)** ձեռնարկված հոգևորական-խոստովանահայրը՝ խոստովանանքից իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին, **6)** մարդու իրավունքների պաշտպանը՝ իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին:

Բացի այդ, քր. դատ. օր.-ի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վկան իրավունք ունի հրաժարվել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ տալուց, որոնց շրջանակը սահմանված է 6-րդ հոդվածի 40-րդ կետում:

2. Առերեսում: Քր. դատ. օր.-ի 216-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քննիչն իրավունք ունի կատարել նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հասություն-

ներ կան: Առերեսման վերաբերյալ այդպիսի բնորոշում տեղ է գտել նաև քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ): Անդրադառնալով նշված քննչական գործողությանը՝ **Ռ.Ի. Ջախնուկինը** գտնում է, որ առերեսման նպատակը ՌԴ քր. դատ. օր.-ի 192-րդ հոդվածում սահմանված չէ: Ըստ հեղինակի՝ առերեսման նպատակի նորմատիվ ամրագրումը պրակտիկայում կապահովի միասնականություն այդ քննչական գործողության կատարման հետ կապված, ինչը, անկասկած, կամրապնդի դրա կատարման օրինականությունը: Այդ նպատակով հեղինակը առաջարկում է ՌԴ քր. դատ. օր.-ի 192-րդ հոդվածի 1-ին մասը ձեակերպել հետևյալ կերպ. **«Եթե նախկինում հարցաքննված անձանց ցուցմունքներում կան էական հակասություններ, քննիչն իրավուն ունի կատարել առերեսում՝ նպատակ ունենալով պարզել և վերացնել էական հակասությունների պատճառները»**⁹: Ս.Ա. Շեյֆերի կարծիքով՝ այդ քննչական գործողության նպատակը հոդվածում ճիշտ սահմանված չէ: Ըստ նրա, առերեսման նպատակ է հանդիսանում **«ցուցմունքներում առկա էական հակասությունների պատճառների պարզումը»**¹⁰: Գտնում ենք, որ հեղինակների կողմից ներկայացված նկատառումը տեղին է և իր արտացոլումը պետք է ստանա նաև 33 քր. դատ. օր.-ում: Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ առերեսման իրականացման փաստական հիմքերի առկայության դեպքում քննիչը միայն իրավունք ունի իրականացնելու առերեսում, բացառությամբ այն դեպքերի, երբ էական հակասություններ կան մեղադրյալի և այլ անձանց ցուցմունքների միջև:

3. Ձևնում: 33 քր. դատ. օր.-ի 217-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության դեպքը, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու նպատակով քննիչը կատարում է տեղանքի, շինությունների, առարկաների, փաստաթղթերի, կենդանիների, մարդու կամ կենդանու դիակի զննում: Կարծում ենք, որ այս քննչական գործողության նպատակը և ապացուցողական տեղեկության ձեռքբերման աղբյուրը առավել հստակ սահմանված է Նախագծում,

⁹ Տե՛ս **Зайнуллин Р.И.** Теоретические и практические проблемы производства очной ставки с участием несовершеннолетнего обвиняемого. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Челябинск, 2008. С. 11-12.

¹⁰ Տե՛ս **Шейфер С.** Проблемы развития системы следственных действий в УПК РФ. С. 92.

որի 233-րդ հոդվածի համաձայն՝ զննունը վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու, ենթադրյալ հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտները հայտնաբերելու նպատակով տեղանքի, շինության, տրանսպորտային միջոցի, առարկայի, փաստաթղթի, էլեկտրոնային կամ մագնիսական կրիչի բովանդակության, կենդանու, մարդու կամ կենդանու դիակի տեսողական ուսումնասիրությունն է: Իսկ ինչ վերաբերում է փաստական տվյալներին, որոնք մատնանշում են ապացույցների ձեռքբերման հնարավորության և քննչական գործողության նպատակներին հասնելու մասին, կարելի է միայն ենթադրել: Հետևաբար օրենսդրորեն անհրաժեշտ է առավել հստակ ձևակերպել զննության փաստական տվյալները¹¹:

4. Արտաշիրմուն¹²: ՀՀ քր. դատ. օր.-ի 219-րդ հոդվածում, որտեղ արտաշիրմունը նախատեսված է որպես ինքնուրույն քննչական գործողություն, սահմանված չէ այս քննչական գործողության հասկացությունը: Միայն օրենսդիրը սահմանափակվում է նշելով, որ դիակի արտաշիրմունն անհրաժեշտության դեպքում քննիչն այդ մասին կայացնում է որոշում: Բացի այդ, քր. դատ. օր.-ի 219-րդ հոդվածը նշում չի պարունակում այդ քննչական գործողության նպատակի մասին: **Վ.Ս. Բիկովի** կարծիքով՝ արտաշիրմուն կատարվում է թաղման վայրում դիակի առկայության (բացակայության) փաստը պարզելու համար՝ նպատակ ունենալով նրա անձի նույնացման, դիակի կրկնակի զննության, համեմատական հետազոտման համար նշուշներ ստանալու, ճանաչման ներկայացնելու, ինչպես նաև փորձաքննության կատարելու¹³: Արտաշիրմունն վերաբերյալ գրեթե նմանատիպ ձևակերպման կարելի է հանդիպել Նախագծում: Այսպես, համաձայն Նախագծի

247-րդ հոդվածի 1-ին մասի՝ արտաշիրմունը կոնկրետ վայրում դիակի առկայության փաստը պարզելու, հանգուցյալի հետ թաղված և վարույթի համար նշանակություն ունեցող առարկաներ հայտնաբերելու, ինչպես նաև դրանք զննելու, ճանաչման ներկայացնելու, հետազոտման համար նմուշներ վերցնելու, փորձաքննություն կատարելու նպատակով թաղման վայրի բացումն է:

5. Քննում: Քննիչն իրավունք ունի կատարել կասկածյալի, մեղադրյալի, վկայի կամ տուժողի քննում՝ նրանց մարմնի վրա հանցագործության հետքերի կամ հատուկ նշանների առկայություն հայտնաբերելու համար, եթե դրա համար չի պահանջվում դատաբժշկական փորձաքննություն (քր. դատ. օր.-ի 220 հոդվածի 1-ին մաս): **Ս.Վ. Եֆրեմովայի** կարծիքով՝ քննման նպատակն է մարմնի վրայից հանցագործության հետքերի, մարմնական վնասվածքների և հատուկ նշանների հայտնաբերումը¹⁴: Ի տարբերություն ՀՀ քր. դատ. օր.-ի, ՌԴ քր. դատ. օր.-ում ընդլայնված է քննման նպատակները, որոնց թվում նշվում է նաև՝ մարմնական վնասվածքները, անձի հարբածության վիճակը, եթե դրանց հայտնաբերումը չի պահանջում դատական փորձաքննություն (179-րդ հոդվածի 1-ին մաս): Անդրադառնալով նշված քննչական գործողության նպատակներին **Ս.Ա. Շեյֆերը** իրավացիորեն գտնում է, որ «քննման դեպքում քննիչը կարող է միայն դիտել, չի կարող քննմամբ հայտնաբերել անձի հարբածության վիճակը»¹⁵: Իրականում որպեսզի հայտնաբերվի այն փաստը, թե անձը գետնում է հարբածության վիճակում պետք է նշանակվի դատաբժշկական փորձաքննություն:

Հետևաբար, գտնում ենք, որ անձի մոտ հարբածության վիճակի հայտնաբերումը չի կարող քննման նպատակ լինել: Սակայն դրա

¹¹ Տե՛ս **Быков В.М.** Фактические основания производства следственных действий по УПК РФ http://juristlib.ru/book_2966.html (04.07.13).

¹² **Ս.Ա. Շեյֆերը** արտաշիրմունը չի դիտում որպես ինքնուրույն քննչական գործողություն այն հիմնավորմամբ, որ ինքնին դիակը թաղված տեղից հանելը ոչինչ չի ապացուցում: Հետևաբար նշված գործողությունը պետք է դիտել որպես զննման, ճանաչման ներկայացնելու և դիակի փորձաքննության տեխնիկական նախադրյալ: Տե՛ս **Шейфер С.А.** Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение. Самара, 2004. С. 47.

¹³ Տե՛ս **Быков В.М., Жмурова Е.С.** Эксгумация трупа как самостоятельное следственное действие // Вестник Саратовской государственной академии права. 2003. N 2. С. 61.

¹⁴ Տե՛ս **Ефремова С.В.** Обоснованность следственных действий как гарантия прав и свобод участников процесса: Автореф. дисс. ... канд. юрид. наук. Самара, 2004. С. 13.

¹⁵ Տե՛ս **Шейфер С.** Проблемы развития системы следственных действий в УПК РФ // Уголовное право. 2002. N 3. С. 92.

հետ մեկտեղ կարծում ենք, անհրաժեշտ է քր. դատ. օր.-ում ընդլայնել քննման նպատակները և դրանց շարքում նշել նաև մարմնական վնասվածքների առկայության հայտնաբերումը:

6. Ճանաչման ներկայացնելը: ՀՀ քր. դատ. օր.-ի 221-րդ հոդվածի համաձայն՝ ճանաչման համար որևէ անձի վկային, տուժողին, կասկածյալին, մեղադրյալին ներկայացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը վերջիններիս նախապես հարցաքննում է այդ անձի արտաքին տեսքի ու նշանների և այն հանգամանքների մասին, որոնցում ճանաչողը տեսել է այդ անձին: Իսկ քր. դատ. օր.-ի 222-րդ հոդվածում նշված է, որ որևէ առարկա ճանաչման ներկայացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը ճանաչողին նախապես հարցաքննում է այդ առարկայի նշանների, ինչպես նաև այն հանգամանքների մասին, որոնցում նա տեսել է այդ առարկան: Դժվար չէ նկատել, որ մեջբերված դատավարական նորմերում սահմանված չէ այս քննչական գործողության նպատակը: Տեսական գրականության մեջ նշվում է, որ ճանաչման ներկայացնելու նպատակը ներկայացվող և ճանաչողի կողմից նախկինում դիտարկված օբյեկտի նույնությունը կամ տարբերությունը որոշելն է¹⁶: Թեև Նախագծի 236-րդ հոդվածում փորձ է արվել լրացնել այդ բացը՝ հստակեցնելով ճանաչման նպատակը, ըստ որի՝ ճանաչումը որոշակի անձի կամ օբյեկտի (առարկայի, փաստաթղթի, կենդանու, դիակի) նույնությունը պարզելու նպատակով այդ անձին կամ օբյեկտը մեղադրյալի, տուժողի կամ վկայի ընկալմանը ներկայացնելն է, սակայն կարծում ենք, որ նախագծի հեղինակները անհրաժեշտ հետևողականություն չեն ցուցաբերել, քանի որ ճանաչման նպատակն է ոչ միայն նախկինում դիտարկված օբյեկտի նույնությունը, այլ նաև տարբերությունը որոշելն է: Ուստի և մեր կողմից ներկայացված նկատառումը, կարծում ենք, պետք է տեղ գտնի Նախագծում:

7. Խուզարկություն: ՀՀ քր. դատ. օր.-ի 225-րդ հոդվածում սահմանված է, որ քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված

առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ ու փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար: Խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց, հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց, ինչպես նաև դիակները հայտնաբերելու համար: **Ս.Ա. Շեյֆերի** կարծիքով՝ քննչական գործողության կատարման փաստական հիմքը առավել հստակ սահմանված է խուզարկությունը սահմանող նորմում: Խուզարկության բնորոշումից կարելի է առանձնացնել փաստական հիմքի հետևյալ նորմատիվ տարրերը. **ա)** խուզարկության նպատակը (հայտնաբերելու հանցագործության հետքեր և այլ առարկաներ, որոնք բովանդակում են որոնվող տեղեկատվությունը), **բ)** թույլատրելի աղբյուրը, որը կարող է բովանդակել որոնվող տեղեկատվությունը (ինչ-որ տեղ, ինչ-որ անձի մոտ), **գ)** փաստական տվյալների ծավալը, որոնք վկայում են քննչական գործողության նպատակին հասնելու հնարավորության մասին (բավարար հիմքեր կամ ենթադրելու)¹⁷:

8. Առգրավում: Առգրավումը իր բովանդակությամբ բավականին նման է խուզարկություն քննչական գործողությանը: ՀՀ քր. դատ. օր.-ի 226-րդ հոդվածը սահմանում է, որ գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկաներ և փաստաթղթեր վերցնելու անհրաժեշտության դեպքում և, եթե ստույգ հայտնի են, թե որտեղ և ում մոտ են դրանք գտնվում, քննիչը կատարում է առգրավում: Եական տարբերությունը խուզարկության և առգրավման միջև կայանում է նրանում, որ եթե առգրավման դեպքում ստույգ հայտնի է թե որտեղ և ում մոտ է գտնվում առարկան և փաստաթուղթը ու մնում է միայն վերցնել դրանք, ապա խուզարկության դեպքում դեռևս այն պետք է գտնել:

9. Գույքի վրա կալանք դնելը: Ինչպես նախկին քր. դատ. օր.-ը, այնպես էլ գործող քր. դատ. օր.-ը գույքի վրա կալանք դնելը դիտում է որպես ինքնուրույն քննչական գործողություն: Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում գույքի վրա կալանք դնելը նախատեսված չէ որպես ինքնուրույն քննչական գործողություն: Նախագծում գույ-

¹⁶ Տե՛ս Սինալյան Ա. Ճանաչման ներկայացնելու դատավարական և տակտիկական հիմքերը: Իրավ. գիտ. թեկն. առեմնախոս. սեղմագիր: Երևան, 2008, էջ 7:

¹⁷ Տե՛ս Շեյֆեր Ս.А. Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение. Самара, 2004. - С. 27-28.

քի արգելադրումը դիտվում է որպես դատավարական հարկադրանքի միջոց: Տեսական գրականության մեջ այս հարցի վերաբերյալ ևս չկա միասնական մոտեցում: Այսպես, դատավարագետների մի մասը գտնում են, որ գույքի վրա կալանք դնելը ինքնուրույն քննչական գործողություն է¹⁸, մյուսների կարծիքով՝ գույքի վրա կալանք դնելը քննչական գործողություն է¹⁹: Կարծում ենք, այս հարցի վերաբերյալ Նախագծում տեղ գտած կարգավորումը ավելի ընդունելի է, քանի որ գույքի վրա կալանք դնելը չունի քննչական գործողություններին բնորոշ հատկանիշներ, ուստի և այն ճիշտ չէ դիտել որպես ինքնուրույն քննչական գործողություն:

Անդրադառնալով գույքի վրա կալանք դնելու փաստական հիմքին՝ նշենք, որ այն ամրագրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 232 և 233-րդ հոդվածներում, որոնք ամբողջությամբ արտացոլում են այս քննչական գործողության կատարման փաստական հիմքի բովանդակությունը. ապացուցողական ինֆորմացիայի աղբյուրը (կասկածյալի, մեղադրյալի և այն անձանց գույքը, որոնց վրա կասկածյալի և մեղադրյալի գործողությունների համար կարող է դրվել նյութական պատասխանատվություն), քննչական գործողության նպատակը (քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելը), փաստական տվյալները, որոնք կվկայեն, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, որի մոտ գտնվում է գույքը, կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել բռնագրավման ենթակա գույքը:

10. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը: ՀՀ քր. դատ. օր.-ի 239-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ երբ բավա-

րար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի կամ մեղադրյալի ուղարկած կամ նրանց կողմից ստացվող նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներում կարող են պարունակվել գործով ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություններ, քննիչը կարող է պատճառաբանված որոշում կայացնել, որում պարունակվում է միջնորդություն դատարանին՝ նշված անձանց նամակագրությունը վերահսկելու համար: Նշված դատավարական նորմում հստակ արտահայտված է փաստական հիմքի բոլոր տարրերը՝ ապացուցողական ինֆորմացիայի աղբյուրը, քննչական գործողության նպատակը և դրա կատարման փաստական տվյալները:

11. Հեռախոսային խոսակցությունները լսելը: ՀՀ քր. դատ. օր.-ի 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի, մեղադրյալի և հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցություններում կարող են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել, դատարանի որոշմամբ թույլատրվում է տվյալ խոսակցությունների լսում և ձայնագրառում: Անդրադառնալով քննարկվող քննչական գործողությանը՝ **Լ.Գ. Յուրինան** նշում է, որ այդ քննչական գործողության կատարման փաստական հիմքը իր մեջ ներառում է հետևյալ փաստական տվյալները. ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարմանը²⁰, այդ հանցագործության կապը կոնկրետ անձի հետ կամ նրա իրազեկվածությունը հանցագործության կամ գործի համար նշանակություն ունեցող այլ փաստերի մասին, և այն, որ հատկապես

¹⁸ Տե՛ս **Быховский И.Е.** Процессуальные и тактические вопросы проведения следственных действий: Учебное пособие. Волгоград, 1977. С. 11; **Рыжаков А.П.** Следственные действия и иные способы собирания доказательств. М., 1997. С. 45, **Быков В.М.** Фактические основания производства следственных действий по УПК РФ http://juristlib.ru/book_2966.html (04.07.13). Տե՛ս **Абдумаджидов Г.** Расследование преступлений (Процессуально-правовое исследование). Ташкент, 1986. С. 114; **Шейфер С.А.** Следственные действия. Система и процессуальная форма. С. 56 - 57.

¹⁹ Տե՛ս **Абдумаджидов Г.** Расследование преступлений (Процессуально-правовое исследование). Ташкент, 1986. С. 114; **Шейфер С.А.** Следственные действия. Система и процессуальная форма. С. 56 - 57.

²⁰ ՀՀ քր. դատ. օր.-ը թույլ է տալիս նշված քննչական գործողությունը իրականացնել՝ անկախ հանցագործության ծանրությունից: Նախագծում հեռախոսային խոսակցությունները վերահսկելը դիտվում է որպես գաղտնի քննչական գործողություն և թույլատրվում է իրականացնել միայն ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ վարույթներով, բացառությամբ 256-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի (հոդված 249):

վերջինիս հեռախոսային կամ այլ կապի միջոցով կարելի է ստանալ գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ²¹:

12. Բնչական փորձարարությունը: ՀՀ քր. դատ. օր.-ի 242-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի համար նշանակություն ունեցող տվյալներն ստուգելու և ճշտելու նպատակով փորձեր և այլ հետազոտական գործողություններ կատարելու համար քննիչն իրավունք ունի կատարել քննչական փորձարարություն: Ինչպես երևում է քր. դատ. օր.-ի 242-րդ հոդվածի բովանդակությունից, քննչական փորձարարության ընդհանուր նպատակ օրենսդիրը դիտում է գործի համար նշանակություն ունեցող տվյալների ստուգումը և ճշտումը: Այս առումով **Ս.Ա. Շեյֆերը** նշում է, որ «այդ նպատակը յուրահատուկ է միայն քննչական փորձարարության համար, այն ներհատուկ է նաև առերեսմանը, ճանաչման ներկայացնելուն, տեղում ցուցմունքների ստուգմանը և փորձաքննություն նշանակելուն»²²: քննչական փորձարարության առավել կոնկրետ նպատակները սահմանված են ՌԴ քր. դատ. օր.-ի 181-րդ հոդվածում, համաձայն որի՝ ստուգում թույլատրվում է պարզելու՝ ինչ-որ փաստի ընկալման հնարավորությունը, որոշակի գործողությունների կատարումը, ինչ-որ դեպքի վրա հասնելը, դրա հաջողականությունը, ինչպես նաև հետքի առաջացման մեխանիզմը: Կարծում ենք, ՌԴ քր. դատ. օր.-ի 181-րդ հոդվածում տեղ գտած կոնկրետ նպատակները պետք է ամրագրվեն նաև ՀՀ քր. դատ. օր.-ում՝ այն այլ քննչական գործողություններին սահմանազատելու համար:

12. Փորձաքննություն նշանակելը և կատարելը²³: ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածի համաձայն՝ փորձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների

մեթոդիկայի բնագավառներում հատուկ գիտելիքներ: Նշված դատավարական նորմի բովանդակությունից հետևում է, որ փորձաքննության նշանակման և կատարման նպատակն է հանդիսանում փորձագետի եզրակացության ստացումը՝ որպես օբյեկտի հետազոտության արդյունք: Փաստական տվյալները, որոնք վկայում են փորձագետի եզրակացությունը ստանալու անհրաժեշտության մասին, հանդիսանում են քննիչի ենթադրությունները այն մասին, որ փորձաքննության ներկայացվող օբյեկտը հանդիսանում է պիտանի այդ նպատակի համար, իսկ ինքը՝ փորձագետը, տիրապետում է բավարար մասնագիտական գիտելիքների, կարող է իրականացնել անհրաժեշտ հետազոտություններ և պատասխանել քննիչի բոլոր հարցերին:

12. Հետազոտման համար նշուշներ ստանալը²⁴: Այս քննչական գործողությունը անխաբիհորեն կապված է փորձաքննություն նշանակելու և կատարելու հետ: ՀՀ քր. դատ. օր.-ի 253-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչն իրավունք ունի ստանալ մարդու, դիակի, կենդանու, նյութի և այլ օբյեկտների հատկությունները բնութագրող մուշներ, եթե դրանց հետազոտումը գործի համար նշանակություն ունի: Նշված նորմում արտացոլված է քննչական գործողության կատարման փաստական հիմքի բոլոր երեք տարերրը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ քննչական գործողությունների կատարման փաստական հիմքերը դրանց օրինականության ու հիմնավորվածության և անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ապահովման գործուն միջոց են հանդիսանում: Այդ իսկ նպատակով անհրաժեշտ է կատարելագործել որոշ քննչական գործողությունները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերը, որն էլ միտված կլինի քննչական գործողության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովմանը:

²¹ Տե՛ս **Юрина Л.Г.** Процессуальные и криминалистические проблемы контроля и записи переговоров: Автореф. дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2001. С. 13.

²² Տե՛ս **Шейфер С.А.** Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение. Самара, 2004. С. 145.

²³ Նախագծում փորձաքննություն նշանակելը և կատարելը նախատեսված է քննչական գործողությունների համակարգում:

²⁴ Նախագծում հետազոտման համար մուշներ ստանալը դիտվում է ոչ թե որպես ինքնուրույն քննչական գործողություն, այլ որպես փորձաքննության բաղկացուցիչ մաս:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ ՌՈՍԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վաղարշակ ՂԱԶԱՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Խոսելով իրավունքի մայրցամաքային կամ ռոմանագերմանական համակարգի մասին, հայտնի իրավագետ Ռ.Դավիթը նշում է դրա հատկանշական գծերը. «Այստեղ առաջին պլան են մղված իրավունքի այն նորմերը, որոնք դիտարկվում են իբրև արդարության ու բարոյականության պահանջներին համապատասխանող վարքագծի նորմեր: Սակայն, իրավագիտության հիմանական խնդիրն է որոշել, թե ինչպիսիք պետք է լինեն այդ նորմերը, այս խնդրով տարված դոկտրինը պակաս է հետաքրքրվում կառավարման, դատավարության և իրավունքի կիրառման հարցերով, դրանով զբաղվում են պրակտիկ իրավաբանները»¹:

Եվրոպայի տարբեր երկրներում գլխավորող դերը վաղուց ի վեր հատկացվում էր և մինչ օրս ձևականորեն հատկացվում է գրված օրենքին, այլ ոչ թե դատավորների կողմից ստեղծվող դատական նախադեպերին: Ահա ինչու իրավունքի այս համակարգում գործում են կողիֆիկացված ակտեր՝ օրենսգրքեր, և հենց մայրցամաքային համակարգի երկրներում են ստեղծվել կողիֆիկացված օրենսդրության հանրահայտ հուշարձանները՝ «Սաքսոնյան հայելին», «Շվաբական հայելին», «Lex Salica»-ն և այլն:

Այս համակարգում իրավունքն ու օրենսդրությունը դիտարկվում են իբրև քաղաքացիների միջև փոխհարաբերությունների կազմավորման միջոց: Ուստի իրավունքի առավելապես մշակված ոլորտ հանդիսացավ քաղաքացիական իրավունքը, թեպետ և բազմաթիվ այլ ճյուղեր, օրինակ՝ քրեական ու քրեադատավարական իրավունքը, բավականաչափ խորն են մշակված:

Արդարադատության անգլոսաքսոնական ու մայրցամաքային համակարգերի միջև ջրբաժանն անցնում է մրցակցային ու հետախուզական դատավարության միջև սահմանով: Դատավարության մրցակցությունը ենթադրում է կողմերի հավասարություն գործընթացում՝ իրապես անկախ դատարանի առջև, ինչը թույլ է տալիս կողմերին վիճել գործով ճշմար-

տությունն հայտնաբերելու համար: Ուստի, մրցակցությունը ենթադրում է այդ վեճի ընթացքում կողմերի լիարժեք հավասարությունը և դատարանի իրական անկախությունը՝ առանց որի դատավորները չեն կարողանա ապահովել գործով նորմալ բանավոր, բաց ու անմիջական ապացույցների հետազոտություն և տալ այդ ապացույցների համարժեք գնահա-

¹ Տե՛ս Рене Д., Жоффре-Спинози К. Основные правовые системы современности. Пер. с фр. М., 2011, с. 21.

տական՝ սեփական ներքին համոզման հիման վրա: Մրցակցությանը, որը բնորոշ է հատկապես արդարադատության անգլոսաքսոնական համակարգի համար, հակադրում է արդարադատության հետախուզական տեսակը, որի ժամանակ քննության և արդարադատության մարմինների ձեռքերում միաժամանակ գտնվում են «դատական բնույթի իրավասությունները, որոնք կապված են գործով որոշում ընդունելու հետ»²: Ընդունված է համարել, որ արդարադատության ժամանակակից համակարգով երկրներում ամենուրեք, ներառյալ Եվրոպան, գերիշխում են մրցակցային սկզբունքները, սա-

լայուն իրավունքի տարբեր ճյուղերի կոդիֆիկացման հիմնական նմուշները տվել են Ֆրանսիան ու Գերմանիան: Ֆրանսիայում կոդիֆիկացումն ավարտվեց 1804 թ. Քաղաքացիական օրենսգրքի (այդպես կոչված **Նապոլեոնի** Օրենսգրքի) և 1810թ.-ին՝ Քրեական օրենսգրքի ընդունմամբ, որոնք եական ազդեցություն են գործել Եվրոպայի մնացած մայրցամաքային երկրներում և աշխարհի այլ մասերի երկրներում նմանատիպ օրենսդրության ձևավորման վրա: Գերմանիայում՝ դրա տրոհվածության պատճառով մինչև 1870թ. կոդիֆիկացումը ձգձգվել է. Քրեական օրենսգիրքն ընդունվեց միայն

«...Արդարադատության անգլոսաքսոնական և մայրցամաքային համակարգերի ջրբաժանն անցնում է մրցակցային ու հետախուզական դատավարության միջև սահմանով...»

1871թ. մայիսի 15-ին, ընդ որում դրան ախորդաները՝ 1851թ. պրուսական Քրեական օրենսգիրքը, որը կրել է Ֆրանսիայի Քրեական օրենսգրքի ուժեղ ազդեցությունն ու 1870թ. Յուսիսա-

կայն պահպանվում են նաև հետախուզական ոչ պակաս կարևոր տարրերը /որոնք հատկապես նկատելի են գերմանական քրեական գործընթացում/:

յին Գերմանական միության Քրեական օրենսգիրքը նույնպես մեծապես ուշացել են: Գերմանիայի Քրեական օրենսգիրքն ընդունվել է միայն 1877թ.-ին, իսկ ուժի մեջ է մտել 1890թթ.-ի վերջում: XIX դ. վերջում ուժի մեջ մտան Գերմանական քաղաքացիական գրությունն ու Գերմանիայի Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը:

Արդարադատության մայրցամաքային համակարգը, ինչպես նշեցինք, ընդգրկում է ողջ մայրցամաքային Եվրոպան: Առաջին հերթին այն ներկայացված է Ֆրանսիայում և Գերմանիայում /ինչի պատճառով այն երբեմն անվանում են ռոմանագերմանական/: Այն լիովին պատշաճ կերպով են ներկայացնում Իտալիան ու Իսպանիան, Ավստրիան և Լեհաստանը, ինչպես նաև Ռուսաստանը, Հայաստանը, Վրաստանը և այլն:

Այդպիսի ուշացումն ունի նաև դրական կողմ: Ինչպես նշում էր **Ռ. Դավիթը**, «այն ժամանակաշրջանում, երբ ֆրանսիացի իրավաբանները զբաղվում էին իրենց տեքստերի մեկնաբանմամբ, գերմանացի իրավաբանները շարունակում էին աշխատանքը հռոմեական իրավունքի տեքստերի վրա: Գերմանիայում տիրապետող դարձավ մի նոր դպրոց՝ պանդեկտիստների դպրոցը, որը բերեց հռոմեական սկզբունքների համակարգման

² Տես. **Смирнов А. В.** Исторические формы уголовного процесса. СПб., 2002. С. 6.

շատ ավելի բարձր մակարդակ, քան նախկինում»³: Դրա հետևանքով Գերմանիայի օրենսգրքերն ազդել են այլ «գերմանական» պետությունների /Ավստրիայի, Շվեյցարիայի, Նիդեռլանդների, Դանիայի, Շվեդիայի և Նորվեգիայի/ քրեական օրենսդրության վրա՝ շատ ավելի քիչ, քան ֆրանսիական օրենսգրքերը: Գերմանական օրենսգրքերն էական ազդեցություն գործեցին միայն Ռուսաստանի օրենսդրության վրա, ինչը կարելի է բացատրել ինչպես նրանով, որ այդ երկրում իրավունքի ոլորտում լուրջ բարեփոխումները սկսվել են միայն ավատատիրության տապալման հետ, այսինքն XIX դ. երկրորդ կեսին, այնպես նաև նրանով, որ պատմական հանգամանքների բերումով իրավունքի ռուսաստանցի պրոֆեսորներն անցել են գերմանական, այլ ոչ թե ֆրանսիական դպրոցը:

Մայրցամաքային իրավունքի համակարգն աշխարհագրորեն ու պատմականորեն տարբերվում է անգլոսաքսոնական համակարգից նրանով, որ ի տարբերություն վերջինիս, այն չի թույլ տալիս դատական հսկողություն՝ երկրում կիրառվող օրենքների սահմանադրականության նկատմամբ: Իրավունքի մայրցամաքային համակարգի համար նորմերի ամբողջականությունը կազմում է իրավունքի հիմնական բովանդակությունը, իսկ անգլոսաքսոնականի համար՝ ոչ պակաս, կարևոր են նախադեպերը /հին դատական որոշումները/: Ընդ որում, նորմերի ամբողջությունն արժեքավոր է ոչ միայն ինքն իրենով՝ իբրև որոշակի կանոնների ժողովածու, այլև իբրև մեկնաբանման ու կիրառման առարկա:

Նորմերի ամբողջականությունը ժամանակ առ ժամանակ փոխվում է: Եվ

դրանում զարմանալի ոչինչ չկա՝ իրավաբանի համար չկա ավելի բնական բան, քան նոր նորմերի հետ ծանոթանալն ու դրանց յուրացնելը: Սակայն իրավաբանի համար շատ ավելի կարևոր է հասկանալ նորմերի ամբողջականության ներքին կառուցվածքը, որոնք գործում են պետության մեջ, նրանց միջև փոխգործությունը, օրինաստեղծության տերմինաբանությունը, որը թույլ է տալիս հասկանալ նորմատիվ նոր կարգավորման իմաստն ու նշանակությունը և դրա հիման վրա կառուցել գործունեություն՝ գործանականում նորմերի կիրառման գծով: Այս բոլոր տարրերը գտնվում են նորմերի տեքստի սահմաններից դուրս, սակայն դրանք անփոփոխ են ու դրանց վրա է հիմնվում իրավակիրառությունը: Շճմարիտ է **Ռ. Դավիթյանը**, երբ ամերիկյան իրավաբան **Ռ. Պանոնի** հետևից մատնանշում է այն տարրերի նշանակությունը, որոնք կանգնած են իրավունքի նորմերի հետևում: «Այդ տարրերի առկայությունը թույլ է տալիս խոսել իրավունքի՝ որպես գիտության մասին, և հնարավոր է դարձնում իրավաբանական կրթությունը»⁴: Այս՝ ավելի մշտական, քան նորմերը, տարրերի միջոցով անցկացվում է իրավունքի մայրցամաքային ու անգլոսաքսոնական համակարգերի միջև հիմնական սահմանազատումը:

Իրավունքի մայրցամաքային համակարգը ձևավորվում էր Եվրոպայում սկսած XII դ.-ից՝ հայտնի կողմից կազմման վրա, որն անցկացվել է բյուզանդացի կայսեր Յուստինիանոսի կողմից: Ընդգ-

«...Եվրոպայի տարրեր երկրներում գլխավորող դերը վաղուց ի վեր հատկացվում է գրված օրենքին, այլ ոչ թե դատավորների կողմից ստեղծվող դատական նախադեպերին...»

³ Давид Р., Жоффре-Спинози К. Նշված աշխ., էջ 54.
⁴ Давид Р., Жоффре-Спинози К. Նշված աշխ., էջ 20.

ծենք, որ այն չէր զարգանում թագավորների անուր քաղաքական իշխանության և նրանց հովհանու ներքո ուժեղ կենտրոնացված թագավորական դատարանների հիման վրա, ինչպես անգլոսաքսոնական համակարգը, այլ կառուցվում էր XIII դ.-ից Եվրոպայում ստեղծվող համալսարանների կողմից, որոնք, դարերի ընթացքում, մանրակրկիտ մշակել են «գիտնականների իրավունքը», որն ընդհանուր է դարձել միմյանցից բավականաչափ տարբերվող մայրցամաքային Եվրոպայի երկրների համար⁵: Այս համալսարանները սովորեցնում էին, որ քաղաքացիական հասարակությունը պետք է կառավարի իրավունքը, հասկանալով հռոմեական իրավունքը, որն նրանց համար աշխարհում լավագույնն էր: Անգամ այն պայմանով, որ իրենց հաջողվում էր դրա մեջ հանդել

տական պրակտիկան /առնվազն՝ ձևականորեն/ չի համարվում իրավունքի աղբյուր: Այստեղ, անհրաժեշտ է նշել դրա նկատմամբ դատարանների երբեմն բարյացակամ վերաբերմունքը, սակայն այնուամենայնիվ, եթե խոսենք սկզբունքորեն, ապա իրավունքի մայրցամաքյին համակարգի երկրները ձգտում են նրան, որպեսզի դատավորը չդառնա օրենսդիր:

Իսկ իրավունքի անգլոսաքսոնական ընտանիքի երկրներում դատական փորձը, որն անգամ հետ է մեղվել վերջին տասնամյակներին պառլամենտական ակտ-ստատուտներով /օրենքներով/ դեռևս մնում է իրավունքի շատ կարևոր աղբյուր:

Մայրցամաքային համակարգի երկրներում արդարադատության համակարգի գործառնության մեկ այլ կարևոր սկզբունք է հանդիսանում անհատական մեղքի նկատմամբ քրեական պատասխանատվությունը, ինչը, խիստ ասած, բացառում է իրավաբանա-

«...Իրավաբանի համար չկա ավելի բնական բան, քան նոր նորմերի հետ ծանոթանալն ու դրանց յուրացումը...»

կառավարիչներին, դատավորներին ու երկրի բնակչության մեծ մասին: «Գիտնականների իրավունքի» գաղափարների ընկալման սահմանները Եվրոպայի յուրաքանչյուր առանձին երկրում և աշխարհի այլ մասերում շատ տարբեր էին: Այնուամենայնիվ նրանց կողմից առաջարկվող մոդելը վաղ թե ուշ դարձավ գործող իրավունք Եվրոպայի բոլոր երկրներում:

Մեր ժամանակներում իրավունքի մայրցամաքային համակարգը հանդիսանում է, աշխարհում ամենատարածվածը, ներառյալ Եվրոպական գերիշխանության տակ երբեք չգտնված երկրները:

Քանի որ մայրցամաքային համակարգի երկրներում արդարադատության կարևորագույն սկզբունք է հանդիսանում դատավորների ենթարկվածությունը միայն օրենքին /դատավորական անկախության սկզբունք/, ապա այդ ժամանակ դա-

կան անձանց քրեական պատասխանատվության թույլատրելիությունը: Ճիշտ է, այս գաղափարն ակտիվորեն զարգանում է Եվրոպայում, հատկապես Եվրամիության մարմինների և միջազգային կոնվենցիաների գործունեության շնորհիվ, որոնք կազմվում են ամերիկյան ու բրիտանացի իրավաբանների զգալի ազդեցության ներքո: Դա հանգեցրել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հայեցակարգի ընդունմանը Ֆրանսիայի կողմից /1992թ./ և մի փոքր ավելի շուտ՝ Նիդեռլանդների կողմից, իսկ վերջին ժամանակներում՝ Բելգիայի, Լեհաստանի ու Իսպանիայի կողմից: Սակայն Ռուսաստանը, Գերմանիան, Իտալիան ու արևելյան և հարավ-արևելյան Եվրոպայի բազմաթիվ երկրներ դեռևս մնում են այս գաղափարի սկզբունքային ընդդիմախոսներ:

⁵ Նույն տեղում, էջ 34:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԸՆԿԱԼՄԱՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Մանուկ ՍՈՒՐԱԳՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Իրավունքի գերակայության սկզբունքը հանդիսանում է ժամանակակից ժողովրդավարական, իրավական պետության սահմանադրական կարգի ընդհանուր հիմունքների կարևորագույն հատկանիշներից մեկը¹: Այն որքան արդիական ու պահանջված, նույնքան դեռևս համարժեք չընկալված ու գործնականում պատշաճ կիրառում չստացած իրավական երևույթ է: Ցավոք, այն մեկնաբանվում է անհարկի սահմանափակ և հաճախ բավարարվում են զուգահեռներ անցկացնելով օրենքի գերակայության սկզբունքի հետ², որի պատճառներից է նաև իրավաընկալման հիմնախնդիրը:

Խորհրդային տարիներին իրավունքի վերաբերյալ գոյություն ունեցող գիտական մոտեցումներն էապես տարբերվում են հետսոցիալիստական հասարակությունում օբյեկտիվ իրավունքի և մասնավորապես վերջինիս գերակայության մասին պատկերացումներից³:

Իրավունքի և օրենքի նույնացման սխալական դիրքորոշումն է իրավունքի գերակայությունը օրենքի գերակայության տիրույթում տեսնելու կամ, առհասարակ, իրավունքի գերակայության գաղափարը չնդունելու պատճառը:

Ըստ էության, իրավունքի գերակայության սկզբունքի տեսական հիմնահարցը պայմանավորված է իրավունքի հասկացությամբ⁴: Սակայն սույն հոդվածի շրջանակներում խնդիր չունենք անդրադառնալ իրավունքի հասկացությանը և վերջինիս հատկանիշների ամբողջական վերլուծությանը: Առավելապես նպատակ ենք հետապնդում ընդգծել օբյեկտիվ իրավունքի էությանը պայմանավորված

իրավունքի գերակայության սկզբունքի տեսական և կիրառական նշանակությունը: Այս իմաստով, իրավունքի գերակայության մասին գիտական փնտրտուքները, մեր գնահատմամբ, անհրաժեշտ է տանել հատկապես իրավունքի կամային հատկանիշի վերաբերյալ դատողությունների լույսի ներքո:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի այն կարծիքը, որ իրավունքի հասկացությունը և էությունը անմիջականորեն կապված է կամքի հետ՝ որպես երևույթ: Մասնավորապես, կամք ասելով հասկացվում է հասարակական կամքը, պետական կամքը, անհատական կամքը և այլն: Եվ դա խիստ բնական է,

¹ **Погребняк С.П.** Основоположні принципи права (змістовна характеристика): Монографія. — Х.: Право. — С. 148.

² **Ա. Լ. Ասատրյան** Իրավունքի գերակայության սկզբունքը արդի իրավական համակարգի խորապատկերում / Եր.: Հայրապետ հրատ., 2013 թ., էջ 5

³ **Алексеев С. С.** Восхождение к праву. Поиски и решения. М., 2001. С. 89-98; **Керимов Д. А.** Проблемы общей теории права и государства. М., 2001. Т. 1. 43-56

⁴ **Ա. Լ. Ասատրյան** Իրավունքի գերակայության սկզբունքը արդի իրավական համակարգի խորապատկերում / Եր.: Հայրապետ հրատ., 2013 թ., էջ 33

քանզի իրավունքը սկսում է գործել, երբ առկա է կամքը, որն իրենում ներառում է մարդկանց, հասարակության պահանջ-մունքները և շահերը⁵:

Ն. Գ. Ալեքսանդրովի գնահատմամբ իրավունքի կամային բնույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն հասցեագրված է հասարակական հարաբերությունների մասնակիցների ազատ կամքին և իմաստ ունի միայն այն դեպքում, երբ հասցեատերն ունի վարքագծի ազատ ընտրության հնարավորություն⁶: Նույնիսկ Հին աշխարհում փորձեր էին կատարվում որոշակիացնել մարդկանց վարքի վրա իրավունքի ազդեցության միջոցները: Հռոմեացի իրավաբան **Սողեստիանոսն** իրավունքի գործողությունը բնորոշելիս հասկանում էր վերջինիս հնարավորությունը ենթարկեցնել, արգելել, թույլատրել, պատժել⁷:

Իրավաստեղծման ընթացքում իրավունքի կամային բնույթի վերաբերյալ հետաքրքրական է **Օ. Է. Լեյստի** այն մոտեցումը, որ այն չպետք է կապել միայն մարդկանց կամային վարքի վրա ազդեցության միջոցների հետ: Ըստ հեղինակի, չափազանց կարևոր՝ իրավունքի կամային բնույթ ասելով հասկանալ նաև օրենսդրի կողմից՝ իրավունքի նորմեր ստեղծելիս մարդկանց վարքի վրա ազդեցության միջոցների ընտրության հնարավորությունը⁸: Ինչպես տեսնում ենք, հեղինակն իրավունքի կամային բնույթը կապում է օրինաստեղծման ընթացքում վերը նշված ազդեցության միջոցների ընտրության հետ: Արժևորելով հեղինակավոր տեսաբանի կարծիքը, գտնում ենք, որ էապես կարևորվում է նաև այն հանգա-

մանքը, թե ինչ մեխանիզմների գերկայության պայմաններում պետք է ձևավորվի օրինաստեղծման արդյունքը: Այս իմաստով՝ օրինաստեղծի հայեցողությունը պետք է սահմանափակված լինի իրավունքի օբյեկտիվ եությունից բխող նրա գերակայությամբ՝ իրավունքի օբյեկտիվ կամքով: Պետական կամքն իրավունք չունի շրջանցել իրավունքի եությունից բխող վերջինիս օբյեկտիվ կամքը: Թեև ժամանակից պետությունը հանդիսանում է ազատության որոնման արդյունք և այդ ազատության երաշխավոր⁹, սակայն ազատության որոնումը միայն իրավունքի գերակայության պայմաններում պետությանը կարող է դարձնել իրավական:

Կասկածից վեր է այն, որ որքան էլ իրավունքի եությունից բխող վերջինիս գերակայությունը համարենք օբյեկտիվ անհրաժեշտություն, պարզ է, որ առանց հանրային իշխանության մարմինների գործելակերպի հիմքում քննարկվող գաղափարն արմատավորելու, հնարավոր չէ ապահովել իրավունքի առաջնայնությունը պետության և նրա մարմինների նկատմամբ: Կարծում ենք, որ իրավունքի կամային բնույթը չպետք է կապել միայն միջոցների ընտրության հնարավորության հետ: Կարևոր է նաև, որ այդ միջոցները համապատասխանեն իրավունքի եությանը, բխեն այն արժեհամակարգերից, որոնց կառուցման համար բազային է իրավունքի գերակայությունը:

Արժևորելով վերը նշված հեղինակների դատողությունները և առանց վարանելու կարևորելով մարդկանց կամքի վրա իրավունքի ազդեցության անհրաժեշտությունը, գտնում ենք, որ իրավունքի կա-

⁵ **Рассолов М. М.** Актуальные проблемы теории государства и права: Уч. пособие для студентов вузов / **М.М. Рассолов, В.П. Малахов, А.А. Иванов.** — 2-е издание, перераб. и доп. — М.: ЮНИТИ — ДАНА: Закон и право, 2011. С. 154

⁶ **Александров Н. Г.** Сущность права. М., 1950. С. 35-36.

⁷ Дигесты **Юстиниана.** М., 1984. С. 32

⁸ **О. Э. Лейст.** Сущность права. Проблемы теории и философии права. — М.: ИКД «Зерцало-М», 2002. С. 23

⁹ **Մ. Հ. Սուրադյան.** Մարդու իրավունքների առաջնայնությունը որպես իրավական պետության կառուցողական սկզբունք. «Օրենք և իրականություն», 2009, N 2 (160), էջ 15-17:

մային բնույթ ասելով պետք է հասկանալ ոչ միայն նման ազդեցությունը, և կամ դրանց միջոցների ընտրության հնարավորությունը, այլև իրավաստեղծ և իրավակիրառ սուբյեկտների կողմից իրավունքի էությունից, նրա «օբյեկտիվ պարտադրանքից» բխող վերջինիս գերակայությամբ պայմանավորված նորմատիվ և ինստիտուցիոնալ մեխանիզմների սահմանումը /ստեղծումը/ և դրանց իրացումը: Խոսքն այս պարագայում գնում է, ոչ թե իշխանական՝ սուբյեկտիվ, այլև իրավունքի օբյեկտիվ կամքի իրացման մասին:

Այլ կերպ ասած, իրավունքի կամային բնույթ ասելով պետք է հասկանալ իրավունքի կողմից պետությանը իրավունքի էությունից բխող պահանջները «թելադրելու հնարավորությունը»: Այս տեսնակյունից արժեքավոր պետք է համարել Ուկրաինայի Սահմանադրական Դատարանի 2004 թվականի թիվ 15 - րդ / 2004 որոշումը: Համաձայն Ուկրաինայի ՍԴ-ի իրավական դիրքորոշման՝ **«իրավունքի գերակայությունը՝ իրավունքի առաջնայնությունն է հասարակությունում: Իրավունքի գերակայությունը պահանջում է պետությունից իրավունքի իրական արտահայտություն իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության մեջ, մասնավորապես օրենքներում, որոնք իրենց էությամբ պետք է խարսխված լինեն սոցիալական արդարության, ազատության, հավասարության և այլ սկզբունքների վրա»¹⁰:**

Չափազանց կարևոր է նաև այն հարցադրումը, թե ինչպիսին է իրավունքի գերակայության հարաբերակցությունն իր

էությունից բխող օբյեկտիվ կամքի պոզիտիվ արտահայտիչների հետ: Կասկածից վեր է այն հանգամանքը, որ այդ համակարգում առանջնային տեղ են զբաղեցնում նախ Սահմանադրությունը՝ որպես ժողովրդի կողմից ընդունված՝ իրավունքի գերակայությունը կամ դրա առանձին դրույթներն արտահայտող հիմնական օրենք, իսկ հետո միայն՝ օրենքները:

Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ երբեմն իրավունքի գերակայության սկզբունքը նույնացվում է Սահմանադրության և /կամ/ օրենքի գերակայության հետ: Սահմանադրության /օրենքի/ գերակայության հիմնահարցը, անկասկած, բխում է իրավունքի գերակայության սկզբունքից, սակայն հաստատակամորեն կարելի է փաստել, որ իրավունքի գերակայությունը և Սահմանադրության և /կամ/ օրենքի գերակայությունը պետք չի դիտարկել որպես հոմանիշներ, այլ վերջինս իրավունքի գերակայության սկզբունքի տարրերից է¹¹: Եթե Սահմանադրության /այսուհետ՝ նաև օրենքի/ գերակայությունը, որը պետության հիմնական օրենքն է, նույնացվում է իրավունքի գերակայության հետ, ապա ստացվում է, որ իրավունքը և օրենքը¹² իրարից տարբերվում են միայն իրավաբանական ուժով: Կարծում ենք, որ երբեք չի կարող տարբերության հարց դրվել իրավունքի և օրենքի միջև իրավաբանական ուժի տեսանկյունից, քանզի մի կողմից իրավունքը, մյուս կողմից Սահմանադրությունը, որպես երկրի հիմնական օրենք և մնացած օրենքները քննարկվող համատեքստում հարաբերակցվում են բովանդակությանը և ձևին: Օրենքը /պոզիտիվ

¹⁰ http://www.juristlib.ru/book_7601.html

¹¹ Սահմանադրական այն նորմերը, որոնք հռչակում են, որ հիմնական օրենքն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, որ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությանը և օրենքներին, նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով, հանդիսանում են իրավունքի գերակայության սկզբունքի սահմանադրական պահանջների մի մասը:

¹² Սահմանադրությունը, որպես հիմնական օրենք և օրենսդիր մարմնի կողմից, որոշ պետություններում նաև, օրինակ՝ ՉՉ-ում, հանրաքվեի ճանապարհով ընդունված օրենքները:

իրավունք/՝ իրավունքի իրացման ձևի կարգավիճակում կարող է լինել իրավական երևույթ: Բացառապես իրավունքի օբյեկտիվ հատկանիշների արտահայտման ձևն է օրենքին դարձնում իրավական օրենք¹³:

Սահմանադրության գերակայությունը, վերջինիս և օրենքի ընդունման և փոփոխման հատուկ ընթացակարգերը, այլ ակտերի համապատասխանությունը օրենքին և այլն. սրանք հասկացություններ են, որոնց մասին կարելի է խոսել ոչ թե որպես իրավունքի գերակայության հոմանիշներ, այլև ընդհանենը՝ Սահմանադրության՝ օրենքների և օրենքների՝ այլ նորմատիվների նկատմամբ գերակայության հարթությունում: Այս տեսանկյունից անկյունաքարային է պրոֆեսոր **Գ. Դանիելյանի** այն դիտարկումը, որ իրավունքի գերակայության դեպքում խնդիրը պետք է նեղացնել և կապել միայն իրավական ակտերի ստորադասության հետ¹⁴:

Եթե Սահմանադրությունը, առավել ևս սովորական օրենքը և իրավունքի գերակայությունը նույնացնում ենք, ապա առաջ ենք քաշում Սահմանադրության /նաև օրենքի/՝ իրավունքի օբյեկտիվ էության չափորոշիչների պարունակման տեսանկյունից կատարյալ լինելու կանխադրույթը: Սակայն և Սահմանադրության մեջ, և սովորական օրենքներում հանդիպում ենք նորմատիվների, որոնք ուղղակի չեն բխում իրավունքի գերակայության պահանջներից, չեն արտահայտում իրավունքի՝ որպես օբյեկտիվ արժեքի էու-

թյունը: Նման նույացման պայմաններում ստացվում է, որ իրավունքի գերակայությունը ինքն իրենում ունի լուրջ խնդիրներ: Նման պայմաններում հնարավոր չէ խոսել իրավունքի գերակայության արժեքայնության և կարևորության մասին: Սահմանադրությունը /օրենքը/, լինելով մարդակերտ, կարող է շեղվել իրավունքի **օբյեկտիվ /ընդգծումը Մ. Մ/** էությունից, որը նրան դարձնում է ոչ իրավական բնույթ ունեցող Սահմանադրություն՝ հակիրավական, կամայականության Սահմանադրություն, որն էլ չի կարող բխել իրավունքի էությունից¹⁵ և արտահայտել իրավունքի օբյեկտիվ կամքը:

Ավելին, գտնում ենք, որ իրավունքի գերակայության երաշխավորման և ապահովման տեսանկյունից էապես կարևորվում է ոչ թե ձևական իմաստով երկրի հիմնական օրենքի գոյության գործոնը, այլև պետությունում սահմանադրականության մակարդակը: Այս տեսանկյունից խիստ արժեքավոր է պրոֆեսոր **Գ. Չարությունյանի** դիրքորոշումը: Մասնավորապես, նշվում է, որ սահմանադրականությունը, ինչպես և իրավունքը օբյեկտիվ սոցիալական իրականություն է: Իրավական պետությունում իրավունքը որպես էություն և երևույթ բնութագրվում է հատկապես սահմանադրականության մակարդակով: Դրանով է բացատրվում նաև իրավունքի և օրենքի դիալեկտիկական, Սահմանադրության /որպես երկրի հիմնական օրենք/ և սահմանադրականության հարաբերակցությունը¹⁶: Երկու դեպքում էլ խոսքը գնում է բովանդակության և ձևի մասին:

¹³ Проблемы общей теории права и государства. Учебник для вузов. Под общ. ред. Академика РАН, доктора юрид. наук, проф. **В. С. Нерсисянца**. — М.: Изд. НОРМА. 2001. С. 189

¹⁴ Մանրամասն տես՝ **Ա. Լ. Ասատրյանի**՝ իրավունքի գերակայության սկզբունքը արդի իրավական համակարգի խորապատկերում վերտառությամբ մենագրության առաջաբանում:

¹⁵ **Ա. Լ. Ասատրյան**՝ իրավունքի գերակայության սկզբունքը արդի իրավական համակարգի խորապատկերում / Եր.: Հայրապետ հրատ., 2013թ., էջ 103:

¹⁶ **Գ. Գ. Չարությունյան**. Սահմանադրությունը և սահմանադրականությունը նոր հազարամյակի սահմանադրական մշակույթի համատեքստում: «Նոր հազարամյակի սահմանադրականությունը. Իրականության պարադիգմները և մարտահրավերները» խորագրով անգլերենով տպագրության նախապատրաստվող միջազգային ժողովածուի համար նախատեսվող հայեցակարգային նշանակության հոդվածի էլեկտրոնային տարբերակից: էջ 15:

Սահմանադրության առկայությունը դեռևս չի նշանակում սահմանադրականություն: Սահմանադրականությունն է Սահմանադրությանը դարձնում իրավունքի ելքյան իրական արտահայտիչ:

Ոչ թե Սահմանադրության, որպես երկրի հիմնական օրենքի առկայությունն է արտահայտում իրավունքի գերկայությունը, այլև նրանում և նրանից դուրս առկա առանձին չափորոշիչները. օրինակ՝ սահմանադրական նորմերի անմիջական գործողությունը, մարդու իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական երաշխիքները, իրավունքով հանրային իշխանությունների հայեցողության սահմանման փակմանը վերաբերող նորմերը և այլն: Հետևաբար, պետությունն իրավունքի գերկայության ապահովմանն ուղղված քաղաքականությունն մշակելիս պետք է շեշտադրում կատարի օրինականության ռեժիմի¹⁷, իրավական որոշակիության սկզբունքի¹⁸ և օրենքների միատեսակ կիրառության ապահովման¹⁹, կամայականությունների բացառման, արդար և անաչառ դատարաններում արդարադատության մատչելության /այդ թվում նաև սահմանադրական դատավարության/, օրենքի առջև բոլորի հավասարության և մարդու իրա-

վունքների պաշտպանության իրական մեխանիզմների ստեղծման և իրացման վրա:

Եթե իրավունքի գերկայությունը կապում ենք Սահմանադրության՝ որպես երկրի հիմնական օրենքի ձևական գոյության փաստի հետ, հարց է առաջանում. առանձին պետություններում, որտեղ չկան գրված կոդիֆիկացված սահմանադրություններ /օրինակ՝ Մեծ Բրիտանիա/, չկա՞ իրավունքի գերկայություն: Սահմանադրության գոյությունը ինքն իրենով խնդիրներ չի լուծում: Կարևոր են համարվում իրավունքի գերկայությունը երաշխավորող սահմանադրական և այլ օրենսդրական լուծումները²⁰:

Սահմանադրական բարեփոխումներն էականորեն բարելավեցին իրավունքի գերկայության դիրքերը, սակայն հիմնախնդրի լուծման տեսանկյունից բավականին մեծ են անելիքները՝ իրավունքի գերկայության հայեցակարգը հանրային իշխանության մարմինների գործունեության և անձի սոցիալական վարքագծի հիմքում տեսնելու համար: Իրավունքի գերկայությունը ոչ թե պետք է տեսնել առանձին նորմերի մեջ, այլև այն պետք է ընկած լինի մարդու, հասարակության և պետության արժեհամակարգերում²¹:

¹⁷ Пашин С. А. Судебная реформа и суд присяжных. М., 1995. - 77 с.

¹⁸ Jeffrey Jowell, The Rule of Law and its underlying Values, in: Jeffrey Jowell/Dawn Oliver (Eds.), The Changing Constitution (6th edition), стр. 10.

¹⁹ Морщакова Т. Г. Верховенство права и конституционные основы единообразия судебного правоприменения // Верховенство права и проблемы его обеспечения в правоприменительной практике: Международная коллективная монография. М., 2009.С.301.,<http://for-euro-court.narod.ru/bsobres.htm>., напр. (Brumărescu v.Romania [GC], no. 28342/95, § 61, ECHR 1999-VII).

²⁰ Арутюнян Г. Г. Конституционализм: уроки. вызовы, гарантии: сб. избр. Публ. И выступлений на междунар. Форумах, посвящ. дан. проблематике / Г.Г. Арутюнян. — К.: Логос, 2011, с. 13.

²¹ Joseph Raz, 'The Rule of Law and its Virtue', in Joseph Raz, The Authority of Law – Essays on Law and Morality, Oxford, Clarendon Press, 1979, at 225-226.

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ ՓԱՍՏԱԲԱՆ-ՎԱՏԱՀՈՐԴ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գոհար ԳԵՎՈՐԳՅԱՆ

Փաստաբան

«Պաշտպանը, ավելի քան դատավարության մյուս մասնակիցները, պարտավոր է հարգել իր պաշտպանյալի արժանապատվությունը, պաշտպանել նրա ինքնասիրությունը և հանդես գալ նրա պաշտպանության օգտին: Պաշտպանը մեղադրյալի ընկերն է, խորհրդականը»¹:

Մարդկային հասարակության ձևավորման առաջին օրերից հասարակության անդամների միջև ձևավորվել են որոշակի հարաբերություններ, որոնք ենթարկվել են սոցիալական կարգավորիչների՝ սովորույթների, ավանդույթների, արարողակարգերի, կրոնական պատվիրանների, բանավոր ասացվածքների, լեգենդների, բարոյականության, իրավունքի նորմերի ազդեցությանը: Այս սոցիալական կարգավորիչները, բացի հիմնական կարգավորիչ գործառնություններից, կատարում են նաև գնահատողական գործառնություններն ու իրադարձությունները գնահատում որպես բարի և չար, արժանի ու անարժան, արդար ու անարդար, անդրադառնում պարտքին, պատասխանատվությանը, պատվին ու արժանապատվությանը և այլն: Իսկ այստեղ առաջնային են հենց բարոյական նորմերը: Ինչպես բնորոշում է Ա.Ն. Կոբլիկովը. «Բարոյականության նորմերը սոցիալական նորմեր են, որոնք կարգավորում են հասարակության մեջ մարդու վարքագիծը, նրա հարաբերություններն այլ մարդկանց ու հասարակության հետ: Դրանց կատարումն ապահովվում է հասարակական կարծիքի, ներքին համոզվածության ուժով՝ հիմնված բարու և չարի, արդարի ու անարդարի, բարեգործության ու մեղքի, անհրաժեշտի ու քննադատելի վերաբերյալ տվյալ հասարակության պատկերացումների վրա»²: Իսկ առավել բարձր բարոյական պահանջների անհրաժեշտությունը, հետևաբար և հատուկ մասնագիտական բարոյականության անհրաժեշտությունը, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, առաջին հերթին վերաբերում է բժշկական, իրավաբանական, մանկավարժական, գիտական, լրագրողական և գեղարվեստական գործունեության տեսակներին, այսինքն, այն բնագավառներին, որոնք անմիջականորեն կապված են անհատի դաստիարակության ու պահանջմունքների բավարարման հետ:

Իրավաբանական էթիկայի տեսակներից փաստաբանական էթիկան միշտ էլ եղել է գիտնականների ու պրակտիկ աշխատողների ուշադրության կենտրոնում: Դա հավանաբար բացատրվում է նրանով, որ փաստաբան-

նի գործունեության ընթացքում առավել հաճախ և արտահայտված, քան իրավաբանի ցանկացած այլ տեսակի գործունեության ընթացքում, առաջանում են իրավիճակներ, որոնց ճիշտ լուծումը կախված է ոչ միայն

¹ Տե՛ս, **Кобликов А.С.** Юридическая этика. Учебник для вузов. Москва, 1999, էջ 130:

² Տե՛ս նույն տեղում, էջ 6:

իրավական նորմերի պահանջները, այլև առաջին հերթին հենց բարոյական նորմերի ու սկզբունքների պահանջները պահպանելուց: Տիրապետելով հատուկ գիտելիքների՝ փաստաբանը կարող է ծառայեցնել դրանք իր շահերին՝ օգտագործելով իրեն դիմող անձանց վստահությունն ու անփորձությունը: Մինչդեռ փաստաբանից սպասում են, որ նա պետք է ծառայություններ մատուցի ու պաշտպանի նույնիսկ այն մարդկանց, ովքեր ոչ միշտ են կարող իրեն վարձատրել: Նա պետք է աշխատի այնքան, որքան պահանջում է իր մասնագիտական պարտքը, աշխատի օրվա ցանկացած ժամի, լինի ավելի կարգապահ, զերծ մնա անարժան քայլերից, իր բարոյական վարքագծով օրինակ ծառայի այլոց համար, իր մասնագիտությունն ու դիրքը չչարաշահի հանուն գերշահույթի: Հասարակության մեջ փաստաբանության հեղինակության բարձրացման ու ամրապնդման համար փաստաբաններից պահանջվում է էթիկայի նորմերի խստագույնս պահպանում նաև վստահորդի հետ հարաբերություններում, քանի որ, ինչպես Նիցշեն է ասել. «**Հանցագործների դեմ մեր հանցագործությունը նրանց՝ որպես սրիկաների վերաբերվելն է**»³: Վստահորդի հետ հարաբերություններում փաստաբանի առաջին իսկ խնդիրը նրա նկատմամբ հարգանքն է ու վստահությունը: Ընդ որում, փաստաբանն իր վարքագծով պետք է հասնի նաև նման վերաբերմունքի իր վստահորդի կողմից իր նկատմամբ: Միայն նման հարաբերությունների պայմաններում կարելի է հասնել լիակատար պաշտպանության ու վստահորդի շահերի ամբողջական ապահովման: Վստահորդի ներկայացրած փաստերը փաստաբանը կարող է ներկայացնել այլ հարթությունից, օգտագործել դրանք ի շահ վստահորդի, բայց հենց որ այդ միջոցներն անցնեն «օրինականի» սահմանները, փոխվեն դրանց գույները, «կխախտվեն խաղի կանոնները»: Վստահորդի հետ հարաբերությունների առաջին իսկ պահից փաստաբանը պարտավոր է բացատրել նրան «խաղի կանոնները»՝ նշելով դրանց խախտելու

հետևանքները: Դրա համար նախ պետք է պարզել՝ փաստաբանն իրավունք ունի՞ ընդունել վստահորդի հանձնարարությունը: Փաստաբանության մասին ՀՀ օրենքի /այսուհետև՝ *Օրենք*/ 20-րդ հոդվածի համաձայն նա այդ իրավունքը չունի, եթե հանձնարարությունն ակնհայտ անօրինական բնույթ է կրում, վստահորդի հետ կնքած պայմանագրի առարկայի շուրջ փաստաբանն ինքնուրույն շահ ունի, որը տարբերվում է վստահորդի հետապնդած շահից, առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդի շահերի միջև, տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա, ինչպես նաև եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը, ազգակցական, անձնական կամ կախյալ հարաբերությունների մեջ է գտնվում այն պաշտոնատար անձից, որը մասնակցել կամ մասնակցում է տվյալ գործի քննությանը, պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը: ՀՀ փաստաբանի վարքագծի կանոնագիրքն /այսուհետև՝ *Կանոնագիրք*/ այս հիմքերին ավելացնում է, որ փաստաբանը պետք է նկատի ունենա հանձնարարությունը կատարելու իր մասնագիտական հնարավորությունները, չպետք է ընդունի հանձնարարությունը, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը /13-րդ հոդված/: Այս հիմքերից բացի որպես հանձնարարության կատարումը մերժելու հիմք տեսական գրականության մեջ նշվում է նաև այն դեպքը, երբ փաստաբանը վստահ է, որ տվյալ գործով ինքը կարող է հարցաքննվել որպես վկա⁴: Պետք է ավելացնել, որ այս դեպքում փաստաբանը պետք է հաստատապես համոզված լինի դրանում, դա չպետք է կապված լինի փաս-

³ Տե՛ս, **Ницше Ф.** По ту сторону добра и зла. —М.; Харьков, 1999. — С. 65: Մեջբերումն ըստ **Баев О.Я.** Тактика уголовного преследования и профессиональной защиты от него, Москва, 2008, էջ 556:

⁴ Տե՛ս, օրինակ, **Барцевский М.** Адвокатская этика, 2-е издание, исправленное, Москва, 2000, էջ՝ 71: Կամ **Буробин В.Н.** Адвокатская деятельность, изд. 2-ое, переработанное, Москва, 2003, էջ 174:

տաբանական գաղտնիքի հետ և, ինչպես **Ա. Բոյկովն** է ասում, նա պետք է գիտակցի, որ «...այդ գործով կարող է լինել անփոխարինելի վկա»⁵: **Դ.Պ. Վատմանը** նշում է, որ այն դեպքում, երբ ստանձնած հանձնարարությամբ փաստաբանի դիրքորոշումը պետք է հիմնվի օրենքի այնպիսի մեկնաբանության վրա, որի մասին իրավաբանական գրականության մեջ նախկինում փաստաբանը բացասական կարծիք է հայտնել, նա իրավունք չունի ընդունել հանձնարարությունը⁶: Սակայն սա չի կարող միանշանակ արգելք լինել. հնարավոր է, որ փաստաբանը հետագայում փոխած լինի իր դիրքորոշումը, կամ օրենքի մեկնաբանության վերաբերյալ ուժի մեջ մտած լինի վերաքննիչ դատարանի նախադեպային որևէ որոշում և այլն: Վերը նշված հիմքերը չեն վերաբերում օրենքի այն բացերին և թերություններին, որոնց վերաբերյալ ժամանակին փաստաբանն արտահայտել է իր կարծիքը, քանի որ վստահորդի օրինական շահերի պաշտպանության իրականացումը օրենքի բացերի օգնությամբ չի հակասում ո՛չ օրենքին, ո՛չ փաստաբանական էթիկային⁷: Այսպիսով, բացի վերը նշված դեպքերից, փաստաբանը միշտ պարտավոր է իրեն դիմած անձին ցույց տալ իրավաբանական օգնություն՝ անկախ այդ անձի անձնական հատկանիշներից, կատարած հանցագործության բնույթից և այլ հանգամանքներից: «Փաստաբանը, որը պաշտպանությունից հրաժարվում է մեղադրյալի հանդեպ ունեցած անձնական հայացք-

ների պատճառով, այդ թույլի դառնում է դատավոր, որը մեղադրում է անձին մինչև դատավճռի կայացումը և արդարադատության կշեռքին է նետում իր կարծիքի ողջ ծանրությունը, գուցե և սխալ, բայց իր էությամբ ծանրակշիռ կարծիք, քանի որ այն արտահայտվել է փաստաբանի կողմից: Սեփական ընտրությունը կանգնեցնել բացառապես ազնիվ պաշտպանության վրա, վերցնել միայն այն գործերը, որոնց հաջողության մեջ կասկած չկա, նշանակում է ինքն իր համար ստեղծել անհաղթահարելիության ինչ-որ ռեկորդ. սա կարող է մեկնաբանվել որպես սեփական սնափառության բավարարում և մրցավազք՝ հանուն զոլվազդի»⁸: Ինչպես **Ա. Լևին** է ասում, գործը ստանձնելիս փաստաբանն իրավունք չունի իրեն այս հարցը տալու. «Ինչու՞ ես պետք է աշխատեմ թեթևացնել այն մարդու ծակատագիրը, որը ծանրագույն հանցագործություն է կատարել, հատկապես եթե ես ամբողջովին համոզված եմ, որ նա այդ հանցագործությունը կատարել է, իսկ մեղմացնող հանգամանքները բացակայում են»: Իսկ եթե այնուամենայնիվ հարցը տրվում է, ապա պատասխանը պետք է լինի մեկը՝ դա է պահանջում իմ մասնագիտական պարտքը⁹: Ինչպես ֆրանսիական կանոններն են ասում. «Ցանկացած մեղադրյալ պաշտպանության իրավունք ունի, և ամեն մի պաշտպանություն /այսինքն՝ ցանկացած գործով/ բարոյական է»¹⁰:

⁵ Տե՛ս **Бойков А.Д.** Этика профессиональной защиты по уголовным делам. Москва, 1978, էջ 60:

⁶ **Ватман Д.П.** Адвокатская этика /нравственные основы судебного представительства по гражданским делам/, Москва, 1977, էջեր 114-115:

⁷ «Անմիտ ու ոչ պատվաբեր կլիներ վարվել այնպես, ինչպես այն փաստաբանը, ով օրենքը շրջանցելու համար միջոցներ է առաջարկում՝ նման հնագույն ժամանակների մտացածին փիլիսոփաներին, ովքեր հրապարակայնորեն իրենց պատրաստակամությունն էին հայտնում օգնելու հաղթել անարդար գործերը»: /Տե՛ս, **Молло М.** Правила адвокатской профессии во Франции, Москва, 1894, правило 5. Традиции адвокатской этики. Избранные труды российских и французских адвокатов /XIX - начало XX в./, Составители **Елисеев И.В., Панкратов Р.Ю.**, Санкт-Петербург, 2004, էջ 15/:

⁸ Տե՛ս, **Демидова Л.А.** Адвокатура в России. Учебник, Москва, 2006, էջ 192:

⁹ **Леви А., Папкин А.** Нравственные и этические требования к адвокату. Российская юстиция. 2003. #3. С.25-27: Մեջբերումն ըստ **Кипнис Н.М., Богданова Е.Л., Гутников А. Б.** Профессиональная этика юриста-консультанта, Санкт-Петербург, 2004, էջ 225:

¹⁰ Տե՛ս, **J. des Cressonieres:** Entretien sur la Profession d'avocat et les règles professionnelles: Bruxelles; 1925. С. 28-29: Մեջբերումն ըստ **Полянский Н.Н.** Правда и ложь в уголовной защите, Москва, 1927, էջ 61:

Հանձնարարության ընդունման պահին հանձնարարության օրինականության, վստահորդի շահի օրինական լինել-չլինելու վերաբերյալ գրականության մեջ հանդիպում ենք հակասական կարծիքների: Մեր կարծիքով, նախ պետք է տարբերակել քաղաքացիական և քրեական գործերը: Քաղաքացիական գործերով փաստաբանի ազատությունն ավելի մեծ է: Անգամ եթե հանձնարարությունը ստանձնելու պահին հնարավոր չլինի որոշել դրա օրինականության հարցը, հետագայում ցանկացած պահի փաստաբանը կարող է հրաժարվել այն կատարելուց: Վստահորդի հետ կնքած պայմանագիրը քաղաքացիաիրավական գործարք է, և պայմանագրում նախատեսված պայմանների դեպքում կողմերից յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս միակողմանիորեն դադարեցնել այն: Բայց եթե վստահորդը միշտ օգտվում է այս իրավունքից և պարտավոր չէ տեղեկացնել փաստաբանից հրաժարվելու հիմքերի մասին, ապա նույնը չի կարելի ասել փաստաբանի մասին: Այս հարցում **Մ. Բարշևսկին**, օրինակ, վստահորդից հրաժարվելու հիմքերը բաժանում է երկու խմբի. հիմքեր, որոնց դեպքում փաստաբանը **պարտավոր է** հրաժարվել վստահորդից /շահերի հակասություն, վստահորդի անօրինական արարքներ, ակնհայտ անհանդուրժողական վերաբերմունք փաստաբանի նկատմամբ և այլն/ և հիմքեր, որոնց դեպքում փաստաբանն **իրավունք ունի** հրաժարվել /վստահության կորուստ, հետագա գործողությունների համար վստահորդի համաձայնությունը ստանալու անհնարինություն և այլն/¹¹: Միայն ավելացնենք, որ փաստաբանի հրաժարումը չպետք է հիմնված լինի, օրինակ, վստահորդի ծանր բնավորության, նրա առաջադրած հարցերի բազմաթվության, փաստաբանից կատարած աշխատանքի մասին մանրամասն զեկույց ներկայացնելու և նման այլ սուբյեկտիվ ու էթիկայի կանոնագրքով փաստաբանին ներկայացվող պահանջների խախտմամբ: Քաղաքացիական գործերով փաստաբանն իրավունք ունի հանձնարարությունից հրաժարվել ցանկացած ժամանակ և դատավարության ցանկացած փուլում, բացի մի դեպքից՝ հրաժարումն անթույլատ-

րելի է այն ժամանակ, երբ գործի նյութերը դատարանի կողմից ամբողջովին ուսումնասիրվել են, դատաքննությունն ավարտվել է, և դատարանը հեռացել է վճիռ կայացնելու: Մեր կարծիքով, այս փուլում, երբ այլևս ոչինչ հնարավոր չէ փոխել, հանձնարարությունից հրաժարվելով՝ փաստաբանը հարվածի տակ է դնում ոչ միայն իր կողմից դատարանում պաշտպանած դիրքորոշման ճշմարտացիությունը, իր նկատմամբ վստահորդի վստահությունը, այլև ողջ փաստաբանության հեղինակությունը:

Այլ է հարցը քրեական գործերի դեպքում: Այս դեպքում պաշտպանյալի շահի օրինականությունը սուր քննարկումների առարկա է դարձել: Չմանրամասնելով այդ քննարկումների բովանդակությունը և ընդհանրացնելով դրանք՝ նշենք, որ մեղադրյալի օրինական շահի տակ պետք է հասկանալ այն ամենը, ինչը վկայում է մեղադրյալի օգտին, հերքում է մեղադրանքը և արդարացնում մեղադրյալին, մեղմացնում է նրա մեղքի ու պատասխանատվության աստիճանը, պաշտպանում առանց հիմնավոր պատճառի նրա նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելուց: Այդ է ասում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի /այսուհետև՝ ՀՀ քր. դատ. օր./ 6-րդ հոդվածի 28-րդ կետը, որը պաշտպանությունը բնութագրում է որպես դատավարական գործունեություն, որն իրականացնում է պաշտպանության կողմը՝ նպատակ ունենալով հերքել մեղադրանքը կամ մեղմացնել պատասխանատվությունը, պաշտպանել այն անձանց իրավունքներն ու շահերը, որոնց վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում, ինչպես նաև նպաստել ապօրինաբար քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վերականգնմանը: Ինչ վերաբերում է վստահորդի շահերի պաշտպանության համար կիրառվող միջոցներին ու մեթոդներին, ապա այստեղ առկա են սահմանափակումներ: Փաստաբանն իրավունք չունի օգտագործել անօրինական միջոցներ, կեղծել ապացույցներ, կամ արդեն կեղծված ապացույցները ներկայացնել վարույթն իրականացնող մարմին, իրավունք չունի ճնշում գործադրել վկաների, տուժողի, դատա-

¹¹ Դասակարգումն ավելի մանրամասն տես 121-123:

Барщевский М. Աշխատության էջեր

վարության այլ մասնակիցների նկատմամբ, խրախուսել իր վստահորդի կամ նրա օգտին գործող այլ անձանց անօրինական գործողությունները կամ «աչք փակել» նման գործողությունները վրա /այս ամենը մեկ բառով այսուհետև կանվանվի չստել/: Չստելու փաստաբանի պարտականությանը գիտնականներն ու պրակտիկ աշխատողներն անդրադարձել են դեռևս 19-րդ դարից, գրվել են աշխատություններ, կատարվել ուսումնասիրություններ¹²: Նպատակին հասնելու միջոցների ու մեթոդների մասին հետաքրքիր է արտահայտվել **Մ.Գ. Կազարինովը**. «**Եթե ես, պաշտպանելով շախմատի ձիուն**¹³, փորձեմ ապացուցել, որ ձին ուղիղ է քայլում, իսկ տախտակը ծուռ է, որ ձին սև չի, այլ սպիտակ, և սպիտակության պատրանք ստեղծելու համար ամբողջ շրջապատը սկսեմ ջանասիրաբար սևացնել, ապա այդպիսի պաշտպանությունը՝ հիմնված կեղծիքի ու ստի վրա, արժանի կլինի միայն քննադատության, այն քիչ կծառայի մեղադրյալի շահերին, իսկ իմ բարի համբավին վնաս կբերի»¹⁴:

Փաստաբանը ոչ միայն պարտավոր է իրեն արժանապատվորեն և քաղաքավարի պահել, հետևել օրենքների պահանջներին ու էթիկայի նորմերին, այլև պարտավոր է ամբողջ կարողությամբ նպաստել, որ նման վարքագիծ դրսևորի մաս իր վստահորդը: Եթե փաստաբանը ինչ-որ բան անթույլատրելի է համարում իր համար, չպետք է այդ նույն բանի կատարումը թույլ տա իր վստահորդին և առավել ևս դրդի դրա կատարմանը: Խոսքը վերաբերում է ոչ միայն անթույլատրելի ապացույցներին, այլև դատարանին, դատավարության մյուս մասնակիցներին, վկաներին պարբերաբար վիրավորելուն, արդարադատության դեմ ուղղված այլ արարքներին: Նման վարքագծի նկատմամբ

փաստաբանի անտարբեր վերաբերմունքը պետք է դիտել որպես էթիկայի նորմերի խախտում, քանի որ նման պայմաններում անտարբերության դրսևորումը կարող է նշանակել մի կողմից, որ նա ևս մասնակից է նման վարքագծին կամ պաշտպանում է այն, մյուս կողմից պաշտպանյալի նման վաքագիծը կարող է խոչընդոտել իր իսկ պաշտպանությունը ճիշտ կազմակերպելու գործին: Նման պայմաններում փաստաբանն իրավունք ունի հրաժարվել իր պաշտպանյալից, քանի որ ինչպես **Ս. Բարչևսկին** է նշում. «**Վստահորդի առջև փաստաբանի պարտականությունը նրա շահերի պաշտպանությունն է բոլոր օրինական միջոցներով ու եղանակներով, այդ թվում և պարտականությունը անվարան վեր հանել ցանկացած խնդիր, առաջ քաշել ցանկացած հակափաստարկ, տալ ցանկացած հարց՝ անգամ մերժվող, որն իր կարծիքով կարող է օգնել գործին: Նա պետք է աշխատի իր պաշտպանյալի համար հասնել առավելագույն արդյունքի՝ օգտագործելով օրենքով թույլատրված դատական պաշտպանության ցանկացած միջոց: Նշված նպատակներին պետք է միշտ հասնել արդար ու արժանի միջոցներով՝ դատարանի հետ լինելով արդար, քաղաքավարի, բարեկիրթ ու անաչառ»¹⁵: Ինչպես տեսնում ենք, փաստաբանին այնուամենայնիվ իրավունք տրվում է հրաժարվել հանձնարարությունից: Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն փաստաբանն իրավունք ունի հրաժարվելու վստահորդի նկատմամբ իր ստանձնած պարտավորությունից միայն Փաստաբանության մասին ՀՀ օրենքով, ինչպես նաև վստահորդի հետ կնքած պայմանագրով նախատեսված դեպքերում: ՀՀ քր. դատ. օր. 73-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, պաշտպանն**

¹² «Կարելի է բարեխղճորեն սխալվել փաստերի նշանակության մեջ, բայց կանխամտածված դրանց տալ այլ մեկնաբանություն, նշանակում է ստել»: /Տե՛ս, **Մոլլո Մ.** Правила адвокатской профессии во Франции, Москва, 1894, правило 7. Традиции адвокатской этики. Избранные труды российских и французских адвокатов /XIX - начало XX в./.. Составители **Елисеев И.В., Панкратов Р.Ю.**, Санкт-Петербург, 2004, էջ 17/:

¹³ Շախմատի ձի ասելով՝ նա ի նկատի ունի մի մարդու, որն ամբողջ կյանքում քայլել է ծուռ ճանապարհներով, կատարել իրավախախտումներ:

¹⁴ Տե՛ս, **Ванян А.Б.** Афоризмы о юриспруденции, Москва, 1999, էջ 492:

¹⁵ Տե՛ս, **Барцевский М.** նշված աշխատության էջեր 97-98:

իրավունք չունի ինքնակամ դադարեցնել իր լիազորությունները: Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն օրենսգրքերի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում ՀՀ մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին: Հետևաբար, եթե հետևենք օրենքի տրամաբանությանը, ստացվում է, որ պաշտպանությունը ստանձնելուց և պաշտպանյալի հետ պայմանագիր կնքելուց հետո պաշտպանը զրկվում է պայմանագիրը միակողմնորոն դադարեցնելու հնարավորությունից, կամ ավելի ճիշտ, նա պայմանագիրն իրավունք ունի միակողմնորոն դադարեցնել, սակայն դրանով նա չի դադարում իրավահարաբերության սուբյեկտ լինելուց: Այս մասին է վկայում ՀՀ քր. դատ. օր. 68-րդ հոդվածի 3-րդ մասը, որտեղ սպառնիչ նշված են այն հիմքերը, որոնցով պաշտպանը դադարում է մասնակցել քրեական գործով հետագա վարույթին, որոնցում պայմանագրով նախատեսված հիմքերի մասին խոսք չկա: Չպետք է մոռանալ, որ, հատկապես քրեական գործերով, պաշտպանյալից բացի նրա ճակատագրով, որպես կանոն, հետաքրքրված են լինում նաև այլ անձիք՝ հարազատներ, ընկերներ, «գողական աշխարհի» ներկայացուցիչներ, ինչու չէ նաև թշնամիներ՝ մարդիկ, որոնք նպատակին հասնելու համար պատրաստ են օգտագործել ցանկացած միջոց, այդ թվում և անօրինական: Եթե դիտարկենք փաստաբանների կարգապահական պատասխանատվության վիճակագրական տվյալները, ապա կհանդիպենք այնպիսի բովանդակությամբ հաղորդումների, ինչպիսիք են ՔԿՀ արգելված իրեր մտցնելը¹⁶: Չէ՞ որ չի բացառվում, որ այդ և մի շարք այլ անօրինական արարքներ փաստաբաններն արած լինեն ոչ թե սեփական համոզմամբ ու հոժար կամքով, այլ, օրինակ, սպառնալիքի ներքո: Մեր կարծիքով, եթե պաշտպանության իրականացման ընթացքում փաստաբանից իրական սպառնալիքի միջոցով կամ այլ եղանակով պահանջում են կատարել այնպիսի

արարքներ, որոնք հակասում են օրենքին ու փաստաբանի վարքագծի կանոնագրքին /հիմքերը մանրամասն թվարկված են Կանոնագրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասում/, նա պետք է իրավունք ունենա հրաժարվել պաշտպանյալից: Իհարկե, ինչպես **Ս. Սուլուն** է նշել, նման հրաժարումը պետք է արտահայտվի «**հաշվենկատորեն ու շրջահայացությամբ, որպեսզի վստահորդին չզրկի այլ փաստաբան գտնելու հույսից**»¹⁷: Հասկանալով քրեական դատավարության օրենսգրքով նման հիմք նախատեսելու բոլոր հնարավոր բացասական հետևանքներն ու չարաշահումների հնարավորությունը՝ գտնում ենք, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 68-րդ հոդվածի վերոհիշյալ հիմքերի շարքում պետք է նախատեսվի նաև պայմանագրով նախատեսված լինելու հիմքը՝ պայմանով, որ նման հրաժարման դեպքում փաստաբանն այդ մասին 24 ժամվա ընթացքում հայտնի ՀՀ փաստաբանների պալատ: Վերջինիս պետք է հնարավորություն տրվի հրաժարման հիմքերի ոչ հիմնավոր լինելու դեպքում որոշակի ժամկետում վարույթ հարուցել և անհրաժեշտության դեպքում փաստաբանին պարտավորեցնել շարունակելու պաշտպանությունը: Մեր կարծիքով, ավելի լավ է, որպեսզի պաշտպանն իր պաշտպանյալից հրաժարվելու համար օգտվի օրենքով նախատեսված հնարավորությունից, քան թե սկսի հերթով խախտել վարքագծի կանոնագրքի նորմերը, մինչև որ պաշտպանյալը ստիպված լինի իրենից հրաժարվել:

Փաստաբան-վստահորդ փոխհարաբերությունների մեջ քիչ դեր չեն խաղում ֆինանսական հարաբերությունները: Ինչպե՞ս վարվել, եթե պաշտպանյալը հրաժարվում է մուծել պայմանագրով նախատեսված հոնորարը: Եթե հոնորարը չվճարելը զուտ պաշտպանյալի կամայականության արդյունք է, ապա այս դեպքում փաստաբանն իրավունք պետք է ստանա պայմանագրի պայմանները խախտելու հիմքով հրաժարվել գործին հետագա մասնակցությունից:

¹⁶ Հոդվածում զետեղված ՀՀ-ին վերաբերող բոլոր վիճակագրական տվյալները գրավոր հարցմամբ ստացվել են ՀՀ փաստաբանների պալատից:

¹⁷ Տե՛ս, **Մոլլո Մ.** Правила адвокатской профессии во Франции, Москва, 1894, правило 69. Традиции адвокатской этики. Избранные труды российских и французских адвокатов /XIX-начало XX в./ . Составители **Елисеев И.В., Панкратов Р.Ю.**, Санкт-Петербург, 2004, էջ 56:

Սակայն, եթե պաշտպանյալն ուղղակի հնարավորություն չունի վճարել հոնորարը, ապա փաստաբանը պարտավոր է նրան հիշեցնել օրենքով նախատեսված հիմքերով անվճար պաշտպան ունենալու նրա իրավունքի մասին, իսկ եթե նա այդ իրավունքը չունի, ապա, մեր կարծիքով, մինչև պաշտպանյալի հետ պայմանագրի դադարեցումը, պաշտպանը պետք է նրան հնարավորություն ու ժամանակ տա գտնելու նոր պաշտպան: Ամեն դեպքում նման հրաժարումը պաշտպանյալին ծանր կացության մեջ չպետք է դնի¹⁸: Վստահորդի հետ հոնորարի չափը որոշելիս փաստաբանը պետք է հետևի չափավորության սկզբունքին¹⁹: Կանոնագրքի 24-րդ հոդվածի համաձայն հոնորարի չափը /պայմանագրով նախատեսված իրավական օգնություն ցույց տալու համար փաստաբանին վճարվող գումար/ որոշվում է փաստաբանի և վստահորդի փոխադարձ համաձայնությամբ, որում կարող է հաշվի առնվել աշխատանքի ծավալը և բարդությունը, կատարման համար անհրաժեշտ

ժամանակի տևողությունը, փաստաբանի փորձը և որակավորումը²⁰, ժամկետները, կատարվող աշխատանքի հրատապության աստիճանը և այլ հանգամանքներ²¹: Իսկ եվրոպական ընկերակցության երկրների փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.4. հոդվածը սահմանում է. որ հոնորարի հաշվարկման չափանիշները մինչ պայմանագիրը կնքելն ամբողջ ծավալով պետք է ներկայացվեն վստահորդին: Նույն կանոնագրքի 3.3. հոդվածն արգելում է pactum de quota litis համաձայնագրերի կնքումը /պայմանագիր, որով գործը շահելու դեպքում փաստաբանին լրացուցիչ վարձատրություն կամ պարգև են խոստանում: Նույն հոդվածի համաձայն, դա չի նշանակում, որ հոնորարի չափը չի կարող որոշվել դատարանում վիճարկվող գույքային պահանջի արժեքով: Այս կապակցությամբ 1996թ. Եվրոպական ընկերակցության փաստաբանների կոլեգիայի և իրավաբանների միության խորհրդի նախագահ Ռ. Մուլլերատը գրում է, որ անհրաժեշտ է արգելել նման պայմա-

¹⁸ Այս հարցում հետաքրքիր է ՌԴ կարգավորումը: «Փաստաբանական գործունեության ու փաստաբանության մասին» ՌԴ օրենքը փաստաբանին արգելում է հրաժարվել պաշտպանյալից՝ բացառությամբ մի դեպքի, եթե հոնորարը չի վճարվում: Ինչպես **Ա.Ս. Չաշինն** է նշում, այս դեպքում երկու ելք կա. կամ վարույթն իրականացնող մարմինը դադարեցնում է նրա լիազորություններն այդ գործով, կամ նա շարունակում է իր լիազորություններն արդեն որպես հանրային պաշտպան: Այս դեպքում վստահորդի կողմից ֆինանսավորման դադարեցման պահից փաստաբանը ֆինանսավորվում է պետության կողմից: /Տե՛ս **Чащин А.Н.** Стратегия и тактика адвокатской деятельности, Москва, 2008, էջեր 191-192/:

¹⁹ Հոնորար տերմինն առաջացել է Ռոմեոնում, որտեղ **Ցինցիայի օրենքի** համաձայն փաստաբաններին վարձատրում էին պատվո նվերներով և ոչ թե փողով, և հետո միայն հռոմեական կայսրերը թույլատրեցին փողով վարձատրությունը՝ փաստաբանական գործունեությունը դարձնելով պետական ծառայություն: /**Молло М.** Правила адвокатской профессии во Франции, Москва, 1894, Традиции адвокатской этики. Избранные труды российских и французских адвокатов /XIX - начало XX в./ . Составители **Елисеев И.В., Панкратов Р.Ю.**, Санкт-Петербург, 2004, էջեր 19-20/:

²⁰ Մեր կարծիքով «որակավորում» տերմինի օգտագործումն արդարացված չէ, քանի որ Փաստաբանության մասին ՀՀ օրենքը բոլոր փաստաբանների համար սահմանում է արտոնագրի մեկ տեսակ, և իր գործունեության ընթացքում փաստաբանը որևէ մարմնի կամ անձի կողմից որևէ որակավորում կամ հատուկ արտոնագիր չի ստանում:

²¹ Այս կապակցությամբ հետաքրքիր էր ԽՍՀՄ մոտեցումը, երբ 1991թ.-ին հատուկ հրահանգով սահմանվեցին փաստաբանի մատուցած ծառայությունների տեսակներն ու դրանց դիմաց տրվող վարձատրության նվազագույն չափերը: /Տե՛ս, Инструкция об оплате юридической помощи, оказываемой адвокатами гражданам, предприятиям, учреждениям, организациям и кооперативам /утв. Минюстом СССР 10 апреля 1991г./:/:

նագրերի կնքումը, քանի որ դա վնասում է փաստաբանի անկախությանը²²: Ի հակադրություն այս մոտեցման՝ ամերիկայն կանոնագիրքն, օրինակ, թույլատրում է պայմանագրով պայմանական հոնորարի նախատեսումը, այսինքն, հոնորարի չափը կախվածության մեջ է դրվում գործի ելքից՝ բացառությամբ քրեական գործերի /հողված 1.5., կետ 3/: Այսպիսով, հոնորարի չափը որոշվում է փաստաբանի և վստահորդի միջև կնքված պայմանագրով, որը քաղաքացիաիրավական գործարք է և ենթարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթների կարգավորմանը: Հոնորարի չափը որոշվում է փոխադարձ համաձայնությամբ, իսկ մատուցված ծառայությունների դիմաց հոնորար վերցնելը փաստաբանի իրավունքն է և ոչ թե պարտականությունը: Ավելին, բացի հոնորարից, փաստաբանն իրավունք ունի վստահորդից պահանջել այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են հանձնարարության կատարման համար /մասնագետի աշխատանքի վարձատրություն, թարգմանության, նոտարական, հեռախոսային խոսակցությունների, պատճենահանման, տրանսպորտային և այլ ծախսեր/: Ինչ վերաբերում է հոնորարի վճարման ապահովման միջոցներին, ապա Կանոնագիրքն այդ մասին լռում է՝ սահմանելով միայն, որ հոնորարը ենթակա է վճարման իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը կնքելու պահին, եթե այդ պայմանագրով այլ կարգ չի նախատեսվում /24-րդ հոդվածի 3-րդ կետ/: Դրա փոխարեն Ռուսական կանոնագիրքն, օրինակ, սահմանում է, որ

որպես հոնորարի վճարման ապահովման միջոց արգելվում է վստահորդից որևէ գույք վերցնել՝ բացառությամբ կանխավճարից²³: Սակայն բոլոր այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված հոնորարը վստահորդը չի մուծում, փաստաբանն իրավունք է ստանում հրաժարվել հանձնարարությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հանգամանքները վստահորդին հնարավորություն չեն տալիս առանց կորուստների գտնել մեկ այլ փաստաբան²⁴: Էթիկայի նորմերն արգելում են նաև որևէ դրամական կամ գույքային պարգևի ընդունումն այն դեպքում, երբ իրավաբանական ծառայությունները վստահորդին մատուցվել են անվճար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով²⁵: Որպես վերը նշվածի լրացում՝ նշենք միայն, որ բացի փաստաբանի գործունեության համար նրան վարձատրելուց և գործի ընթացքում նրա ծախսած դրամական միջոցները հատուցելուց, այլ ֆինանսական հարաբերություններ նրանց չպետք է միացնեն: Դեռ 1913թ. **Ա.Ն. Սարկովը** նշում է, որ փաստաբանն իրավունք չունի իր վստահորդից պարտք վերցնել, նրանից որևէ այլ կերպ ֆինանսական կախվածության մեջ հայտնվել²⁶:

Վստահորդի հետ հարաբերություններում, անկախ ամեն ինչից, փաստաբանն իրավունք չունի երաշխավորել գործի ելքը, խոստանալ պարտադիր հաղթանակ: Ինչպես **Մ.Բ. Սմոլենսկին** է ասում. «Միակ բանը, որ կարելի է երաշխավորել, գործի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքն է»²⁷: Ցավոք, այսօր պրակտիկայում հա-

²² **Муллерат Р.** Независимость-основной принцип юридической этики. Газета “Адвокат”, 1996, N11 /ноябрь/, с. 2-6: Մեջբերումն ըստ **Кипнис Н.М., Богданов Е.Л., Гутников А.Б.** նշված աշխատության էջ 234:

²³ Кодекс профессиональной этики адвоката. Принят Первым Всероссийским съездом адвокатов 31 января 2003 года, 16-րդ հոդվածի 5-րդ մաս:

²⁴ Общий кодекс правил для адвокатов стран Европейского сообщества. Принят Советом коллег адвокатов и юридических обществ Европейского Союза 28 октября 1988 года, Франция, Страсбург, կաճոճ 29:

²⁵ St'u, օրինակ՝ Кодекс поведения адвоката. Принят Советом Шведской ассоциации юристов 9 ноября 1984 года, կաճոճ 29:

²⁶ **Марков А.Н.** Свод фундаментальных принципов и основных норм поведения адвоката, Москва, 1913: Մեջբերումն ըստ **Кипнис Н.М., Богданов Е.Л., Гутников А.Б.** նշված աշխատության էջ 148:

²⁷ **Смоленский М.Б.** Адвокатская деятельность и адвокатура РФ. 3-е издание, исправленное и дополненное. Ростов-на-Дону, 2004, էջ 74:

ճախ են հանդիպում փաստաբանի կողմից տրված ազատագրկունից հանելու, գործը լիակատար շահելու, գույքը կալանքից հանելու և այլ խոստումների, որի մասին են վկայում փաստաբանների պալատի վարած վիճակագրական տվյալները: Իսկ եթե հաշվի առնենք, որ նման դեպքերի մեծ մասն այդպես էլ դուրս չեն գալիս փաստաբան-վստահորդ փոխհարաբերությունների շրջանակից, ապա հանդիպում ենք ոչ ցանկալի իրավիճակի: Նման խոստումների մեծ մասը տրվում է հաճախորդ ձեռք բերելու, գումար վաստակելու համար: Քիչ չեն նաև գումարը վերցնելու և գործը չկատարելու, հասանելի գումարը վստահորդին չվերադարձնելու և նրա շահերի դեմ գործելու դեպքերը²⁸:

Փաստաբանը պետք է գիտակցի, որ ամեն դեպքում պետք է պատասխանատվություն կրի իր մատուցած ծառայությունների հետևանքների համար՝ թե՛ դրական, թե՛ բացասական առումով: Նման պատասխանատվությունն առավել ռեալ դարձնելու և փաստաբանների զգոնությունը բարձրացնելու նպատակով **Մ. Բարչևսկին**, օրնակ, առաջարկում է ներմուծել պարտադիր ապահովագրության ինստիտուտը, փաստաբանների պալատում ստեղծել ապահովագրական ֆոնդ, որից էլ փաստաբանական սխալի դեպքում կմուծվեն ապահովագրական վճարները²⁹: Նման մոտեցումը, մեր կարծիքով, կհանգեցնի որոշակի դրական հետևանքների՝ կնպաստի փաստաբանների մասնագիտական գիտելիքների ու հմտությունների նկատմամբ հսկողության խստացմանը /Փաստաբանների պալատի կողմից/, հասարակության կողմից փաստաբանության նկատմամբ վստահության բարձրացմանը, վստահորդին պատճառված վնասի արագ և արդյունավետ հատուցմանը: Իհարկե, նման ինստիտուտի ներդրումը պահանջում է լուրջ հետազոտություններ, արտասահմանյան փորձի ուսումնասիրություն, Փաստաբանների պալատի ֆինանս-

սական հնարավորությունների ընդլայնում և այլն:

Փաստաբան-վստահորդ փոխհարաբերությունների առանցքային հարցերից է իրավական դիրքորոշման խնդիրը: Կանոնագրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն փաստաբանն իրավունք չունի վստահորդի դիրքորոշմանը հակառակ դիրքորոշում ընդունել, նրա հետ այդպիսի համաձայնություն չունենալու դեպքում, մասնավորապես, քրեական գործերով փաստաբանն իրավունք չունի իր պաշտպանյալի մեղքն ապացուցված ճանաչել, եթե վերջինս իրեն մեղավոր չի ճանաչում, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել: Փաստաբանի համար նման վարքագիծ դրսևորելը հատկապես դժվար է, երբ բոլոր ապացույցները վկայում են պաշտպանյալի մեղքի մասին, ինքն այն նույնպես ընդունում է, սակայն դատարանում հայտարարում է իր անմեղության մասին: Նման դեպքում, եթե դատարանում փաստաբանն ուղղակի չամերադառնա մեղքին, այլ փորձի վեր հասնել միայն պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, կստացվի, որ ընդունում է ամբաստանյալի մեղքը և «միանում մեղադրանքին»: Իսկ մեղքին անդրադառնալու դեպքում նա ստիպված կլինի բերել պաշտպանյալի անմեղության մասին վկայող փաստարկներ, որոնք կարող են և չլինել կամ շատ չնչին լինել մեղադրանքի կողմի ներկայացրած փաստարկների համեմատ, կամ փորձել ապացուցել, որ մեղադրանքի կողմը չունի մեղքն ապացուցված համարելու համար անհրաժեշտ ապացույցներ: Որպես խնդրի լուծում՝ որոշ հեղինակներ առաջարկում են դիմել երկընտրանքային դիրքորոշման հնարքին /բերել հակափաստարկներ, սակայն նշել նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ/³⁰, մյուսները կտրականապես դեմ են արտահայտվում նման տակտիկական

²⁸ 2005թ. դեկտեմբերից մինչև 2010թ. հունվար ընկած ժամանակահատվածում փաստաբանների պալատ ուղարկված պատահական վերցրած 76 բողոքներից 30-ը միայն այս հիմքերն են պարունակում:

²⁹ Տե՛ս, **Барцевский М.** նշված աշխատության էջեր 61-62 :

³⁰ Տե՛ս, օրինակ, **Бойков А.Д.** Этика профессиональной защиты по уголовным делам. Москва, 1978, էջ 71:

հնարքին՝ համարելով այն էթիկայի նորմերին հակասող և ոչ արդյունավետ³¹: Մեր կարծիքով, այս հարցին միանշանակ պատասխան տալ հնարավոր չէ. խնդրի ճիշտ լուծումը պետք է փնտրել կոնկրետ գործի հանգամանքների բազմակողմանի վերլուծության մեջ: Ինչպես **Ն.Ն. Պոլյանսկին** է ասում. **«Չկա մի գործ, որում փաստաբանը մեղադրյալի օգտին ասելու ոչինչ չունենա»**³²: Սակայն փաստաբանն իրավունք չունի պաշտպանել իր համար ակնհայտ սուտը կամ դրա վրա հղումներ անել³³: Դատարանում մեղքի ակնհայտ ապացուցվածության դեպքում մա ոչ թե պետք է բարձրածայնի, որ իր պաշտպանյալն անմեղ է, այլ որ նրա մեղքը ապացուցված չէ և չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն նրա օգտին: Մեր կարծիքով, սա ճիշտ կլինի ոչ միայն էթիկայի, այլև տակտիկայի տեսանկյունից:

Այլ է խնդիրը, երբ փաստաբանը գործ ունի պաշտպանյալի ինքնագրառության հետ: Կանոնագրքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն փաստաբանը, համոզվելով, որ պաշտպանյալին մեղսագրվող արարքը հիմնավորված չէ կամ գործով ձեռք բերված ապացույցները վկայում են ավելի թեթև հանցագործության մասին, իսկ պաշտպանյալն ընդունում է իրեն ներկայացված մեղադրանքը, պարտավոր է քննարկել այդ հարցը իր պաշտպանյալի հետ և համաձայնեցնել ըստ այդմ նոր դիրքորոշում ընդունելու հարցը: Եթե նոր դիրքորոշման կապակ-

ցությամբ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա փաստաբանն իրավունք ունի զբաղեցնել իր պաշտպանյալից անկախ, ինքնուրույն դիրքորոշում: Այստեղ փաստաբանը պետք է առաջնորդվի «Nemo auditur perire volens!»³⁴ սկզբունքով: Պետք է միայն ավելացնել, որ նման դիրքորոշումը չպետք է հանգեցնի փաստաբանական գաղտնիքի հրապարկմանը³⁵: Եթե վստահորդի ինքնագրառությունն ուղղված է այլ անձի կողմից տվյալ արարքի կատարումը թաքցնելուն կամ նրա մեղքը փոքրացնելուն, ապա փաստաբանն իրավունք չունի այդ մասին բարձրածայնել: Նրա խնդիրը իր պաշտպանյալին արդարացնելն է, իսկ մնացածը մեղադրնքի կողմի խնդիրն է:

Ինչպես տեսնում ենք, փաստաբան-վստահորդ փոխհարաբերություններում առանցքային է նաև փաստաբանական գաղտնիքի պահպանման փաստաբանի պարտականությունը: Փաստաբանը պարտավոր է ոչ միայն չհրապարակել կամ այլ կերպ երրորդ անձանց չհայտնել իրեն հայտնի տեղեկությունները, այլև պատասխանատվություն է կրում իր մոտ եղած նյութերի, փաստաթղթերի անվտանգ պահպանման, դրանք իր օգնականների, փորձնակների ու այլ անձանց /օրինակ՝ հավաքարար, վարորդ և այլք/ կողմից հրապարակելու կամ այլ կերպ երրորդ անձանց հայտնի դարձնելու դեպքում: Նման պարտականությունն ընկած է նաև փաստաբանական գրասենյակների վրա: Փաստաբանական գաղտնիքը պահպան-

³¹ Խնդրի մանրամասն քննարկումը տես **Ղուկասյան Զ.Գ.** «Պաշտպանի դատավարական կարգավիճակը նախնական քննության փուլում», Երևան, 2008, էջեր 29-30:

³² Տես, **Полянский Н.Н.** նշված աշխատության էջ 28:

³³ «Որպեսզի դատարանում վաստակես իսկական փաստաբանի հեղինակություն, մի՛ հեմվիր թեկուզ կարևոր, բայց այնպիսի փաստերի վրա, որոնք չես կարող հաստատել ապացույցներով»: /Տես, **Молло М.** Правила адвокатской профессии во Франции, Москва, 1894, правило 8. Традиции адвокатской этики. Избранные труды российских и французских адвокатов /XIX - начало XX в./. Составители **Елисеев И.В., Панкратов Р.Ю.**, Санкт-Петербург, 2004, էջ 18/:

³⁴ **«Պետք չէ լսել մի մարդու, որը ցանկանում է իրեն կործանել»**: /Տես նույն տեղում, правило 62, էջ՝ 49/:

³⁵ Փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները, որոնք վստահորդը փոխանցել է փաստաբանին, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն, և որոնք հայտնի չեն հանրությանը /Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մաս, Կանոնագրքի 9-րդ հոդված/:

ման ժամկետներ չի ճանաչում, փաստաբանը չի կարող հարցաքննվել փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկությունների վերաբերյալ: Կանոնագիրքը հստակ նշում է այն երեք դեպքերը, երբ փաստաբանական գաղտնիքը կարող է հրապարակվել. առկա է վստահորդի գրավոր համաձայնությունը, դա անհրաժեշտ է նրա /փաստաբանի/ և վստահորդի միջև ծագած դատական վեճում պահանջները հիմնավորելու կամ իր պաշտպանության համար, առկա է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն /9-րդ հոդված/:

Այս կապակցությամբ հետաքրքիր է փաստաբանի վարքագծի ռուսական կանոնագրքի կարգավորումը, որով փաստաբանական գաղտնիք է դիտում նաև վստահորդի հետ պայմանավորած հոնորարի չափը, և փաստաբանին արգելվում է վստահորդից դրամական պահանջը զիջել այլ անձի /6-րդ հոդվածի 7-րդ կետ/³⁶: Նույն՝ ռուսական կանոնագրքի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշվում է, որ առանց փաստաբանական գաղտնիքի պահպանման մեջ համոզվածության փաստաբանի նկատմամբ վստահություն չի կարող լինել: Եվ ընդգծելով այս դրույթի կարևորությունը՝ կանոնագրքի մեկնաբանություններից մեկում նշվում է. «Տրամաբանորեն կարելի է հետևություն անել. եթե առանց գաղտնիքի պահպանման չի կարող վստահություն լինել, իսկ վստահության չարաշահումը փաստաբանի կոչման հետ անհամատեղելի է, ապա փաստաբանական գաղտնիքի ցանկացած խախտում «մեխանիկորեն» պետք է բերի փաստաբանի կարգավիճակի դադարեցմանը»³⁷:

Որպես ամփոփում՝ ավելացնենք միայն, որ օրենքն, անկախ ամեն ինչից, վստահորդի կամքից բարձր է կանգնած, և որ իր վստահորդին ամեն կերպ պաշտպանելու փաստաբանի բարոյական պարտականությունը չպետք է դիտել որպես ընդհանրապես հանցագործության պաշտպանություն: «Լինել փաստաբան, նշանակում է հիշել և հոգեբանորեն պատրաստ լինել բացառել ուրիշներին և ս, որ ցանկացած իրավիճակում հաղթանակել կարող է միայն օրենքը, իսկ օրենքին հետևելու փաստաբանի ձգտումը պետք է կառուցվի զարգացած իրավագիտակցության ու բարոյական դաստիարակության վրա»³⁸: Միայն էթիկայի նորմերով առաջնորդվող փաստաբանությունը կարող է հասնել իր առջև դրած նպատակներին, արժանանալ հասարակական հարգանքին ու վստահությանը, դառնալ մի կառույց, որն ի գործու է պաշտպանել քաղաքացիների օրինական շահերն ու հասնել արդարության: «Փաստաբանի մանագիտական պարտականությունների շրջանակը կարող է փոխվել՝ կախված այն հանգամանքից, թե դատավարական որ սուբյեկտի շահերն է նա պաշտպանում՝ մեղադրյալի թե տուժողի, հայցվորի, թե պատասխանողի: Բայց բարոյաէթիկական բնագավառում նրա մասնագիտական պարտականությունները մնում են ամփոփոխ՝ առավելապես օգտագործել բոլոր օրինական միջոցները մեղադրյալի պաշտպանության համար և ամեն կերպ հիմնավորել տուժողի, հայցվորի կամ պատասխանողի դիրքորոշումը»³⁹: Համենայն դեպս փաստաբանը միշտ պետք է հետևի «օրենքն ու մասնագիտական էթիկան վստահորդի կամքից բարձր են»⁴⁰ սկզբունքին:

³⁶ Кодекс профессиональной этики адвоката. Принят Первым Всероссийским съездом адвокатов 31 января 2003 года:

³⁷ Տե՛ս, **Гармаев Ю.П.** Пределы прав и полномочий адвоката в уголовном судопроизводстве и типичные правонарушения, Иркутск, 2005, էջ 289:

³⁸ **Смоленский М.Б.** նշված աշխատության էջ 89:

³⁹ Տե՛ս, **Бойков А.Д.** Нравственные основы судебной защиты, Москва, 1978, էջ 47:

⁴⁰ Кодекс профессиональной этики адвоката. Принят Первым Всероссийским съездом адвокатов 31 января 2003 года, 10-րդ հոդվածի 1-ին մաս:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷՔԻ ՌԵՅԵՊՅՈՒՄՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Գոռ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Հռոմեական իրավունքի ռեցեպցիայի սկիզբը կապված է XI-XII դարերում Իտալիայի հյուսիսային քաղաքների գործունեության հետ: Այստեղ ռեցեպցիան անում է իր առաջին քայլերը¹: Դա բացատրվում է առաջին հերթին Իտալիայի հյուսիսում ընթացող սոցիալ-տնտեսական գործընթացներով, որտեղ մասամբ XI-դարի վերջում, այնուհետև՝ XII-XIII դդ.-ում դիտվում է տնտեսական աճ: Արագ էին զարգանում ապրանքադրամական հարաբերությունները: «Իտալիայում, - գրում էր Կ. Սարքսը,- որտեղ կապիտալիստական արտադրությունն ամենից առաջ էր զարգանում, ամենից առաջ են քայքայվել նաև ավատական հարաբերությունները»²:

Երկրում չկար միասնական պետություն, սակայն հյուսիսում առաջանում էին կառավարման հանրապետական ձևով քաղաք-պետությունները: Այդ քաղաքներն ակնառու նշանակություն են ձեռք բերում միջնադարյան եվրոպայում: Միլանը դառնում է արհեստագործական արտադրության խոշորագույն կենտրոն. Վենետիկը, ճենովան, Պիզան սկսում են խաղալ համաշխարհային առևտրային կենտրոնների դեր, իսկ Ֆլորենցիան առաջադրվում է իբրև կապիտալի կենտրոն: Գրեթե միաժամանակ կամ մի փոքր ավելի ուշ արհեստագործական արտադրության կենտրոններ են ձևավորվում Ֆրանսիայում: Այստեղ նույնպես մասնավոր սեփականության զարգացումը, ինտենսիվ առևտրական կապերը համապատասխան իրավական միջոցներ էին պահանջում: **Իսկ հռոմեական իրավունքն արդեն իսկ իր մեջ պարունա-**

կում էր զարգացող տնտեսական հարաբերությունների պատրաստի իրավաբանական ձևավորումը: «Հենց որ արդյունաբերությունն ու առևտուրը՝ սկզբից Իտալիայում, այնուհետև նաև այլ երկրներում, - գրում էին Կ. Սարքսն ու Ֆ. Էնգելսը, - էլ ավելի են զարգացրել մասնավոր սեփականությունը, միանգամից վերականգնվել ու կրկին հեղինակության փառք է ստացել մանրամասնորեն մշակված մասնավոր իրավունքը»³:

Բուրժուազիայի շահերը պահանջում էին պետությունների ողջ տարածքում գործող հստակ, պարզ նորմեր, որոնք միատեսակ էին լուծում իրավական հարցերը: Հռոմեական դասական իրավունքը հենց տարբերվում էր այդպիսի հատկություններով: Եվ ձևավորվող բուրժուազիան դրանում գտավ պատրաստի մի գործիք՝ գործարքները կարգավորելու և ավատական սահմանափակումներից ազատ

¹ Տե՛ս **Исринг Р.** Дух римского права на различных ступенях его развития. Ч. 1.- СПб., 1875; Savigny. Geschichte des Romischen Rechts im Mittelalter, I-VII, 1834-1851; Stobbe. Geschichte der deutschen Rechtsquellen, I-II. Braunschweig. 1860-1864; **Моддерман В.** Рецепция римского права на Западе.- М., 1886; **Виноградов П. Г.** Римское право и средневековой Европе.- М., 1910; **Шершеневич Г. Ф.** История философии права - СПб., 1907 (разд. «Средневековые юристы»); **Давид Р.** Основные правовые системы современности. Пер. с франц.- М., 1967; **Косарев А. И.** Римское право.- М., 1986, с. 113-145; Он же. Римское частное право.- М., 1998, с. 205-250; **Нересянц В. С.** Общая теория права и государства. Учебник.- М., 1999. с. 100-111 և այլն:

² Տե՛ս **Маркс К.,** Энгелс Ф, Соч. Т. 21. с. 179.

³ Տե՛ս նույն տեղը, էջ 261-262:

սեփականության հարաբերություններն ամրապնդելու համար: Ռեցեպցիայի օգտին առանձնապես ակտիվորեն էր հանդես գալիս քաղաքաբնակ բուրժուազիան: Նրանք առաջին հերթին շահագրգռված էին հռոմեական մասնավոր /քաղաքացիական/ իրավունքի ռեցեպցիայում, սակայն նրանք սատարում էին նաև հռոմեական հասարակական իրավունքի որոշ նորմերի գործողությունները, որոնք կարող էին օգտագործվել ավատական կամայականության և «կուլակների իրավունքի» դեմ:

Հռոմեական ազդեցությունն ուժեղ զգացվում էր նաև «քաղաքային իրավունքի» ժողովածուների առաջացման գործում:

Եթե բյուրգերությունը հանդես էր գալիս հռոմեական իրավունքի հնարավորինս ավելի լայն, լիարժեք և հստակ վերականգնման օգտին, ապա ավատականների դասի, աշխարհիկ ու կրոնական իշխանության տարբեր շերտերի դիրքը ռեցեպցիայի մասին հարցում շատ ավելի բարդ է եղել: Ավատական ուժերի այս դիրքը մասամբ համանման է վերածնունդի հետ նրանց հարաբերությանը, արտադրության և առևտրի զարգացմանը՝ այն եղել է կամ չեզոք, կամ արտահայտում էր իր համար օգուտ քաղելու ծգտումը: Ավատատերերը օգտագործում էին հռոմեական իրավունքը, մասնավորապես, գյուղացիներին ստրկացնելու և նրանց հողերը գրավելու համար: «Առանձին դեպքերում հռոմեական իրավունքն առիթ էր տալիս ազնվականներին գյուղացիներին էլ ավելի ճնշելու համար: Եթե պապական, կայսերական, իշխանական արքունիկները հաճախակի եղել են վերածնունդի դարաշրջանի արվեստի ստեղծագործությունների պատվիրատուներ, ապա հռոմեական իրավունքի մի շարք որոշումների ռեցեպցիան հաճախակի իրականացվում էր պապերի, կայսրերի, իշխանների անմիջական հրամանով: Սակայն երբեմն նրանք բացահայտ թշնամանք էին դրսևորում հռոմեական իշխանության նկատմամբ:

Կաթոլիկ եկեղեցին հռոմեական իրավունքի ու ավատական աշխարհի մասին գիտելիքի ամենավաղ հաղորդիչն էր: Ծնունդ առնելով դեռևս Հռոմեական կայսրության ընդերքում, քրիստոնեությունն ընկալել է անտիկ մշակույթի տարրերը: Այսպես, օրինակ, եկեղեցական /ավելի ուշ՝ կանոնական/ իրավունքը ծավալվում էր ավելի բարձր՝ հռոմեական իրավական մշակույթի անմիջական ազդեցության ներքո⁴:

Բարբարոսական նվաճումների ժամանակաշրջանում հոգևորականությունը պահպանել է հռոմեական կրթվածության մի մասը, իսկ հետագայում այն փոխանցեց միջնադարին: Քրիստոնեությունը փոխառել է Հռոմից նաև որոշակի իրավական հայացքներն ու իրավական ինստիտուտները: Բնականաբար, դրանք փոփոխված ու հարմարեցված էին ավատական աշխարհի առանձնահատուկ պայմաններին, եկեղեցու շահերին ու քրիստոնեական բարոյականության առանձնահատկություններին: Երբեմն կանոնական իրավունքն անվանում են կանուրջ, որով հռոմեական իրավական մշակույթը տեղափոխվեց ֆեոդալական աշխարհ: Քանի որ եկեղեցական դպրոցներում դասավանդումը վարվում էր լատիներենով, փրկվել են նաև հռոմեական օրենքների տեքստերի որոշ ձեռագրեր՝ այն կանխադրյալը, որն ավելի ուշ հնարավոր դարձրեց ռեցեպցիայի գործը:

Սեփական դիրքերի ամրապնդման հետ եկեղեցին սահմանում է համալսարանների նկատմամբ հսկողությունը: Այժմ, աշխարհիկ կրթության մեջ էր եկեղեցին տեսնում վտանգ սեփական տիրակալությանը: 1220 և 1259թթ.-ին հրատարակվում են պապական բուլաները, որոնք ուղղված են հռոմեական իրավունքի դասավանդման դեմ: Փարիզի համալսարանում այդ իրավունքի դասավանդումը երկար ժամանակով դադարում է: Կանոնական իրավունքի զարգացումը, այնուամենայնիվ, ընթանում էր սերտ կապի մեջ հռոմեական իրավունքի ուսումնասիրման հետ, որի գաղափարներն ու մի շարք նախնական դրույթներն օգտագործվում էին կանոնիկ իրավունքի նորմերը հիմնավորելու համար: Հռոմեական իրավունքը, որը դասավանդվում էր համալսարանի աստվածաբանական բաժիններում, մատուցվում էր եկեղեցական փաթեթավորման մեջ: Այդպես օրինակ, փոփոխված հռոմեական նորմերը ներկայացվում էին տիրապետության մասին կանոնիկ իրավունքի դրույթներում: Այդ ինստիտուտը օգտագործվում էր, մասնավորապես, իրենց կալվածքներից հեռացված եպիսկոպոսների իրավունքները վերականգնելու համար: Սակայն հռոմեական իրավունքի ազդեցությունն զգացվում էր ոչ միայն ներեկեղեցական հարաբերությունների վրա: Եկեղեցին նպաստում էր նաև առևտրային գործարքների զարգացմանը: Հռոմեական իրավունքի օգնությամբ այն վերացնում էր

⁴ Տե՛ս **Ткаченко С.В.** Рецепция, пимского права: вопросы и истории Дисс... канд. юрид. наук, М., 2006, էջ 49-50.

անշարժ գույքի տնօրինման այն սահմանափակումները, որոնք խանգարում էին սեփականությունն իր ձեռքն անցնելուն:

Տնտեսական կյանքի և լուսավորչության զարգացման հետ կաթոլիկ եկեղեցու ազդեցությունն ու դրա գործողության ոլորտն աստիճանաբար սահմանափակվում են: Բարեփոխումն ու հումանիզմի ազդեցությունն ազատագրում են համալսարանները աստվածաբանության գերիշխանությունից: Հռոմեական իրավունքը գլխավոր առարկա է դառնում Գերմանիայի իրավաբանական ֆակուլտետներում, վերականգնվում է իրավունքի դասավանդումը Փարիզի համալսարանում:

Ռեցեպցիայի գործին աջակցում էր նաև ավատական պետությունը: Ճիշտ է, հռոմեական իրավունքի ուսումնասիրությունը սկզբնապես եղել է առանձին անձանց, համալսարանների մասնավոր գործ, սակայն շուտով արդեն ավատական տիրակալներն հասկացան այն սեփական նպատակների համար օգտագործելու կարևորությունը: Հռոմեական իրավական հայեցակարգն ամուր կերպով միավորված էր ուժեղ պետական իշխանության զաղափարի հետ, որը կանգնած է անհատների ու սոցիալական խմբերի վերևում: Հռոմեական իրավաբանական խորթ է եղել քաղաքական տրոհվածության և մասնավոր ու հասարակական շահերի միախառնման զաղափարներին: Ուստի նրանք, ովքեր հանդես են եկել կենտրոնական իշխանության ուժեղացման օգտին, իրենց հիմքն են գտել Կայսրության ժամանակաշրջանի հռոմեական պետական իրավունքի կառույցներում: Գերմանիայի և Յուլիսային Իտալիայի տարածքում առաջացած պետական միավորումն նրանք սկսել են անվանել «Սրբազան հռոմեական կայսրություն» /962 թ./: XII դարում **Ֆրիդրիխ I Բարբարոսն** հռոմեական իրավունքը հռչակում է «համաշխարհային իրավունք»: Հատկապես գերմանացի գեներալներին դուր էր գալիս հռոմեացի իրավաբանների կողմից կայսերական որոշումների բարձրագույն իրավաբանական ուժի ճանաչումը **«այն, ինչ ցանկանում է կայսրը, օրենքի ուժ ունի»**: Պապերի հետ պայքարում, պնդելով իրենց իշխանության անսահմանափակությունը, նրանք հանդես էին գալիս անձամբ «սկզբնական և իրական իմաստով» հռոմեական իրավունքի վերականգնման օգտին:

XV - XVI դդ.-ում զարգացող ապրանքադրամական հարաբերությունների ավելի լայն հիմքի վրա, քաղաքների տնտեսական և քաղաքական ուժի աճի հիման վրա հռոմեական իրավունքի ռեցեպցիան նոր ազդակ է ստանում: Պետության օգնությունը ռեցեպցիայի

գործին արտահայտվում էր նրանով, որ այն խրախուսում էր հռոմեական իրավունքի ուսումնասիրումը, մասնավորապես՝ նպաստում էր համալսարանների բացմանը: Հռոմեական իրավունքին ծանոթ իրավաբանները նշանակվում էին բարձրագույն պետական պաշտոնների, մտնում էին կայսրերի մերձավոր շրջապատի մեջ: Իրավունքի դոկտորները /doctores juris/ հավասարեցվում էին ամենացածր ազնվականներին, ստանում էին առատ վարձատրություն:

Ռեցեպցիայի ջատագովներ են դառնում պետական բյուրոկրատիան ու դատական մարմինները:

Հարկ է նշել նաև, որ վաղ միջնադարում դեռևս չէին ձևավորվել ազգերը և համապատասխանաբար՝ ազգային պատկերացումներն ու ավանդույթները: Ֆեոդալիզմի ծաղկման ու անկման ժամանակաշրջանում հռոմեական իրավունքի և դրա ռեցեպցիայի նկատմամբ ուշադրությունը հաստատվում էր իշխանության ոլորտում արսոլյուտիստական միտումներով, ինչպես նաև արտադրության և առևտրի զարգացմանը նպաստելու քաղաքականությամբ, բուրժուազիայի առաջացող դասի աջակցությունը ստանալու միապետերի ձգտումով:

Ռեցեպցիան ուներ նաև զուտ իրավաբանական պատճառներ: **Առաջինը**, դա հռոմեական իրավունքի բարձր մակարդակն է՝ պատրաստի տեսքով մի շարք ինստիտուտների առկայությունը, որոնք կարգավորում էին զարգացած ապրանքաշրջանառության հարաբերությունները, իրավական նորմերի հստակությունն ու պարզությունը: Հռոմեական դասական իրավունքը գերծ էր ազգային սահմանափակումից և ձեռք էր բերել ունիվերսալության գծեր: Հռոմեական դասական իրավունքը մեծապես ազատ էր եղել ազգային սահմանափակումից և ձեռք է բերել ունիվերսալության գծեր: **Երկրորդը**, ռեցեպցիան պայմանավորվում էր տեղական, հիմնականում՝ սովորական իրավունքի թերություններով: Սովորական իրավունքն արխայիկ էր, տառապում էր պարտիկուլյարիզմով, բովանդակում էր բազմաթիվ, անհստակություններ, հակասություններ:

Գերմանիայում գոյություն ունեցող դատարաններում սովորական իրավունքի նորմերի գործողության սահմանափակման ու արգելման պրակտիկան, բնականաբար, նպաստում էր ռեցեպցիային:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ հռոմեական իրավունքի ռեցեպցիան հսկայական ազդեցություն ունեցավ համաեվրոպական իրավական համակարգի ձևավորման վրա:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՍԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տիգրան ԹՈՐՈՍՅԱՆ

Չայցորդ

«Իրավունքի աղբյուր» հասկացությունը գրականության մեջ դիտվում է երկու առումներով, նեղ իմաստով որպես իրավագոյացման պատճառներ ու օրինաչափություններ կամ իրավունքի գենեզիս (ծագումնաբանություն), և լայն իմաստով՝ որպես իրավունքի նորմերի ամրագրման և գոյության ձև կամ որպես այն աղբյուր, որտեղից իրավաբանը կամ իրավունքի ցանկացած այլ սուբյեկտը քաղում է իրավունքի նորմերը¹: Գոյություն ունեն իրավունքի աղբյուրի լայն հասկացության երկու տարատեսակ՝ նյութական և գաղափարական: Այս երկրորդ առումը ընդունված է անվանել ձևական-իրավաբանական:

Բացի «իրավունքի աղբյուր» հասկացությունից գիտնականները հաճախակի օգտագործում են «իրավունքի ձև» հասկացությունը²: Հեղինակներից ոմանք իրավական նորմատիվ ակտերը, սովորույթները, ավանդույթները և այլն համարում են իրավունքի ձևեր, մյուսները՝ իրավունքի աղբյուրներ: Միևնույն երևույթների տարբեր անվանումները վկայում են դրանց էությունների արտահայտման բազմազանության մասին: Հարկ է համաձայնվել այն հեղինակների կարծիքի հետ, որոնք հնարավոր են գտնում և՛ այս, և՛ այն հասկացության օգտագործումը՝ նախօրոք պարզաբանելով դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը: Նշված հասկացությունների կապակցությամբ տեսական բանավեճերը սքոլաստիկ չեն:

Իրավունքի աղբյուրների մասին ավելի ճիշտ կլինի խոսել սոցիալական գործոնների առումով, որոնք կանխորոշում են իրավունքի գոյացումը և գործողությունները: Այդպիսիներից են հասարակության կյանքի նյութական, հոգևոր, հոգևոր-մշակութային պայմանները: Իրավունքի աղբյուրների մասին խոսում են նաև իրավունքի ճանաչման առումով: Այդպիսի աղբյուրներ են հանդիսանում պատմական հուշարձանները, ազգագրության, հնէաբանության տվյալները և այլն, ինչպես նաև գործող իրավական ակտերը, դատական ճանաչումը, իրավաբանական պրակտիկան, նոր-

մատիվ պրակտիկան, իրավաբանների գիտական աշխատությունները և այլն:

Ձևական-իրավաբանական իմաստով իրավունքի աղբյուրները՝ այն ավագաններն են, որտեղ պարունակվում են իրավական նորմերը, որոնք օգտագործվում են իրավաբանական գործերի լուծման համար: Այդ պատճառով նրանց համար ավելի ճիշտ է օգտագործել «իրավունքի ձև» հասկացությունը:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում պատասխանը այն հարցերին, թե որտեղից է առաջանում իրավունքը և ինչու՞մ է արտահայտվում նրա սոցիալական

¹ Տե՛ս Дробышевский С.А., Данцева Т.Н. Формальные источники права. М., 2011, с. 7-8.

² Տե՛ս Башно С.В. Форма права: теоретико-правовое исследование. Дисс. ... докт. Юрид. Наук. М., 2005, с. 16-17.

պայմանավորվածությունը, ինչու՞մ է կայանում իրավագիտակցության դերն այդ գործընթացում և ինչի՞ց են կախված կամ ինչո՞վ են բնորոշվում իրավունքի արտահայտման արտաքին ձևն ու բնույթը:

Իրավունքը, ինչպես և պետությունը, ծագում է հասարակության կառավարման արտադրության բարդացման և կատարելագործման հետ կապված սոցիալական գործընթացների, միջամծնային հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունից: Իրավունքը միշտ էլ սոցիալապես պայմանավորված է: Ընդունված է տարբերակել այդպիսի պատճառաբանվածության երեք հիմնական ձևեր.

- **իրավաբանական ձևը հաղորդվում է արդեն կայացած հասարակական հարաբերություններին, որոնց բովանդակությունը կազմում են կողմերի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, այսինքն իրականորեն ծագած իրավահարաբերությունները, ինչը տեղի է ունենում առաջին հերթին տնտեսական ոլորտում.**
- **հասարակական զարգացման առաջադիմական միտումների իմացության հիման վրա պետությունը կարող է ճանաչել կամ իրավունքի աղբյուրների մեջ ամրագրել դեռ ամբողջովին չձևավորված հարաբերություններ, դրանով իսկ ակտիվորեն նպաստելով նրանց կայացմանը և հասարակական կյանքում հաստատմանը.**
- **իրավունքի առաջացման անմիջական հիմք է հանդիսանում նաև իրավաբանական պրակտիկան:**

Այսպիսով, որպես աղբյուր (բառիս լայն իմաստով) իրավունքն ունի հասարակական հարաբերությունները, որոնց կարգավորման օբյեկտիվ պահանջմունքը ծագում է հասարակական կյանքում և պետք է գիտակցված լինի օրենսդրի կողմից, այսինքն անցնի նրա իրավագիտակցության միջով: Դա նշանակում է, որ օրենսդրի մոտ առաջանում են գաղափարներ, հայացք-

ներ, պատկերացումներ, կարծիք է ձևավորվում առ այն, որ սոցիալական կապերի որոշակի համամասնության, հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքի որոշակի տարբերակ պետք է դառնա պարտադիր կանոն, ընդունի հանդիսանուր ձև, այսինքն՝ օրենք կամ իրավունքի այլ աղբյուր:

Ըմբռնելով այս պահանջմունքը, օրենսդիրը պետության անունից անմիջականորեն ձևավորում է սահմանվող իրավական նորմը կամ էլ ճանաչում է գոյություն ունեցող նորմատիվները, դրանով իսկ նրանց տալով իրավաբանական նորմի որակ:

Օրենսդրի տեսակետը՝ անհրաժեշտության տեսակետն է³: Բնորոշելով իրավական նորմի մեջ մարմնավորված անհրաժեշտությունը, հարկ է շեշտել, որ այն կապված է ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ գործոնների հետ: Դրա արտահայտումը պայմանավորված է օրենսդրի համապատասխան կամային ակտերով, նրա գիտելիքներով, վերաբերմունքով, փորձով, հետևաբար, նաև իրավագիտակցության՝ որպես իրավական կուլտուրայի տարրի մակարդակով: Համապատասխանաբար իրավունքը դառնում է հասարակական գիտակցության օբյեկտիվացված (արտաքինապես արտահայտված) ձև՝ ընդհանրապես և իրավագիտակցության՝ մասնավորապես և իրենից ներկայացնում է ռեալ իրականության գործնական գիտակցում: Այսպիսի գնահատականը պետք է ծառայի ընդունման ենթակա իրավաբանական նորմերի առաջադիմական դերի բացահայտմանը և կանխատեսմանը:

Իրավունքը արտահայտում է կոնկրետ մարդկանց օրենսդրական կամքը (նրա ուժեղ և թույլ կողմերով), որոնք մշակում են օրենքների նախագծերը, քննարկում և ընդունում են դրանք և իրավունքի այլ աղբյուրները: Իրավունքի աղբյուրների գործողությունը նույնպես պահանջում են հասցեատերերի (իրավունքի սուբյեկտների) կամային վարքածա, նրանց մտավոր և զգայական-կամային հարաբերությունների ենթարկում իրավական հրահանգավոր-

³ См. в Источники российского права: вопросы теории и истории. Отв ред. М.Н. Марченко. М., 2011, с. 7-8.

րուններին՝ վարքագծի (գործունեության) մեջ իրագործման ճանապարհով:

Իրավունքը ենթադրում է ոչ միայն օրենսդրության և իրավունքի այլ աղբյուրների մեջ պարունակվող իրավաբանական նորմեր, այլև ֆիզիկական և իրավաբանական անձանց անհատական (սուբյեկտիվ) իրավունքներ, նրանց իրավասություններ: **Առաջին դեպքում խոսքը գնում է օբյեկտիվ իմաստով իրավունքի (օբյեկտիվ իրավունքի) մասին, երկրորդ դեպքում՝ սուբյեկտիվ իմաստով իրավունքի (սուբյեկտիվ, անձնական, մասնավոր իրավունքի) մասին:** Այս տերմինները ընդունված են իրավաբանական գիտության մեջ⁴: Կյանքում ձևավորված և մարդկանց կողմից գիտակցված վարքի կանոնները իրավաբանական նորմերի տեսքով օբյեկտիվանում (մարմնավորվում) են օրենսդրության կամ իրավունքի այլ աղբյուրներում, ինչպես նաև դատական պրակտիկայում և անկախություն են ստանում ցանկացած սուբյեկտից՝ նույնիսկ իշխող խավերին (կլանին, վերնախավին) պատկանող անձանցից, խորհրդարանականներից և այլն:

Հասարակական հարաբերությունների մասնակիցների առկա իրավունքները անմիջականորեն պատկանում են յուրաքանչյուր սուբյեկտին (անձին) կամ յուրաքանչյուր կազմակերպությանը, հիմնարկին, ձեռնարկությանը: Նրանք նույնպես հանդիսանում են օրենքի մակարդակի բարձրացված պետական կամքի արտահայտություն և իրավունքի նորմերից շատ ավելի ուղղակի են արտացոլում իրավունքի բնույթը, քանի որ ծառայում են որպես ազատության և արդարության չափ ու մասշտաբ, այսինքն՝ պետության կողմից ճանաչված և պաշտպանվող հնարավոր վարքածևի չափանիշներ: Դրան համապատասխան սուբյեկտիվ իրավունքի տակ պետք է հասկանալ.

● **իրավունքի սուբյեկտների առկա իրավունքների միասնականությունը, նրանց հնարավոր վարքի չափը կամ**

ազատության մասշտաբը, որը նրանց հնարավորություն է տալիս գործելու իրենց շահերից ելնելով՝ սեփական պահանջմունքները բավարարելու համար,

● **այն իրավունքներն ու ազատությունները, որոնք պաշտոնապես ճանաչված են, պահպանվում և պաշտպանվում են պետության կողմից:**

Իրավունքի տարաբաժանումը օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքների պայմանավորված է բուն կյանքով: Միշտ պետք է գիտենալ՝ ինչ իրավունքի մասին է գնում խոսքը՝ որոշակի աղբյուրներում ձևական-իրավաբանական հասկացությամբ պարունակվող իրավական նորմերի, թե՛ հասարակական հարաբերությունների մասնակիցների առկա իրավունքների իմաստով: Այն դեպքում, երբ գործի կամ իրավական տեքստի հանգամանքներից բավականաչափ պարզ է, իրավունքի որ կողմի մասին է խոսքը, «իրավունք» տերմինը օգտագործվում է առանց «օբյեկտիվ» կամ «սուբյեկտիվ» բառերի: Այլ դեպքերում անհրաժեշտություն է ծագում հստակեցնել, թե որ՝ «օբյեկտիվ» թե «սուբյեկտիվ» իրավունքի հետ գործ ունենք մենք: Օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի տարանջատումը ունի ճանաչողական և գործնական նշանակություն: Մի կողմից բացահայտվում է օբյեկտիվ իրավունքի հարաբերական անկախությունը մարդուց, քանի որ մարդիկ ուղղակիորեն կամ անուղղակի մասնակցում են օրինաստեծության գործին, մյուս կողմից՝ սուբյեկտիվ իրավունքի հարաբերական անկախությունը նրանից, ում այն պատկանում է, քանի որ ցանկացած պետության մեջ իրենց իրավունքներով կարելի է օգտվել ոչ անսահմանափակ ձևով, այլ այնպես, որ դա չվնասի մարդկանց, հասարակությանը և պետությանը: Չի կարելի հաշվի չառնել և այն, որ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի միջև գոյություն ունեն սերտ կապ, օրգանական կախվածություն և փոխգործություն: Այդ իսկ պատճառով

⁴ Տե՛ս **Марченко М.Н.** Источники права. М., 2005, с. 29-30.

անհրաժեշտ է խոսել միասնական իրավունքի երկու՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի մասին, որոնց փոխգործությունից դուրս չի կարող գոյություն ունենալ և կենսագործվել օրենսդրական կամքը:

Իրավագոյացման գործընթացի ընդհանուր բնութագրման հիման վրա ամեն մի իրավական ընտանիքում և մանավանդ իրավական համակարգում արտահայտվում են այս գործընթացի բազմաթիվ առանձնահատկությունները, որոնք վերջնական հաշվով որոշում են ինչպես իրավաստեղծման սուբյեկտների առանձնահատկություններ այնպես էլ, առավել չափով, իրավունքի նորմերի ամրագրման և գոյության եղանակները:

Ելնելով իրավունքի նորմերի ամրագրման և գոյության եղանակներից, առանձնացվում են իրավունքի աղբյուրների հետևյալ տեսակները.

- իրավական սովորույթը⁵,
- դատական նախադեպը⁶,
- նորմատիվ-իրավական ակտը⁷,
- նորմատիվ պայմանագիրը⁸,
- իրավունքի ընդհանուր սկզբունքներ⁹,
- իրավական դոկտրինը¹⁰,
- կրոնական իրավունքը (կանոնական իրավունք, մուսուլմանական իրավունք, և այլն):

Նշված իրավունքի աղբյուրները, այս կամ այն չափով ու իրավաբանական ուժով գործում են տարբեր իրավական համակարգերում:

Իրավական սովորույթ՝ հասկացությունը, ձևերը

Իրավական սովորույթի տակ հասկանում են վարքաձևի կանոն, որը ձևավորվել է նրա երկարատև փաստացի կիրառ-

ման ընթացքում և պետության կողմից ճանաչվում է որպես համապարտադիր: Տվյալ իմաստով «ավանդույթ» հասկացությունը կարելի է համարել «սովորույթի» հոմանիշ, սակայն կարելի է տարբերակել դրանք:

Սովորույթները հանդիսանում են սոցիալական նորմերի յուրահատուկ տարատեսակ և ձևավորվում են առանձնահատուկ պայմաններում՝ տնտեսական և սոցիալական ներփակված որոշակի միջավայրում: Նրանք գործում են միայն ինքնակառավարվող միավորի տարածքում, այսինքն կրում են լոկալ, տեղայնացված բնույթ: Հասարակության կողմից ընդունվելուց հետո նրանք ձեռք են բերում նորմի (վարքաձևի կանոնի) ֆունկցիա, իսկ պետության կողմից ճանաչման սանկցիավորման դեպքում՝ դառնում են իրավունքի նորմ:

Ի տարբերություն սովորույթներից, ավանդույթները բնորոշվում են տրանս-ցեդենտությամբ: Այսինքն, ավանդույթները ծագում են միջհամայնքային կապերի հիման վրա, նրանց գործողությունը չի սահմանափակվում հստակորեն որոշակիացված տարածքով, ելնում են ինքնակառավարվող միավորների շահերի ընդհանրությունից՝ ի տարբերություն սովորույթների տեղայնական բնույթի, հանդիսանում են հասարակության զարգացման ավելի բարձր աստիճանի (ապրանքափոխություն, աշխատանքի միջհամայնքային բաժանում, նվաճում) արդյունք, պայմանավորված են մարդկային հանրությունների այնպիսի ձևերի առկայությամբ, ինչպիսիք են տոհմը, ցեղը, ազգությունը, կրոնական միավորումները, վերջապես, շնորհիվ միջհամայնքային որոշումների փոխակերպվում են:

⁵ Տե՛ս **Марченко М.Н.** նշվ. աշխ., էջ 483-502.

⁶ Տե՛ս Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր: Երևան, 2005:

⁷ Տե՛ս **Марченко М.Н.** նշվ. աշխ., էջ 115-266:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 267-329:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 330-355:

¹⁰ **Васильев А.А.** Правовая доктрина как источник права: вопросы теории и истории.

ՉԼՍ-ՆԵՐԸ ԵՎ ՀԱՆՁԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆՐԱՆՅՈՒՆԵՑԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԻՄԻՆԱԼՈՒԳԻԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

Երեմիա ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ

Հանգվածային լրատվության միջոցները, հանդիսանալով տեղեկատվության փոխանցման հզոր աղբյուր և հասարակական կարծիքի ձևավորման միջոց, իրենց ազդեցությունն ունեն հանրային կյանքի բոլոր ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության, կրթության, կրոնի, մշակույթի, հանցավորության և այլն: Ժամանակակից հասարակությունում մշակույթը մեծամասամբ ձևավորվում, տարածվում, զարգանում և պահպանվում է զանգվածային լրատվության միջոցների (ՉԼՍ) օգնությամբ: Հանգվածային լրատվության միջոցների՝ հատկապես հեռուստատեսության օգնությամբ են ընկալվում և մեկնաբանվում իրականության շատ երևույթներ և իրադարձություններ, այն իր ազդեցությունն ունի նաև հասարակական կարծիքի, հասարակության արժեհամակարգի ձևավորման ինչպես նաև մարդկանց գիտակցության վրա: Հանդիսանալով մասսայական մշակույթի անքակտելի մասը՝ ՉԼՍ-ները (տպագիր, հեռուստատեսային, էլեկտրոնային և այլն) էական ազդեցություն են ունենում անձի և հատկապես անչափահասների ձևավորման վրա, հանդիսանում են վարքագծի մոդելավորման յուրահատուկ գործոն: ՉԼՍ-ները հսկայական ներուժ ունեն ձևավորելու ինչպես կրիմինոգեն, այնպես էլ հակակրիմինոգեն գործոններ: Ժամանակակից պայմաններում հանդիսանալով առաջատար սոցիալական ինստիտուտ, նրանք ունակ են ոչ միայն ապահովել մշակութային իդեալների պահպանումը և զարգացումը, այլև դրանց աղավաղումը և ոչնչացումը: Եվ կրիմինոլոգիան, որպես գիտություն չի կարող ուշադրության չարժանացնել այս երևույթները, որոնք սերտորեն կապված են հասարակական կյանքի բոլոր ասպեկտների հետ, քանի որ ինչպես արդեն նշեցինք, ՉԼՍ-ները ունեն կրիմինոգեն և հակակրիմինոգեն մեծ պոտենցիալ:

Կրիմինոլոգիայի խնդիրն է հայտնաբերել այդ պոտենցիալը, որոշել, թե զանգվածային լրատվության միջոցների որ տարրերն են առավելապես հազեցած կրիմինոգեն և հակակրիմինոգեն գործոններով, մշակել ու ներդնել միջոցներ՝ հնարավորինս չեզոքացնելու դրանց հանցածին նշանակությունն ու բարձրացնելու հակակրիմինոգեն գործոնների ազդեցությունը: Կրիմինոլոգիան պետք է բացահայտի հանցավորության և դրա կանխարգելման արդյունավետության վրա ՉԼՍ-ների ազդեցու-

թյան օրինաչափությունները: Զանգվածային լրատվության միջոցները դիտելով որպես կրիմինալոգիական ուսումնասիրության օբյեկտ, առաջին հերթին պետք է առանձնացնել դրանց ուսումնասիրման հիմնական ուղղությունները: Նախ և առաջ, անհրաժեշտ է վերլուծել ՉԼՍ-ների դերը հանցավորության պատճառականության մեջ, այսինքն՝ թե որքանով կարող են զանգվածային լրատվության միջոցները հանդիսանալ հանցագործության պատճառ կամ հանցանքի կատարմանը

նպաստող պայման: Հանցավորության պատճառների, պայմանների և հանցավորությանը նպաստող գործոնների հիմնահարցը հանդիսանում է ամենաբարդ և ամենաքննարկվող հիմնախնդիրներից մեկը կրիմինալոգիական գրականության մեջ: Ընդհանրապես, հանցավորությունը բազմաթիվ սոցիալական, տնտեսական, իրավական, կազմակերպական, բարոյահոգեբանական, մշակութային և այլ գործոնների ու դրանց միջև եղած հակասությունների արդյունք է: Որպես սոցիալական երևույթ, այն ունի հարաբերականորեն ինքնուրույն և զանգվածային բնույթ¹:

Հետևաբար, պարզել հանցավորության վրա ՁԼՄ-ների կոնկրետ և ուղղակի ազդեցությունը, բավականին դժվար է: Ուստի այդքան էլ ճիշտ չէ ասել, որ հանցավորությունը ՁԼՄ-ների ազդեցության արդյունք է, այլ ավելի շուտ կարելի է ասել, որ ՁԼՄ-ների բացասական ազդեցության հետևանքով անձի մոտ կարող են ձևավորվել որոշակի հանցածին գործոններ, որոնք համապատասխան պայմանների առկայության դեպքում և համապատասխան իրադրության մեջ անձին կարող են մղել հակաիրավական արարքի կատարման:

Միևնույն ժամանակ, բացի վերը նշված օբյեկտիվ պատճառներից ու գործոններից, անհատական մակարդակում հանցագործության պատճառ կարող են հանդիսանալ անձի սոցիալական, կենսաբանական, բարոյական, հոգևոր, հոգեհուզական և այլ առանձնահատկությունների հետ կապված բազմաթիվ սուբյեկտիվ գործոններ, որոնք համապատասխան իրադրության և հանգամանքների ազդեցության ներքո պայմանավորում են նրա հանցավոր վարքագիծը: Այսինքն՝ կարելի է ասել, որ հանցավոր վարքագծի պատճառներն ընկած են անհատի գիտակցության ոլորտում²: Եթե հանցավոր վարքագծի պատճառները դիտարկենք այս տեսանկյունից, ապա կարող ենք

ասել, որ զանգվածային լրատվության միջոցները, հանդիսանալով տեղեկատվության, սոցիալական արժեքների ու գաղափարների փոխանցումն ու տարածումն ապահովող ինստիտուտ, մեծ ազդեցություն կարող են ունենալ անձի արժեքամակարգի և վարքագծի ձևավորման վրա: ՁԼՄ-ների միջոցով մարդկանց հաղորդվող գաղափարները, նորմերը, պատկերացումները, արժեքները, ընկալվելով նրանց գիտակցության մեջ, օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների ազդեցության տակ հանգեցնում են վարքագծի մոդելավորման: Եվ եթե հաշվի առնենք, որ փոխանցվող տեղեկատվությունը կարող է պարունակել կրիմինոգեն տարրեր, ապա բացառված չէ, որ դա կարող է նպաստել նաև հանցավոր վարքագծի ձևավորմանը:

Բացի հանցավոր վարքագծի ձևավորման վրա ունեցած ազդեցությունից, ՁԼՄ-ները որոշակի առումով կարող են հանդիսանալ նաև հանցագործի անձի ձևավորման գործոն: Միայն հանցավոր վարքագծի անձնային, սուբյեկտիվ պատճառների խորը ուսումնասիրությունը թույլ կտա վերլուծել հանցավորության օբյեկտիվ գործոնները³: Հանցագործի անձի կրիմինալոգիական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզել և գնահատել անձնային այն առանձնահատկությունները և գծերը, որոնք որոշակի դեր են կատարում հանցագործության պատճառական մեխանիզմում և նշանակություն ունեն նրա հետագա կանխարգելման և նախագուշացման համար: Ինչպես նշում է հայտնի կրիմինոլոգ Յու. Անտոնյանը, հանցագործի անձը, առաջին հերթին, իրենից ներկայացնում է որպես սոցիալական նշանակություն ունեցող բացասական հատկությունների ամբողջություն, որոնք ձևավորվում են այլ մարդկանց հետ բազմազան և սիստեմատիկ փոխազդեցության ընթացքում⁴: ՁԼՄ-ները, ունենալով հանցածին և հակահան-

¹ Репецкая А.Л., Рыбальская В.Я. Криминология. Общая часть: Учеб. пособие. Иркутск, 1999. С.47.

² Криминология: учебное пособие для студентов вузов / под ред. С.Я. Лебедева, М.А. Кочубей. М., 2007. — С. 95.

³ Криминология: учебник / С.М. Иншаков. — М.: Юриспруденция, 2000. — С. 36.

⁴ Криминология: учебник для бакалавров / Ю. М. Антонян. — 2-е изд. М.: Издательство Юрайт, 2012. — С. 103.

ցածին նշանակություն, կարող են մեծ ներգործություն ունենալ անձի մոտ սոցիալական նշանակություն ունեցող հատկանիշների ձևավորման վրա:

Կրիմինալոգիական գրականության մեջ գոյություն ունի նաև այն մոտեցումը, որ հանցագործի անձը բնութագրվում է սոցիալ-հոգեբանական այնպիսի հատկանիշներով, որոնք ձևավորվում են անհատի սոցիալիզացիայի ընթացքում և պայմանավորում են անձի կողմից իր պահանջմունքները բավարարելու համար հանցավոր միջոցների ընտրությունը, ինչը և կարող է հանգեցնել հանցագործության կատարման⁵: Ելնելով վերոգրյալից, անձի որակական բնութագրերը ձևավորվում են նրա սոցիալիզացիայի արդյունքում, իսկ ՁԼՄ-ները, ինչպես գիտենք, ժամանակակից հասարակությունում հանդիսանում են անձի սոցիալիզացիայի հզորագույն միջոց: Այդ պատճառով նրանց դերը բավականին մեծ է սոցիալիզացիայի ընթացքում անձի կրիմինոգեն և հակակրիմինոգեն հատկանիշների ձևավորման հարցում: Այս հետևությունները հաստատվում են նաև մի շարք կրիմինալոգիական հետազոտություններով⁶:

Մարդկանց գիտակցության վրա ունեցած իր ազդեցությամբ ՁԼՄ-ների մեջ հատկապես առանձնանում է հեռուստատեսությունը: Այն հոգեբանական մեծ ազդեցություն ունի հատկապես անչափահասների վրա, ինչին բազմիցս անդրադարձել են մի շարք կրիմինոլոգներ և հոգեբաններ իրենց աշխատանքներում: Հեռուստատեսության ազդեցությանը ենթարկվելուն նպաստում են անչափահասների այնպիսի հոգեբանական առանձնահատկություններ, ինչպիսիք են հետաքրքրասիրությունը, ռիսկայնությունը, անվստահությունը և տազնապայնությունը, նմանակման ցանկությունը, իռացիոնալ ընկալումը, մեծ ուշադրությունը ոչ ստան-

դարտ ձևով ներկայացված տեղեկատվության նկատմամբ⁷:

ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյին կից քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնը 2011թ.-ին ուսումնասիրություն է իրականացրել բնակչության շրջանում, նպատակ ունենալով բացահայտելու ՀՀ -ում հեռուստատեսության դերը հասարակության մեջ: Նպատակն իրականացնելու համար հարցում է անցկացվել երևան քաղաքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի քաղաքներում և գյուղական համայնքներում: Հարցումն իրականացվել է հարցաթերթիկային հարցման միջոցով: Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցել է 998 մարդ:

Մասնագետները առանձնացնում են հեռուստատեսությամբ տարածվող որոշ բացասական երևույթներ, որոնք մեծ ազդեցություն են ունենում անչափահասների վրա: Դրանցից են առաջին հերթին անպարկեշտ բառապաշարի օգտագործումը: Հեռուստատեսությամբ և զանգվածային լրատվության այլ միջոցներով անպարկեշտ բառապաշարի օգտագործումը և տարածումը հանգեցնում է ընդհանուր սոցիալական վերահսկողության անկմանը, խոչընդոտում է հասարակության զարգացմանը և նպաստում լեզվի ու մշակույթի աղքատացմանը: Հասարակական վայրերում ժարգոնային արտահայտությունների օգտագործումը կարծես թե դարձել է սովորական, որն արժանանում է ոչ թե պարսավանքի, այլ նույնիսկ ուշադրության: Այսպես, մեր կողմից իրականացված հարցման մասնակիցների գերակշռող մասը կարծում է, որ հայկական հեռուստահաղորդումները սովորեցնում են ոչ պարկեշտ բառապաշար (47.5%), աղավաղում են բարոյական նորմերը (42.9%):

Հաջորդ բացասական երևույթը, որն արժանի է ուշադրության, այն է, երբ հեռուս-

⁵ **Лебедев С.Я.** Личность преступника и ее криминологическая характеристика // Криминология: учеб. пособие / под ред. **С.Я. Лебедева, М.А. Кочубей.** — М., 2007. — С.130

⁶ **Чабанянец М.Б.** Криминологические аспекты влияния жестокости и насилия в средствах массовой коммуникации, 2002. **Гололобова Ю.И.** Средства массовой информации и преступность: дис. ... канд. юрид. наук. — М., 2002.

⁷ **Новиков А.В.** Четвертая власть: отчет о научно-практической конференции /Государство и право. 1994. N5. С. 48

տատեսությամբ հակաիրավական վարքը ներկայացվում է գրավիչ, ընդունելի ձևով, հանցագործը հերոսացվում է: Շատ դեպքերում հեռուստատեսությամբ ցուցադրվող ֆիլմերում, հեռուստասերիալներում և այլ արտադրանքում հանցագործները, նրանց ապրելակերպն ու գործունեությունը ներկայացվելով խորհրդավոր կերպով, դարձնում են գրավիչ, հանցագործները արժանանում են համակրանքի ու հավանության, իսկ հանցավոր կյանքը ներկայացվում է ռոմանտիկորեն: Եվ սա իր հերթին կարող է հանգեցնել հեռուստատեսությամբ հանցավոր ենթամշակույթների ձևավորմանը և տարածմանը: Հեռուստատեսությամբ և զանգվածային լրատվության այլ միջոցներով կարող են տարածվել հանցագործության կատարման միջոցների և եղանակների վերաբերյալ տեղեկատվություն: Այսպես օրինակ, շատ են այնպիսի հաղորդումները, ինչպես նաև թերթերում և էլեկտրոնային մամուլում հրապարակումները, որոնցում մանրամասն նկարագրվում են կատարված հանցագործությունների հանգամանքները և դրվագները, որոնք դիտվում են հասարակության լայն շերտերի կողմից և այսպես ասած սովորեցնում են մարդկանց (հատկապես անչափահասներին) հանցագործության կատարման նոր եղանակներ ու միջոցներ:

Հեռուստատեսության բացասական կողմերից է նաև բռնության և դաժանության տեսարանների ցուցադրումը: Այն ունի յուրահատուկ հոգեբանական ազդեցություն հատկապես երեխաների վրա: Ինչպես գիտենք, շատ անչափահասների հատուկ են ագրեսիվ մղումները, և դրանց չեզոքացումը բավականին դժվար է այնպիսի պայմաններում, երբ երեխան անընդհատ դիտում է բռնություն և դաժանություն պատկերող տեսարաններ: Արևմտյան երկրներում կատարված բազմաթիվ հետազոտություններ թույլ են տալիս մասնագետներին պնդելու, որ հեռուստատեսությամբ և կինոթատրոններում ցուցադրվող բռնության ու ագրեսիայի տեսարանները ուժեղացնում են թե անչափահասների, թե չափահասների ագրեսիվ մղումները⁸: Մեր

կողմից կատարված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հայկական հեռուստատեսությամբ բռնության տեսարանները՝ ըստ հարցման մասնակիցների, բավականին շատ են (45.8%):

Ներկայումս հայկական հեռուստատեսությամբ բավականին տարածված է հայկական սերիալների ցուցադրությունը: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայկական հեռուստասերիալները ունեն մեծ լսարան և կարող են ունենալ վերը նշված բացասական գծերը, մեր հետազոտության մեջ անդրադարձել ենք նաև դրանց: Այսպես, բնակչության շրջանում անցկացված հարցումները ցույց տվեցին, որ հարցվողների 45%-ը դիտում է հայկական սերիալներ, 25.3%-ը՝ ռուսական, 9.9%-ը՝ լատինաամերիկյան, իսկ 36.1%-ը սերիալ չի դիտում: Ինչպես տեսնում ենք, հարցվողները հիմնականում գերադասում են դիտել հայկական սերիալներ, սակայն այն հարցին, թե ժամանակակից հայկական հեռուստաթերթի բացասական կողմերը որոնք են, հարցվողների գերակշիռ մասը (62.9%) պատասխանել է. սերիալների առատությունը: Կարելի է եզրակացնել, որ սերիալների առատությունը հարցվողները համարում են հեռուստատեսության բացասական կողմ, սակայն այլընտրանք չունենալով դիտում են: Հեռուստատեսության գործառույթներից մեկը դաստիարակչական գործառույթն է, ուստի փորձել ենք պարզել, թե ինչպես են հարցման մասնակիցները գնահատում հայկական հեռուստասերիալները: Պատասխանների ամենահաճախ հանդիպող տարբերակները հետևյալներն են. սովորեցնում են ոչ պարկեշտ բառապաշար (55.1%), աղավաղում են բարոյական նորմերը (45.6%), հակադաստիարակչական են (42.4%), արտացոլում են իրականությունը (40.7%)⁹:

Մեր կողմից կատարված հետազոտության ընթացքում հայկական հեռուստատեսությամբ ցուցադրվող որոշ հայկական սերիալներ ենթարկվել են նաև որակական վերլուծության, պարզելու համար, թե որքանով են դրանք հագեցած բռնության և ագրեսիայի, ինչպես նաև տարբեր տեսակի

⁸ Бартол К. Психология криминального поведения. СПб. 2004, стр. 169:

⁹ Այստեղ ներկայացված են հարցվողների պատասխանների ամենաբարձր ցուցանիշները:

հանցագործություններ նկարագրող տեսարաններով: Սերիալների անվանումները չենք նշի, այլ կփորձենք ընդհանրացված ձևով ներկայացնել այն բացասական երևույթները, որոնք առկա են սերիալների բովանդակության մեջ, պարունակում են հանցածին տարրեր և կարող են բացասական ազդեցություն ունենալ դիտողների վրա: Վերլուծությունը ցույց տվեց, որ հայկական սերիալներից շատերը ունեն կրիմինալ սյուժե, բավականին շատ են բռնության տեսարանները: Դրանք հագեցած են սպանության, առևանգման, ծեօի, մարմնական վնաս պատճառելու, ազատությունից զրկելու, պատանդ պահելու, թմրամիջոցների օգտագործման, ոստիկաններին կաշառելու, զինված հարձակումների, ավազակության, ինչպես նաև բռնություն և դաժանություն նկարագրող բազմաթիվ այլ տեսարաններով: Որոշ սերիալներում հանցավոր կյանքը ներկայացված է այսպես ասած շատ ռոմանտիկորեն, իսկ հակաիրավական վարքագիծը՝ գրավիչ, ընդունելի ձևով: Քրեական հեղինակությունների և հանցագործների առջև բացվում են բոլոր դռները, նրանք հեշտությամբ լուծում են իրենց խնդիրները, բոլորը նրանց կարծես թե հարգում են: Դրանցում բացասական կերպարները ավելի շատ են, քան դրականները, իսկ դրական կերպարներն էլ, եթե այդպիսիք կան, ևս համդիսանում են հանցագործ կյանքով ապրողներ, քրեական հեղինակություններ և նույնպես կատարում են տարբեր հանցագործություններ: Բացահայտորեն ցույց է տրվում, որ բարձր դիրքի, հարստության ու իշխանության կարելի է հասնել հանցավոր ճանապարհով՝ սպանելով, զավթելով և հանցավոր այլ ձևերով: Ցույց է տրվում, թե ինչպես են հանցագործները մնում անպատիժ, իսկ իրավապահ մարմիններին ոչ մի կերպ չի հաջողվում պատասխանատվության ենթարկել նրանց: Դա կարող է բնակչության մեջ հանցագործների անպատժելիության տպավորություն ստեղծել: Հեռուստասերիալներում շատ է նաև «գողական» և ժարգոնային խոսքը: Ընդհանուր առմամբ ուսումնասիրված հեռուստասերիալներում բացասական արժեքները ավելի են գերակշռում, քան դրականները: Հանցավոր կյանքը և հանցագործներին մնան ձևով ներկայացնելը, անշուշտ, հանգեցնում է նաև պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց, այդ թվում և իրավապահ մարմիններ-

րի ու դրանց աշխատակիցների, նրանց գործունեության, հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի նկատմամբ բացասական կարծիքի ձևավորմանը:

Ընդհանրացնելով, կարելի է ասել, որ հարցման մասնակիցների մեծ մասի ընկալմամբ հայկական հեռուստահաղորդումները հիմնականում իրենց բնույթով հակադաստիարակչական են, անհետաքրքիր, բարոյական նորմերը աղավաղող, բռնություն քարոզող, ոչ պարկեշտ բառապաշարով լի:

Կարելի է հավաստել, որ պնդումները, թե ժողովրդին հրամցվում է այն, ինչ ինքը ժողովուրդն է ցանկանում, այնքան էլ ճիշտ չէ: Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, մասնավորապես սերիալներ հաճախ դիտելը և սերիալների, այսպես ասած ժողովրդականությունը, հիմնականում պայմանավորված են այլընտրանքի բացակայությամբ: Բայց պետք է նշել նաև, որ արժեհամակարգը մեկընդմիջտ տրված կայուն համակարգ չէ, այն դինամիկ է և ձևավորվում է տարբեր գործոնների ազդեցության տակ: Ուստի հեռուստատեսությունը այս հարցում կարևոր նշանակություն ունի և պետք է նպաստի ոչ թե սերիալ ու գովազդ դիտող, սպառողական հոգեբանություն ունեցող, ցածրորակ ու էժանագին արվեստի գործերով հիացող, մտածելու, սեփական կարծիքն ունենալու ունակությունից զուրկ, այլ ինտելեկտուալ, ազատ ու բարձրաճաշակ քաղաքացու ձևավորմանը:

Կարծում ենք, որ հայկական հեռուստատեսությամբ պարբերաբար խախտվում է **«Երեխայի իրավունքների մասին»** ՀՀ օրենքի 18 հոդվածի պահանջը, համաձայն որի՝ արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը: Օրենքի պահանջը չկատարելու պատճառներից մեկն այն է, որ գործող օրենսդրությամբ այն ապահովելու որևէ արդյունավետ մեխանիզմ նախատեսված չէ: **Առաջարկում ենք քննարկել նշված արարքի համար վարչական կամ քրեական պատասխանատվություն նախատեսելու, ինչպես նաև զանգվածային տեղեկատ-**

վությունը կամ գրականությունը որպես «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի պահաջներին չհամապատասխանող գնահատելու մեխանիզմը մշակելու հարցերը:

Մեր կարծիքով, պետք է լրջորեն մտածել հեռուստատեսությամբ հեռարձակվող սերիալների ու այլ արտադրանքի բովանդակության շուրջ, հնարավորինս հաճախ ներկայացնել դրական, սոցիալապես օգտակար վարքագծի այնպիսի օրինակներ, որոնց միջոցով հերոսը հաջողության է հասնում: Հակառակ դեպքում ստացվում է, որ հաջողության կարելի է հասնել միայն հակաիրավական, հանցավոր վարքագծի միջոցով: Միգուցե մեր իրականության մեջ նման վարքագծի օգնությամբ հաջողության հասնելու դեպքերը թույլատրելիից շատ են և դա ակնհայտ է: Բայց, երբ դա պարբերաբար ցուցադրվում է հեռուստատեսությամբ, ապա կարծես թե պաշտոնապես խրախուսվում է, ինչն անթույլատրելի է:

Աշխարհի շատ երկրներում, այդ թվում՝ կայացած ժողովրդավարական այնպիսի պետություններում ինչպիսիք են ԳՂՀ-ն, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն, Կանադան, Ճապոնիան, գործում են ՁԼՄ-ների գործունեության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող մարմիններ: Մասնավորապես ԱՄՆ-ում՝ Կապի դաշնային հանձնաժողովը, ԳՂՀ-ում՝ Երիտասարդության համար վնասակար հեռուստատեսային և կինոարտադրանքի ստուգման դաշնային գերատեսչությունը, Մեծ Բրիտանիայում՝ Կինոֆիլմերի դասակարգման բրիտանական հանձնաժողովը: Նշված մարմինները ՁԼՄ-ների մոնիթորինգ են իրականացնում, կազմում են այն հեռուստանյութերի և լրատվական ու տեղեկատվական նյութերի ցուցակը, որոնք գնահատվում են որպես երիտասարդության և անչափահասների համար վնասակար: Բայց իրավական հակազդեցությունը տարբեր երկրների օրենսդրություններում տարբեր է: Մասնավորապես, ԱՄՆ-ում բավականին կոշտ օրենսդրություն է և Կապի դաշնային հանձնաժողովը կարող է ուղղակի արգելել որևէ ֆիլմի կամ այլ արտադրանքի ցուցադրություն իսկ ցուցադրելու դեպքում մի քանի հարյուր հազար դոլարի հասնող տուգանքներ կիրառել (օրինակ՝ 2004թ. Հանձնաժո-

ղովը տուգանեց «Վայքոմ» ընկերությանը՝ ընդամենը 0,5 վայրկյանով կնոջ բաց կուրծք եթերով ցուցադրելու համար): Մեծ Բրիտանիայում Կինոֆիլմերի դասակարգման բրիտանական հանձնաժողովը իրավունք ունի տուգանելու կամ պահանջելու մինչև երեք տարի ժամկետով ազատազրկում այն անձի համար, որը խախտում է «Անպարկեշտ հրապարակումների մասին» օրենքի պահանջները: Ճապոնիայի օրենսդրության համաձայն՝ հեռարձակող պարտավոր է նախօրոք զգուշացնել, որ հեռարձակվող արտադրանքում առկա են սեքսի կամ բռնության տեսարաններ: Օրենքի պահանջը խախտողին սպառնում է խոշոր չափերի տուգանք:

Կարծում ենք, որ ճիշտ կլիներ, որ մեր պետությունում ևս ստեղծվեր ՁԼՄ-ների նկատմամբ վերահսկողությունն ապահովող համապատասխան օրենսդրություն և վերահսկողություն իրականացնելու լիազորություն օժտված մարմիններ, որտեղ ընդգրկված կլինեն նաև գիտության, մշակույթի, արվեստի բնագավառի մասնագետներ:

ՁԼՄ-ների նկատմամբ վերահսկողությունն ապահովող համապատասխան օրենսդրության բացակայությունը մեր երկրում ոչ միայն թույլ չի տալիս ապահովագրելու երեխային առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվությունից և գրականությունից, այլև հակասում է միջազգային իրավունքի նորմերին: Այսպես՝ **Անդրսահմանային հեռուստատեսության մասին** Եվրոպական կոնվենցիայի հոդված 7-ը (Հեռուստատեսարձակողի պարտականությունները), ամրագրում է, որ հեռուստածրագրի բոլոր տարրերը, դրա բովանդակությունը, ներկայացումը չպետք է **անպարկեշտ լինեն և մասնավորապես պոռնոգրաֆիա պարունակեն, չպետք է չափազանց առանձնացնեն ու ընդօժեն բռնություն կամ ռասայականատելություն:**

Կարծում ենք, որ ժամանակն է լուրջ քննարկելու արտասահմանյան փորձը ՀՀ-ում ներդնելու և ՁԼՄ-ների նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն սահմանող օրենսդրություն ձևավորելու հարցը:

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՒԺԻ ՉԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Վիզեն ԲՈՉԱՐՅԱԼ

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Զինավոր ՄԵՂՐՅԱԼ

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և ուժի չգործադրման սկզբունքների հարաբերակցությունը կարելի է քննարկել երկու հիմնական հարթության վրա: Առաջինը պետությունների կողմից ուժի գործադրման արգելքն է ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների դեմ, երկրորդը՝ ուժի գործադրման հնարավորությունը հենց ինքնորոշման համար պայքարող սուբյեկտների կողմից:

XX դարի 60-ական թթ. սկսած՝ սպազադության համար պայքարող ազգերի, ինչպես նաև սոցիալիստական պետությունների քաղաքական շրջանակներում սկսեց արմատավորվել այն պատկերացումը, որ ազատագրական շարժումները «արդար պատերազմի» նոր դրսևորում են: Սա, մյուս կողմից պետք է նշանակեր, որ ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների դեմ ցանկացած ուժի գործադրում պետք է որակվեր միջազգային իրավունքի նորմերի ոտնահարում:

Քննարկվող հիմնահարցի առաջին հարթությունը կամ ասպեկտը պետք է դիտարկել ՄԱԿ-ի կանոնադրության ենթատեքստում անգամ այն պարագայում, երբ այդ փաստաթղթի ստեղծողներն, ամենայն հավանականությամբ, չէին կանխատեսում ապագադրության և բազմաթիվ նոր պետությունների ստեղծման արագ գործընթացը², որը սերտորեն կապված է խնդրո առարկայի հետ: Սակայն Կանոնադրու-

թյունը եղել և շարունակում է մնալ պայմանագիր և որպես այդպիսին ենթակա է միջազգային պայմանագրերը մեկնաբանող հստակ սահմանված կանոնների³: Հատկանշական է, որ, ըստ միջազգային իրավունքի, պայմանագրերը «ապրող փաստաթղթեր» (“living instruments”)⁴ են և որպես այդպիսիք ենթակա են մեկնաբանման այն նորմատիվ բազայի համատեքստում, որը գոյություն ունի մեկնաբանման պահին:

¹ Pomerance M. Self-Determination in Law and Practice: The New Doctrine in the United Nations. Martinus Nijhoff Publishers, The Hague-Boston-London, 1982. P. 48.

² Ibid:

³ Conditions of Admission of a State to Membership in the United Nations (Article 4 of the Charter), Advisory Opinion, ICJ Reports 57 (1948). P. 61:

⁴ Տե՛ս մասնավորապես Tyrer v. the United Kingdom, Application no. 5856/72, Judgment of 25 April 1978, Series A no. 26, P. 15-16, § 31:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ բազմաթիվ հեղինակներ գտնում են, որ ՄԱԿ-ի կանոնադրության դրույթները մեկնաբանելիս պետք է օգտագործվեն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերը⁵:

Հետևաբար, հաշվի առնելով Գլխավոր ասամբլեայի բանաձևերի շնորհիվ ինքնորոշման սկզբունքին տրված նոր իմաստն ու բովանդակությունը՝ այսօր կարելի է հստակորեն ասել, որ ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների դեմ ուժի գործադրման արգելքը անմիջականորեն բխում է նաև ՄԱԿ-ի կանոնադրության համակարգային ընթերցումից⁶: Այսպես, Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պետությունները չպետք է գործադրեն ուժ, որն ուղղված է այլ պետությունների տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ կամ որևիցե այլ կերպ հակասում է ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին, մինչդեռ այդ նպատակներից մեկը, ըստ Կանոնադրության 1-ին հոդվածի, պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացումն է ժողովուրդների հավասարության և ինքնորոշման իրավունքի հիման վրա:

Այս արգելքն ավելի է հստակեցվում Գլխավոր ասամբլեայի հռչակագրերի միջոցով. այսպես՝ ըստ Գաղութացված ազգերին և ժողովուրդներին անկախություն շնորհելու վերաբերյալ հռչակագրի՝ «բոլոր ռազմական գործողությունները կամ ցանկացած բնույթի հարկադիր միջոցները, որոնք ուղղված են կախյալ ժողովուրդների դեմ, պետք է դադարեցվեն»:⁷ Իսկ ահա Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի համաձայն՝ յուրաքանչյուր պետություն «պարտավոր է ձեռնպահ մնալ ցանկացած հարկադիր գործողությունից, որը զրկում է... ժողովուրդներին իրենց ինքնորոշման իրավունքից, ազատությունից և անկախությունից»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների դեմ ուժի գործադրման արգելքը կարելի է համարել միջազգային-իրավական կայացած նորմ:

Երկրորդ հիմնահարցը՝ ուժի գործադրումը ինքնորոշման համար պայքարող սուբյեկտների կողմից, ինչպես նաև այլ պետությունների կողմից վերջիններիս ռազմական օժանդակություն հնարավորությունը, միջազգային-իրավական առումով առավել վիճահարույց է. դա ապագադրության ժամանակաշրջանում տարբեր քաղաքական ճամբարներում գտնվող պետությունների միջև լուրջ տարածայնությունների առարկա էր⁷:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գաղութատեր պետությունների տիրապետությունը հանդիպեց ռազմական դիմադրության. Ֆրանսիայի դեմ ուղղված ազատագրական շարժումներ սկսվեցին Թունիսում, Մարոկկոյում և Ալժիրում, Միացյալ Թագավորության դեմ՝ Մալայան կղզիներում, Քենիայում, Կիպրոսում, Նիդերլանդների դեմ՝ Ինդոնեզիայում, Պորտուգալիայի դեմ՝ Հնդկաստանի հարակից կղզիներում և այլն:

Դրա արդյունքում պետությունները սկսեցին ավելի ակտիվ աջակցել հանուն ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների՝ գաղութատերերի դեմ ուժ գործադրելու, ինչպես նաև այդ ժողովուրդներին ռազմական օժանդակություն տրամադրելու իրավունքի միջազգային-իրավական ճանաչմանը:

Գլխավոր ասամբլեայի ընդունած հռչակագրերը հասկանալի պատճառներով այս հարցերին ամբողջական պատասխան չեն տալիս. այլ պարագայում դրանք պարզապես չէին ստանա ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունների կամ առնվազն դրանց ճնշող մեծամասնության հավանությունը: Այսպես, Գաղութացված պետությունների և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագիրն ընդհանրապես չի անդրադառնում ժողովուրդների կողմից ուժի գործադրման հիմնահարցին:

Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը նույնպես չի անդրադառնում այդ խնդրին:

Այդ իսկ պատճառով գոյություն ունեցող նորմերի մասին պատկերացում կարելի է կազ-

⁵ Տե՛ս օրինակ Schachter O. The Right of States to Use Armed Force // Michigan Law Review, Vol. 82 (1984). P.1633:

⁶ Hannikainen L. Peremptory Norms (Jus Cogens) in International Law: Historical Development, Criteria, Present Status. Lakimieslton Kustannus, Finish Lawyers' Publishing Company, 1988. P. 359:

⁷ Gray C. International Law and the Use of Force. Oxford University Press, Oxford-New York, 2008, 3rd ed. P. 51:

մեկ ՄԱԿ-ի մարմինների՝ կոնկրետ միջազգային վեճերի շրջանակներում ընդունված բանաձևերից:

Առաջին նման բանաձևը Գլխավոր ասամբլեայի «Գաղութացված պետություններին և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագրի իմպլեմենտացիա» վերտառությամբ 2105 բանաձևն էր, որն ընդունվել է՝ ի պատասխան Պորտուգալիայի, Գարավային Աֆրիկայի և Ռոդեզիայի բռնատիրական գործողությունների, և ճանաչում է «գաղութային տիրապետության ներքո գտնվող ժողովուրդների պայքարի օրինականությունը՝ ի իրականացում իրենց ինքնորոշման իրավունքի» և կոչ էր անում «բոլոր Պետություններին գաղութային Տարածքներում ազգային-ազատագրական շարժումներին տրամադրել նյութական և բարոյական օժանդակություն»⁸:

Նույն վերտառությամբ և նման բովանդակությամբ բանաձևեր Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեցին նաև 60-ականների հաջորդ տարիների ընթացքում⁹: 1970 թ. ընդունված «Գաղութացված պետություններին և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագրի ամբողջական իմպլեմենտացիայի գործողությունների ծրագիր» վերտառությամբ բանաձևը (85-5-15) ևս մեկ քայլ առաջ է գնում և արդեն հռչակում է, որ «գաղութատիրության շարունակումն իր բոլոր դրսևորումներում հանցագործություն է, որը հանդիսանում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, Գաղութային պետություններին և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագրի և միջազգային իրավունքի սկզբունքների ոտնահարում»¹⁰:

Սակայն Գլխավոր ասամբլեայի «ժողովուրդների ինքնորոշման իրավունքի համընդհանուր շուտափույթ իրականացման և

մարդու իրավունքների պահպանման և արդյունավետ երաշխավորման համար գաղութացված պետություններին և ժողովուրդներին անկախության շնորհման կարևորությունը» 31/34 բանաձևն¹¹ արդեն հաստատում էր. «բոլոր հնարավոր միջոցներով, ներառյալ՝ զինված հակամարտության միջոցով, անկախության... համար ժողովուրդների պայքարի օրինականությունը»:

Մեկ այլ կարևոր առաջխաղում էր Գլխավոր ասամբլեայի հանրահայտ «Ազրեսիայի բնորոշում» վերտառությամբ 3314 բանաձևում ինքնորոշման իրավունքի վերաբերյալ դրույթ զետեղելը: Վերջինիս 7-րդ հոդվածը սահմանում է.

«Այս բնորոշման ոչ մի դրույթ և մասնավորապես վերջինիս 3-րդ հոդվածը չեն կարող որևէ կերպ ազդել Կանոնադրությունից բխող ժողովուրդների, մասնավորապես գաղութային և ռախտական ռեժիմների կամ օտարերկրյա տիրապետության այլ ձևերի ներքո գտնվող այն ժողովուրդների ինքնորոշման, հավասարության և անկախության իրավունքի վրա, որոնք բռնի կերպով զրկվել են այդ իրավունքից, և որոնց մասին հիշատակում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը, և ոչ էլ այդ ժողովուրդների՝ Կանոնադրության սկզբունքներին և վերոնշյալ հռչակագրին համապատասխան այդ նպատակի համար պայքարելու և աջակցություն փնտրելու ու ստանալու իրավունքը»¹²:

Անցյալ դարի 60-ական և 70-ական թթ. քաղաքական և իրավական միտքը զարգացրեց երկու արդարացում՝ ի պաշտպանություն գաղութատիրության դեմ պայքարում ուժի գործադրման: Առաջինի համաձայն՝ գաղութատիր-

⁸ Implementation of the Declaration on the Granting of Independence to Colonial Countries and Peoples, GA resolution 2105 (XX). UN Doc. A/PV.1405, 20 December 1965. § 10:

⁹ Տե՛ս օրինակ GA resolution 2189 (XXI). UN Doc. A/PV.1492, 15 December 1966. § 7: GA resolution 2326 (XXII). UN Doc. A/PV.1636, 16 December 1967:

¹⁰ Programme of action for the full implementation of the Declaration of Granting of Independence to Colonial Countries and Peoples, GA resolution 2621 (XXV). UN Doc. A/8086, 12 October 1970. § 1:

¹¹ GA resolution 31/34. UN Doc. A/31/291, 30 November 1976. § 1:

¹² Definition of Aggression, GA resolution 3314 (XXIX), Supp. No. 31 UN Doc. A/9631, 14 December 1974. Art. 7:

րությունը ոչ այլ ինչ է, քան շարունակվող ագրեսիա¹³: Սա հիմնական փաստարկն էր, որով ՅՆԴկաստանը փորձում էր արդարացնել իր ռազմական գործողությունները Պորտուգալիայի կողմից գաղութացված Գոա տարածաշրջանը զավթելու ժամանակ: Ըստ ՅՆԴկաստանի պատճառաբանության՝ 16-րդ դարի սկզբին Պորտուգալիայի կողմից նվաճված Գոա շրջանում նրա շարունակական ներկայությունը ոչ այլ ինչ էր, քան շարունակվող ագրեսիա, որը, ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի դրույթներին համապատասխան ՅՆԴկաստանին, ինքնապաշտպանության իրավունք էր ընձեռում:

Տվյալ մեկնաբանության հետ դժվար է համաձայնվել երկու պատճառներով: Առաջին՝ այն հաշվի չի առնում ինտերտեմպորալ (ժամանակագրային) մեկնաբանման կանոնը, որի համաձայն՝ փաստերը պետք է մեկնաբանվեն իրադարձությունների զարգացման ժամանակահատվածում գործող իրավական նորմերին համապատասխան¹⁴, և հետևաբար՝ 16-րդ դարի սկզբում ուժի գործադրումը լիովին օրինական գործողություն էր, իսկ դրա կիրառման արդյունքում ձեռք բերված տիտղոսը՝ օրինական: **Երկրորդ**՝ անգամ եթե ուժի գործադրումը իրոք լիներ անօրինական գործողություն, միևնույն է, ՅՆԴկաստանը, որը դարեր շարունակ չէր իրացրել տվյալ տարածքի նկատմամբ իր պահանջի իրավունքը, պարզապես զրկված էր այդ տարածքի նկատմամբ իր ինքնիշխանությունը վերականգնելու որևէ հավակնությունից¹⁵:

Քանի որ գաղութատիրության դեմ ուժի գործադրումն արդարացնելու վերոնշյալ փորձն ունի իրավական ակնհայտ թերություններ, այն շատ արագ փոխարինվեց նոր բանաձևով՝ **«ինքնապաշտպանություն ընդդեմ**

գաղութային տիրապետության՝ ի օժանդակություն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի»¹⁶:

Առանձին կարևորություն է ներկայացնում նաև ինքնորոշման համար պայքարող ժողովուրդներին ռազմական օժանդակություն տրամադրելու հիմնահարցը: Հատկանշական է, որ **«Նիկարագուայի տարածքում և նրա դեմ ռազմական ու ռազմականացված գործողությունների»** վերաբերյալ գործում, որում Միջազգային դատարանը քննարկում էր Նիկարագուայի տարածքում գործող ջոկատներին ԱՄՆ-ի կողմից ռազմական օժանդակություն տրամադրելու հիմնահարցը, դատարանն ԱՄՆ-ի գործողությունները ուժի գործադրում և պետության ներքին գործերին միջամտություն որակելիս հատուկ նշեց, որ իր դատողությունները չեն վերաբերում այն դեպքերին, որոնք առաջանում են ապագաղութացման համատեքստում և որ այդ հարցերը չեն մտնում դատարանի կողմից քննվող գործի առարկայի ոլորտ¹⁷:

Նշենք, որ տվյալ հարցին անդրադառնում է նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը իր մի շարք բանաձևերում: Մասնավորապես, 1978 թ. բանաձև 428-ում Անվտանգության խորհուրդը ողջունեց Նամիբիայի ժողովրդին շարունակական օժանդակություն տրամադրելու Անգոլայի ժողովրդական Հանրապետության նախաձեռնությունը¹⁸: 1979 թ. բանաձև 445-ում Անվտանգության խորհուրդը ողջունում է մի շարք պետությունների կողմից Ջիմբաբվեի ժողովրդին՝ Հարավային Ռոդեզիայի ռասիստական ռեժիմի դեմ **«արդար և օրինական պայքար մղելու համար»** օժանդակության տրամադրումը¹⁹:

Թեև, Անվտանգության խորհրդի բանաձևերը, ի տարբերություն Գլխավոր ասամբլեայի ունեն պարտադիր իրավաբանական ուժ, այ-

¹³ Dugard C.J.R. The Organization of African Unity and Colonialism: An Inquiry into the Plea of Self-Defence as a Justification for the Use of Force in the Eradication of Colonialism // International and Comparative Law Quarterly, Vol. 16 (1967). P. 169:

¹⁴ Տե՛ս The Intertemporal Problem in Public International Law, Institute de droit international (1975), տեսքը հասանելի է <http://www.idi-iiil.org> կայքում: Rosenne Sh. The Perplexities of Modern International Law: General Course on Public International Law // Collected Courses of the Hague Academy of International Law, Vol. 291 (2001). P. 52:

¹⁵ Wright Q. The Goa Incident // American Journal of International Law, Vol. 56 (1962), P. 620:

¹⁶ Dugard. P. 170:

¹⁷ Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. USA), ICJ Reports 14 (1986), P. 108, § 206:

¹⁸ SC resolution 428. UN Doc. S/RES/428, 6 May 1978, § 6:

¹⁹ SC resolution 445. UN Doc. S/RES/445, 8 March 1979, § 2:

նուսաննայնիվ ազատագրական շարժումների համատեքստում ընդունված այս բանաձևերն ակնհայտորեն ունենին խիստ սահմանափակ շարադրանք, և դրանցից ոչ մեկը բացահայտորեն չի խոսում այդ շարժումներին ռազմական օժանդակություն տրամադրելու մասին: Յետևաբար՝ այս ամենի հիման վրա կարելի է միայն եզրակացնել, որ ժամանակակից միջազգային իրավունքը թույլ է տալիս ինքնորոշման համար պայքարող սուբյեկտներին ֆինանսական, նյութական և միզուցե նաև ռազմական օժանդակություն ցուցաբերել, եթե դա չի վերածվում օժանդակող պետության կողմից անմիջական ուժի գործադրման մայր պետության դեմ: Մյուս կողմից ակնհայտ է, որ սույլալ ազատությունը չի տարածվում անջատողական շարժումներին օժանդակություն տրամադրելու դեպքերի վրա, քանի որ դա անխուսափելիորեն կհանգեցնի այլ պետության գործերին միջամտության:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է փաստել, որ ժամանակակից միջազգային իրավունքը չի սահմանում այլ պետությունների կողմից ինքնորոշման համար պայքարող ժողովուրդներին. անմիջական ռազմական օժանդակություն տրամադրելու հնարավորություն, և նման գործողություն կարող է համարվի ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ պարբերության խախտում: Իհարկե, երբ ինքնորոշման համար պայքարող ժողովրդի իրավունքները սկսեն ենթարկվել լայնածավալ խախտումների, հնարավոր կլինի խոսել նաև, այսպես կոչված, մարդասիրական ինտերվենցիայի ինստիտուտի մասին, ինչը մեր հետազոտման առարկայի շրջանակներից դուրս է:

Այլ պետության ռազմական անօրինական միջամտությունն անգամ կարող է հիմք հանդիսանալ նորաստեղծ սուբյեկտի՝ միջազգային հանրության կողմից ճանաչման կոլեկտիվ մերժման: Դրա պատճառները հասկանալի են. երբ պետականակերպ կազմավորումը կայանում է և հաստատում է իր գոյությունը արտաքին ուժի գործադրման շնորհիվ, այն չի կարող

որակվել ինքնաբավ ու կենսունակ և պահպանում է իր գոյությունը միայն արտաքին օժանդակության շնորհիվ²⁰: Այդ դեպքում հարց է ծագում. արդյոք անջատողական շարժումը իրոք հանդիսանում է ինքնուրույն սուբյեկտ, թե վերջինիս գործողությունները պետք է պարզապես վերագրել նրան օժանդակած պետությանը: Այդպես էր, օրինակ, այսպես կոչված «**Կիպրոսի Թուրքական Հանրապետության**» պարագայում, որը ստեղծվեց Թուրքիայի զինված ուժերի ներխուժման արդյունքում, և որի անկախության հռչակագիրը Անվտանգության խորհուրդը որակեց անօրինական, իսկ միջազգային հանրությանը կոչ արեց չճանաչել այն²¹:

Այս առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ, ի տարբերություն «Կիպրոսի Թուրքական Հանրապետության», Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարագայում Անվտանգության խորհուրդը միջազգային հանրությանը կոչ չի արել չճանաչել Լեռնային Ղարաբաղը, իսկ նրա անկախության հռչակագիրը չի որակել անօրինական: Ավելին, ղարաբաղյան հակամարտության կապակցությամբ ընդունված բանաձևերում խորհուրդը Հայաստանի Հանրապետությունը չի որակել որպես ուժ գործադրած պետություն, այլ միայն կոչ է արել վերջինիս ճնշում գործադրել «ստեղական հայկական ուժերի վրա»՝ վերջիններիս ռազմական առաջընթացը կասեցնելու համար²²: Այդ իսկ պատճառով ԼՂՀ ստեղծման իրավական պայմանները չի կարելի համեմատել «Կիպրոսի Թուրքական Հանրապետության» ստեղծման հետ:

Մյուս կողմից անհրաժեշտ է հիշել, որ ինքնորոշման իրավունքը հարգելու պարտավորությունն ունի erga omnes բնույթ: Դա նշանակում է, որ բոլոր այն միջոցառումները, որոնք պետությունները կարող են ձեռնարկել որպես ոչ բռնի հակամիջոցներ այլ պետությունների հետ vis--vis հարաբերություններում, կարող են նաև կիրառվել ժողովուրդների ինքնորոշումը չհարգող պետությունների դեմ²³:

²⁰ St'u Vidmar J. International Legal Response to Kosovo's Declaration of Independence // Vanderbilt Journal of Transnational Law, Vol. 42 (2009), P. 818-827:

²¹ SC resolution 541. UN Doc. S/RES/541, 18 November 1983. §§ 1, 2, 6, 7: «Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության» խորհրդատվական եզրակացությունում Միջազգային դատարանը Անվտանգության խորհրդի գործողությունները մեկնաբանեց հենց Թուրքիայի կողմից անօրինական ուժի գործադրմամբ:

²² St'u օրինակ SC resolution 853. UN Doc. S/RES/853, 29 July 1993. § 9,

²³ St'u Hillgruber C. The Right of Third States to Take Countermeasures // The Fundamental Rules of the International Legal Order: Jus Cogens and Obligations Erga Omnes / Tomuschat C. and Thouvenin J.-M. ed. Martinus Nijhoff Publishers, Leiden – Boston, 2006. P. 292-293:

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Արսեն ԱՅՎԱԶՅԱՆ

Երևան քաղաքի ոստիկանության վարչության
քննչական վարչության պետ

Մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը հանգամանորեն կանոնակարգված է ազգային օրենսդրությամբ, այդ թվում՝ սահմանադրական և գործող օրենսդրության մակարդակով, ինչպես նաև վավերացված միջազգային պայմանագրերով:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածում ամրագրված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ Սահմանադրությունը յուրաքանչյուր անձի, անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, երաշխավորում է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Իրավունք, որը ծագելով անձի ծննդով, նրան հնարավորություն է տալիս կատարելու այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները (ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված):

Ազատությունը անձին տրված հնարավորությունն է մտածել և վարվել իր համոզմունքներին, հայացքներին և պատկերացումներին համապատասխան, ձգտել իրականացնել իր առջև դրված նպատակները և այդ ձևով օբյեկտիվ աշխարհում դրսևորել իր «ես»-ը¹: Այն հասկացվում է ինչպես ֆիզիկական ազատության իմաստով, որը ներառում է անձնական ազատության մի շարք այլ կողմեր՝ անձնական անվտանգությունը, առողջությունը պահ-

պանելը, տեղաշարժվելու ազատությունը, զբաղմունքի և բնակության վայրի ընտրության ազատությունը և այլն, այնպես էլ հոգեբանական, բարոյական ազատության իմաստներով²:

Թեև յուրաքանչյուր ոք ազատ է, և դա երաշխավորվում է Սահմանադրությամբ, սակայն դա չի նշանակում, որ այդ «ազատությունը» ունի բացարձակ բնույթ: Յուրաքանչյուր իրավական համակարգում (հատկապես քրեական դատավարություն-

¹ Տե՛ս **Петрухин И. Л.** Свобода личности и уголовно-процессуальное принуждение М., 1985, էջ 6:

² Տե՛ս **Трунов И. Л. Айвар Л. К.** Применение мер пресечения в уголовном судопроизводстве. М., 2007, էջեր 7-19:

նում) անխուսափելիորեն առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է լինում անձի ազատությունը և անձեռնմխելիությունը սահմանափակել³: Կարևորն այն է, որ այդ սահմանափակումը լինի բացառիկ, յուրաքանչյուր դեպքում սոցիալապես պայմանավորված և իրավաբանորեն հիմնավորված, որպեսզի այն առավել արդյունավետ լինի անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից:

Մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության առաքելությունը դրված է դատական իշխանության վրա:

Ընդգծելով դատական իշխանության ինքնուրույնությունը և անկախությունը՝ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է. **«Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»** (հոդված 91): Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությունում դատարանները կոչված են իրականացնել արդարադատություն ոչ միայն գործն ըստ էության քննելիս, այլ նաև մինչդատական վարույթում անձի իրավունքների և ազատությունների ապահովման նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. **«Դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները»**: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. **«Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների**

որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

Դատարանին նման լիազորություններով օժտելը նպատակ է հետապնդում ապահովել արդարադատության մատչելիությունը և անձանց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունը: Բացի դրանից, մինչդատական վարույթում իրականացվող դատական վերահսկողությունը կոչված է ապահովելու նախնական քննության օրինականությունը: Ուստի, ստորև քննարկվելու են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հետ կապված այնպիսի հարցեր, որոնք առնչվում են անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, վերջինիս և հանցագործության ու հանցանք կատարած անձի բացահայտման գործառույթների հարաբերակցությանը, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը սահմանող նորմերի կիրառմանը և այդ ընթացքում ծագող խնդիրների լուծմանը: Փորձել ենք նաև ձևակերպել առաջարկություններ ուղղված մինչդատական վարույթում անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, ինչպես նաև քրեական դատավարության այս փուլում դատարանի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Քրեական գործի քննության ընթացքում դատարանի գործունեությունն իրենից ներկայացնում է միասնական համակարգ, որն ուղղված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով ամրագրված խնդիրների իրականացմանը: Վերոնշյալ հոդվածի համաձայն.

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է ապահովելու համար 1) անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից.

2) անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական

³ Տե՛ս **Антонио У. Бредли**. Доклад “Право на свободу и безопасность личности согласно Европейской конвенции по правам человека” // Бюллетень по правам человека, 1998, вып. 8, էջ 156:

կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ:

2. Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝

1) քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի.

2) ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի.

3) ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 5-րդ մասը քրեական գործով մինչդատական վարույթը բնորոշում է որպես քրեական գործով վարույթ քրեական գործ հարուցելու հարցի լուծման պահից մինչև գործն ըստ էության քննելու համար դատարան ուղարկելը: Գործի քննության այս փուլում դատարանի առաջնահերթ խնդիրն է ապահովել դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների իրացումը, պաշտպանել նրանց քրեական հետապնդման մարմինների անօրինական գործողություններից կամ վերահսկողություն իրականացնել նախնական քննության մարմինների գործունեության նկատմամբ⁴:

Նախնական քննության իրականացման ժամանակ դատախազին, քննիչին և հետաքննության մարմնին վերապահված իրավունքները նրանց հնարավորություն են տալիս արգելել քաղաքացիներին օգտ-

վել իրենց որոշ իրավունքներից կամ սահմանափակել այդ իրավունքները:

Անձի շահերի ոլորտ նրանց միջամտության բացասական հետևանքներն առավել կանառու են հատկապես այն դեպքերում, երբ այդ միջամտությունն ուղեկցվում է քննչական գործողությունների կատարման կարգի չպահպանմամբ կամ ուղղակի խախտմամբ:

Իրավունքների և ազատությունների սահմանափակումները կարող են կապված լինել մեղադրյալի, կասկածյալի, ինչպես նաև վկայի, տուժողի և այլ անձանց նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառման հետ: Անձի իրավունքների սահմանափակումներ կարող են թույլ տրվել խուզարկությունների և առգրավումների, նամակագրությունը և հեռախոսային խոսակցությունները վերահսկելու ժամանակ և այլն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը՝ հիմնվելով Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանության մասին միջազգային դաշնագրի 17-րդ, ինչպես նաև երկրի բարձրագույն օրենքի՝ ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթների վրա, ամրագրում է բնակարանի, գույքի անձեռնմխելիությունը և նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը:

Վերոնշյալ սկզբունքների կենսագործումն ապահովելու նպատակով օրենսդիրը նախատեսել է մի շարք երաշխիքներ, որոնք կոչված են կանխելու նախնական քննության ընթացքում քաղաքացիների իրավունքների խախտումները: Այդպիսի երաշխիքներ ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք

⁴ Տե՛ս **Лазарева В. А.** Судебная власть и ее реализация в уголовном процессе. Самара: Самарск. ун-т, 1999. Теория и практика судебной защиты в уголовном процессе. Самара: Самарск. ун-т, 2000; **Ковтун Н. Н.** Судебный контроль в уголовном судопроизводстве России: Моногр. Нижний Новгород: Нижегородск. правовая акад., 2002; **Азаров В. А., Таричко И. Ю.** Функция судебного контроля в истории, теории и практике судебного контроля в уголовном процессе, Казань 2004, էջեր 421-425; **Гуськова А. П.** Право на судебную защиту: история и современность, էջեր 429-433:

հողվածներում: Մասնավորապես, 33 քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով: Բնակարանի զննումը, այնտեղ դատավարական այլ գործողություններ կատարելը, ինչպես նաև տեխնիկական միջոցների գործադրմամբ մուտք գործելը այն զբաղեցնող անձանց կամքին հակառակ՝ քրեական դատավարության ընթացքում կարող են կատարվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի որոշմամբ»:

33 քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Քրեական դատավարության ընթացքում անձանց բանկային ավանդների և այլ գույքի վրա կալանք կարող է դրվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի որոշմամբ»:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղոր-

դություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները:

2.Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

3.Դատարանի սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում ընդունվող որոշումները կարող են վերանայվել վերադաս դատարանի կողմից՝ դատախազի, միջնորդություն հարուցած մարմնի, այն անձանց կամ նրանց ներկայացուցիչների բողոքի հիման վրա, որոնց շահերը շոշափվում են»:

Նշված հոդվածի դրույթների բովանդակության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ մինչդեռ սակայն վարույթում

դատական վերահսկողության օբյեկտ են հանդիսանում.

1) անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները՝ կապված նախաքննության փուլում իրենց

դատավարական կարգավիճակի (կասկածյալ, մեղադրյալ, տուժող, վկա և այլն),

2) քննչական գործողությունները կապված նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ,

3) դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ, մասնավորապես՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելը, կասկածյալների, մեղադրյալների և այն անձանց, որոնց հոգեկան վիճակը թույլ չի տալիս նրանց ներգրավվել որպես մեղադրյալ, բժշկական հաստատությունում տեղավորումը՝ դատահոգեբանակն, դատահոգեբուժական կամ դատաբժշկական փորձաքննություն կատարելու համար,

4) օպերատիվ-հետախուզական միջո-

«...Ազատությունը անձին տրված հնարավորությունն է մտածել և վարվել իր համոզմունքներին, հայացքներին և պատկերացումներին համասպատասխան...»

դումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, ինչպես նաև հետաքննության մարմնի և քննիչի գործողությունների և որոշումների օրինականության նկատմամբ վերահսկողության կարևոր ձև է հանդիսանում դատական վերահսկողության գործառույթը:

Մինչդեռ սակայն վարույթում դատական վերահսկողության գործառույթն իր իրավական կարգավորումն է ստացել 33 քրեական դատավարության օրենսգրքի 278 հոդվածում, որտեղ մասնավորապես նշված է.

«1.Դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործո-

ցառումների կիրառման օրինականության նկատմամբ, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ,

5) քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդություններ:

Այսպիսով, նախնական քննության մարմինների անօրինական գործողությունների և որոշումների հետևանքները դուրս են գալիս քրեա- դատավարական հարաբերությունների շրջանակից և սահմանափակում են անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ահա, այդ պատճառով է, որ վերոնշյալ գործողությունների և որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման հետաձգումը մինչև դատական քննության փուլ կարող է այնպիսի վնաս պատճառել, որի շտկումը հետագայում բարդ կամ անհնարին լինի: Բացի դրանից, քանի որ նախնական քննության մարմինների գործունեությունն ուղեկցվում է ոչ միայն հանցագործության մեջ կասածվող կամ մեղադրվող անձանց, այլ նաև վկաների, տուժողների և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ, այն պահանջում է հետաքննության մարմնի և քննիչի գործողությունների օրինականության նկատմամբ անընդհատ դատական վերահսկողության առկայություն: Դատական վերահսկողությունը, իրականացվում է մինչդատական վարույթի փուլում և նպատակ է հետապնդում ապահովել քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, և դրանով իսկ դատական վերահսկողությունը հանդես է գալիս որպես ամբողջ քրեական վարույթի օրինականության և արդյունավետության երաշխավոր:

Մինչդատական վարույթում քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունն արդարադատության իրականացման ձևերից մեկն է և անքակտելիորեն կապված է դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի գործողությունների և որոշումների օրինականության նկատմամբ իրականացվող վերահսկողության հետ: Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման նկատմամբ դատական վերահսկողության նորմատիվ բազան են կազմում ՀՀ Սահմանադրությունը, միջազգային-իրավական ակտերը, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը: Նշված ակտերի

«...Մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության առաքելությունը, նախ և առաջ, դրված է դատական իշխանության վրա...»

իմաստով՝ դատարանի վրա դրված է նախնական քննության մարմինների կողմից իրականացվող՝ անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված դատավարական գործողությունների օրինականության նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի գործողությունների (անգործության) դեմ քրեական դատավարությանը մասնակցող անձանց կողմից բերված բողոքների քննության գործառույթը:

Դատական պաշտպանությունն անձի իրավական պաշտպանության համաշխարհային պրակտիկայի կողմից մշակված կառուցակարգերից ամենաարդյունավետն է: Այդ արդյունավետությունը պայմանավորված է դատախազից, քննիչից և հետաքննության մարմնից դատարանի անկախությամբ և դատարանի գործունեության առանձնահատուկ ընթացակարգի առկայությամբ:



ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 80 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԶԳ գլխավոր դատախազության և զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքները..... 2
- Նշանակումներ ԶԳ դատախազության համակարգում..... 3

ԴՏԱԲՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

- Թամարա ՇԱՔԱՐՅԱՆ Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի բարելավման հիմնախնդիրները..... 5

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՏԱԽԱՆՁԻՆ, ՔՆՆԻՉԻՆ

- Արսեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Քննչական գործողությունների կատարման փաստական հիմքերը ըստ ԶԳ քրեական դատավարության օրենսգրքի..... 14

ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

- Վաղարշակ ՂԱԶԱՐՅԱՆ Արդարադատության հիմնախնդիրները ռոմանագերմանական իրավական համակարգում..... 21

ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

- Մանուկ ՍՈՒՐԱԴՅԱՆ Իրավունքի գերակայությունը իրավաընկալման խորապատկերում..... 25

ԴՏԱՎԱՐԱԿԱՆ ԷՔԻՎԱ

- Գոհար ԳԵՎՈՐԳՅԱՆ Փաստաբանական էթիկայի որոշ հիմնահարցեր փաստաբան-վստահորը փոխհարաբերություններում..... 30

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՏԱՄՈՒԹՅՈՒՆ

- Գոռ ԱՐԱՔԵԼՅԱՆ Զռոմեական իրավունքի ռեցեպցիայի պատճառներն ու աղբյուրները.....41

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

- Տիգրան ԹՈՐՈՍՅԱՆ Իրավունքի աղբյուրների հասկացությունը և դրանց տեսակները..... 44

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

- Երեմիա ԱՍԱՏՐՅԱՆ ՋԼՄ-ները և հանցավորության վրա նրանց ունեցած ազդեցությունը որպես կրիմինալոգիական ուսումնասիրության օբյեկտ..... 48

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Վիգեն ՔՈԶՐԱՅԱՆ, Ջինավոր ՄԵՂՐՅԱՆ Ժողովուրդների ինքնորոշման և ուժի չգործադրման միաջազգային իրավական սկզբունքների հարաբերակցության հիմնախնդիրը..... 54

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

- Արսեն ԱՅՎԱԶՅԱՆ Մինչդատական վարույթում դատական վերահսկողության իրավական հիմքերը..... 59